ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից: Ներկայումս՝ տարին 4 անգամ **2** (97). **2025**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բաղդադյան Ա. Ա.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Դ. Ն.
Այվազյան Լ. Գ.
Ասատրյան Զ. Դ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Մկրտչյան Վ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Սարգսյան Ա. Գ.
Սիմոնյան Ս. Վ.
Ստեփանյան Հ. Լ.
Քոչարյան Տ. Տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԴԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1919–1938 ԹԹ.

Ներածություն 6

ԳԼՈՒԽ 1. Մուսթաֆա Քեմալի քրդական քաղաքականությունը միլլի շարժման ժամանակ 1919–1923 թթ.

1.1. Միլլի շարժումը և քրդերը 8

1.2. Մուսթաֆա Քեմալի առաջին հակաքրդական քայլերը և Քոչգիրիի ապստամբությունը 1920–1921 թթ. 14

ԳԼՈՒԽ 2. Քեմալական իշխանությունների քրդական քաղաքականության փոփոխությունը Լոզանի պայմանագրից հետո և Շեյխ Սայիդի ապստամբությունը 1924–1925 թթ.

2.1. Մուսթաֆա Քեմալի հակաքրդական քաղաքականության սաստկացումը 31

2.2. Քրդերի ազատագրական շարժման նոր փուլը և համաքրդական ապստամբության նախապատրաստությունները 40

2.3. Շեյխ Սայիդի ապստամբությունը 45

ԳԼՈՒԽ 3. Թուրքիայի հակաքրդական քաղաքականությունը 1926–1939 թթ.

3.1. Քրդերի հանդեպ բռնաճնշումների քաղաքականությունը շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից հետո 61

3.2. Առաջին համաքրդական կուսակցության՝ Հոյբունի ստեղծումը և Արարատի ապատամբությունը 1927 1930 թթ. 76
3.3. Թուրքիայի Հանրապետության քրդական քաղաքականությունը 1930-ականներին: Դերսիմի կոտորածը 1937 1938 թթ. 98
3.4. Մ. Ա. Քեմալի և Ռ. Թ. Էրդողանի քրդական քաղաքականությունների համեմատական վերլուծություն 114
Եզրակացություն 116

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա. Գ. Ազիզյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Հերբերտ Դե Բուարտսանկ, Ֆրանսիայի «Սան Սիր» ռազմական ուսումնական կենտրոնի «Ջինված ուժերի համար նորագույն տեխնոլոգիաների մարտավարությունները» գիտահետազոտական կենտրոնի պետ, հետախուզողական գործունեության ինժեներ-հետազոտող, *Ս. Գ. Գաբրիելյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Վ. Ս. Կարապետյան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Ա. Ա. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Հ. Մարտիրոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Մ. Մ. Մարգարյան, բանաբական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Մ. Վ. Մարկոսյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Ա. Հ. Մելիքյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Հ. Մնացականյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
Վ. Գ. Սահակյան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու.
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր. պրոֆեսոր.
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Յու. Մ. Սուփարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քորանջյան*, բանաբական գիտությունների դոկտոր (ՌԴ). պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, *Տ. Տ. Քոչարյան*, բանաբական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա. Ա. Բաղդասարյան, գնդապետ-մայոր (նախագահ). *Տ. Տ. Քոչարյան*, գնդապետ. բանաբական գիտությունների դոկտոր. պրոֆեսոր (նախագահի տեղակալ).
Ա. Մ. Բաղդասարյան, գնդապետ. ռազմական գիտությունների թեկնածու. դոցենտ.
Ա. Վ. Հայրապետյան, գնդապետ. ռազմական գիտությունների թեկնածու. դոցենտ.
Դ. Մ. Մանասյան, պատմական գիտությունների թեկնածու. դոցենտ.
Ս. Ա. Սուքյան, պահեստազորի գնդապետ. աշխարհագրական գիտությունների թեկնածու. դոցենտ

ՔՐԴԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1919–1938 ԹԹ.

Գրախոսներ՝

պատմական գիտությունների թեկնածու
Ն. Երանոսյան,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ք. Մելքոնյան,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Սուքիասյան

Արամ Սերգեյի Սայիյան

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի տարածաշրջանային
ռազմավարական վերլուծությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձություններն ունեն շատ կարևոր անվտանգային նշանակություն Հայաստանի Հանրապետության համար: Հատկապես մեզ համար մեծ նշանակություն է ստանում քրդական պրոբլեմը, քանի որ, նախ, քրդերի պայքարը տեղի է ունենում մեր սահմաններին մոտ, և երկրորդ՝ թուրքերի դեմ հաջող պայքարը կարող է հիմնովին փոխել Թուրքիայի քաղաքական քարտեզը և ստեղծել նոր ռազմաքաղաքական իրավիճակ Հայաստանի Հանրապետության համար: Այս առումով քրդական պրոբլեմի ուսումնասիրությունը արդիական է ոչ միայն մեր քաղաքական իշխանությունների, այլև ռազմական գերատեսչությունների ղեկավարների համար, որով և կարևորվում է նրա կիրառական նշանակությունը:

Սակայն առանց իմանալու քրդական պրոբլեմի ծագման պատմությունը ոչ ամբողջական կլինեն նրա մասին պատկերացումները և եզրակացությունները: Սույն ձեռնարկով նպատակ ունենք լրացնելու այդ բացը և ներկայացնելու քրդական պրոբլեմի առաջացման շրջանի պատմությունը, որն ընդգրկում է Թուրքիայի հիմնադիր նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի կառավարման ժամանակաշրջանը: Բացահայտելով 1919–1938 թթ. քեմալական աշխարհիկ ազգայնական իշխանությունների քրդական քաղաքականությունը, նրա փոխակերպումները տարբեր հանգամանքներում և տարբեր ժամանակահատվածներում՝ անցկացնում ենք զուգահեռներ նրա քաղաքական հակառակորդ ներկայիս իսլամական ազգայնական իշխանության քրդական քաղաքականության միջև՝ ապացուցելով, որ թեև որոշ տարբերություններով՝ թուրքական պետականությունը, անկախ նրա ղեկին գտնվող քաղաքական ուժից, ազգային փոքրամասնությունների հանդեպ ընդհանրապես և քրդերի հանդեպ՝ մասնավորապես, իրագործում է նույն մերժողական և այլատյաց քաղաքականությունը:

Ուսումնասիրության խնդիրներն են Մ. Քեմալի՝ միլլի շարժման սկզբնական ժամանակաշրջանում քրդերի հանդեպ քաղաքականության փոխակերպումների պատճառների բացահայտումը, Լոզանի պայմանագրից հետո քրդերի հանդեպ բռնաճշումների և շեյխ Սայիդի ապստամբության ուսումնասիրությունը, Արարատի ապստամբության և Դերսիմի կոտորածների ժամանակաշրջանում թուրքական իշխա-

նությունների ներքին ու արտաքին քաղաքական միջոցառումների վերլուծությունը:

Ձեռնարկը կառուցվածքային առումով բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և հղումների տեսքով գրականության ցանկից: Առաջին գլխում ներկայացվում է Մուսթաֆա Քեմալի քրդական քաղաքականության փոխակերպումները միլլի (ազգայնական) շարժման ընթացքում (1919–1923): Երկրորդ գլուխը վերաբերում է Լոզանի պայմանագրից հետո քրդերի նկատմամբ հալածանքներին և շեյխ Սայիդի ապստամբությանը: Արարատի ապստամբության և Դերսիմի կոտորածների, ինչպես նաև թուրքական իշխանությունների հակաքրդական ներքին ու արտաքին քաղաքականության մասին պատմվում է երրորդ գլխում:

Մուսթաֆա Քեմալի քրդական քաղաքականության ուսումնասիրությունը էականորեն կնպաստի ոչ միայն քաղաքացիական, այլև ռազմական ոլորտի մասնագետների պատմագիտական, քաղաքագիտական, դիվանագիտական և ռազմագիտական գիտելիքների հարստացմանը՝ ռազմաքաղաքական գործընթացներում արդյունավետ գործելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԼՈՒԽ 1
ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ՔՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԼԼԻ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 1919–1923 թթ.

1.1. Միլլի շարժումը և քրդերը

Առաջին աշխարհամարտից հետո Արևմտյան Հայաստանում քրդերը թվաքանակով դարձան ամենամեծ ժողովուրդը և թե՛ օսմանյան, թե՛ քեմալական իշխանությունները ստիպված էին նրանց սիրաշահել: Խնդրի բարդությունն այն էր, որ քրդերի և երիտթուրքերի միջև լարված հարաբերություններ էին, իսկ Մուսթաֆա Քեմալը նոր էր սկսում իր ազգայնական շարժումը: Քրդական վերնախավը չէր ուզում համագործակցել պարտված երիտթուրքերի հետ և ցանկանում էր համագործակցել անգլիացիների հետ՝ հայկական վիլայեթները Հայաստանի Հանրապետությանը հանձնումը կանխելու և այդ տարածքներում քրդական պետություն ստեղծելու նպատակով: Հայերի հանդեպ վախն ավելի մեծացավ, երբ ՀՀ մահմեդականներով բնակեցված շրջաններում 1919 թ. Հայաստանի բանակը ճնշել էր հակապետական խռովությունները, ինչը հանգեցրել էր հազարավոր մահմեդական գաղթականների ներհոսքին դեպի Թուրքիայի արևելյան վիլայեթներ: Այդ շրջանների բնակչությունը, վախենալով, որ Հայաստանի Հանրապետության տարածքը մահմեդականներից մաքրելուց հետո հայկական բանակը կարող է հարձակվել նաև իրենց վրա, սկսեց ուժեղ ձեռք փնտրել հայերից պաշտպանվելու համար, և այդ ձեռքը դարձավ Մուսթաֆա Քեմալը, որի անգլիջում քաղաքականությունն իր կողմը գրավեց սունիի քրդերի զգալի մասին, որոնք անկախ Քրդստանի փոխարեն գերադասեցին ապրել Թուրքիայի կազմում:

1919 թ. մայիսի 19-ին անգլիացիների պահանջով սուլթան Մեհմեդ VI-ը արևելյան վիլայեթներ ուղարկեց Մուսթաֆա Քեմալին, որն ըստ Մուդրոսի զինադադարի պետք է վերահսկեր այդ շրջաններում տեղակայված թուրքական զորքերի զինաթափումը: Սակայն նա բարձրացնում է խռովություն և պայքար սկսում Անտանտի և նրա դաշնակիցներ Հունաստանի ու Հայաստանի դեմ: Սկզբնական ժամանակաշրջանում շարժումը լայն աջակցություն չուներ մահմեդական բնակչության, և հատկապես՝ քրդերի շրջանում, առանց որոնց իր շարժումը դատապարտված էր ձախողման: Բացի ռազմական աջակցությունից, քրդերի հետ համագործակցությունը նրան անհրաժեշտ էր

նաև անգլիացիների ազդեցությունից քրդերին զերծ պահելու և հայ-քրդական համագործակցությունը կանխելու համար: Այդ նպատակով Քեմալը 1919 թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 4-ը էրզրում է հրավիրում արևելյան վեց վիլայեթների ներկայացուցիչների (56 հոգի), որտեղ հաջողվում է իր դաշնակիցը դաձնել քուրդ ցեղապետերի մեծ մասին, որոնք կողմ են քվեարկում կոնգրեսի ընդունած բանաձևերին փաստացի հանդես գալով անկախ քրդական պետության ստեղծման դեմ: «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության միությունը» ձևավորեց «Ներկայացուցչական կոմիտե», որի ղեկավար ընտրվեց Քեմալը[1], ինչպես նաև կազմվեց «Ազգային ուխտի» նախագիծը: Կոնգրեսում քրդերը Քեմալից ստացան երաշխիքներ, որ ոչ մի թիզ հող չի զիջվելու Հայաստանին: Կոմիտեի կազմում ներգրավվեցին երեք քրդեր. շեյխ Ֆևզի և Սադուլլա էֆենդիները և հաջի Մուսա բեյը: Կոմիտեն, սակայն, ոչ մի անգամ չհավաքվեց նիստի, քանի որ Քեմալը մտադիր էր միանձնյա ղեկավարել երկիրը, և նա չէր կարող Թուրքիայի համար այդ օրհասական օրերին վստահել երկրի կառավարումը Կոմիտեին, առավել ևս, որ այդտեղ քրդեր կային, որոնց նա չէր վստահում: Մուսթաֆա Քեմալը նրանց համարում էր պատահական մարդիկ և տալիս էր տրամաբանական հարց, թե կարո՞ղ էր արդյոք պետության կառավարումը վստահել ինչ-որ մի շեյխի էրզինջանից, կամ մոտկի ցեղի ցեղապետին, որոնք ոչինչ չէին հասկանում պետական կառավարման համակարգից, առավել ևս այդ ծանր օրերին[2]: Սվասի (Սեբաստիա) կոնգրեսում նույնպես զգալի էր քրդերի թիվը: Քրդերի թիվը շատ էր նաև 1920 թ. ապրիլին ստեղծված Թուրքիայի Ազգային մեծ ժողովում: Քեմալին հաջողվեց քրդերի հակաթուրքական տրամադրությունները դարձնել հակակառավարական, իսկ արտաքին թշնամու՝ անգլիացիների, հույների ու հայերի կերպարը նա հմուտ կերպով օգտագործեց իր բանակը հազարավոր զինվորներով համալրելու համար: Մ. Քեմալը 1919 թվականի դեկտեմբերի վերջին էրզրումում հավաքեց քրդական ցեղերի ներկայացուցիչների Հայաստանի դեմ պայքարի ուղիները քննարկելու համար: Այս իրադարձությունը բավական էր, որպեսզի առանձին ցեղապետեր հարձակումներ գործեին Հայաստանի սահմանների ուղղությամբ: Այսպես 1919 թվականի նոյեմբերի 14-ին նրանք, հարձակման անցնելով

[1] Տես *Erik J. Zürcher*. Turkey: A Modern History. 3rd Ed. London, 2004, P. 150:

[2] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* 1925 Kürt Ayaklanması – Şeyh Sait Hareketi. Uppsala, 1985, s. 19:

Սարիղամիշի ուղղությամբ, առաջացան դեպի Բաշքյոյ: Սակայն հայկական զորքերը դուրս շպրտեցին նրանց Հայաստանի սահմաններից՝ ազատագրելով Կազան, Արթակալի, Ձերմուկ գյուղերը: Սպանվածների ու գերիների մեջ շատ էին թուրք սպաներն ու զինվորները[3]:

Սակայն սիրաշահման հետ մեկտեղ Մ. Քեմալը օգտագործում էր հնարավոր ամեն մի առիթ քրդերի ազատագրական շարժումները ճնշելու նպատակով: Նա շատ հմուտ կերպով օգտագործեց հույների կողմից Իզմիրի նվաճումը թուրքերի շրջանում ազգայնական հիստերիա բարձրացնելու համար և քրդերի հնչեցրած նույնիսկ ինքնավարության խնդրանքը դիտվում էր որպես դավաճանություն օսմանյան հայրենիքի դեմ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Օգտվելով այդօրինակ տրամադրություններից՝ թուրքական իշխանությունները 1919 թվականի հունիսի 4-ին փակեցին Դիարբեքիրի քրդական ակումբը, իսկ նրա անդամներին ձերբակալեցին: Արգելվեց պատերազմի ժամանակ դեպի երկրի կենտրոնական և արևմտյան մասերը տեղահանված քրդական ազգաբնակչության վերադարձն իրենց տները:

Այս ամենով հանդերձ՝ Մ. Քեմալն ստիպված էր ընդունել, որ Թուրքիայում ոչ միայն թուրքեր են ապրում, այլև ուրիշ մահմեդական ազգեր: 1920 թվականի մայիսի 1-ին, ելույթ ունենալով ԹԱՄԺ-ում, նա խնդրեց պատգամավորներից չօգտագործել թյուրքիզմ տերմինը, այլ կիրառել մուսուլմաններ բառը, քանի որ նրանք բոլորն էլ կապված են խալիֆաթի հետ[4]: Նա հմուտ կերպով օգտագործեց ոչ միայն Թուրքիայում բնակվող, այլև ամբողջ աշխարհի մահմեդականների կրոնական զգացմունքները՝ կոչ անելով նրանց ընդդիմանալ խալիֆի ու սուլթանի կայսրության՝ քրիստոնյա կայսրությունները մասնատելու ծրագրերին: Քեմալը ծրագրում էր պանիսլամական կոնգրես հրավիրել 1921 թվականի փետրվարին: Հասկանալով քուրդ ցեղապետերի ուժն ու ազդեցությունը և վախենալով, որ նրանք կարող են անցնել անգլիացիների կողմը՝ Քեմալն ամեն կերպ սիրաշահում էր նրանց՝ կոչ անելով հավատարիմ մնալ սուլթանին ու խալիֆաթին և պայքարել անգլիացիների ու հայերի դեմ: նա նամակներ էր ուղարկում քուրդ առաջնորդներին և կոչ էր անում միանալ իր շարժմանը հանուն հավատքի և ընդհանուր հայրենիքի փրկության: Մասնավորապես մոտկի

[3] Տես *Արամ Սայիյան,* Դերսիմը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին: Քոչգիրիի ապստամբության դասերը: «Վէմ», 2017, հմ. 4 (60):

[4] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 20:

ցեղի առաջնորդ Հաջի Մուսա բեյին* ուղարկած նամակում նա գրում է. «Մեր թշնամիները այժմ ձգտում են մասնատելու մեր երկիրը և ստրկացնելու մեր ազգին, որը դարեր շարունակ այնքան արյուն է թափել հանուն իսլամի, զրկել նրան ինքնիշխան իրավունքներից ու անկախությունից: Նրանք ձգտում են մեր նախնիներից ժառանգած մայր հայրենիքի տարածքում ստեղծելու Հայաստան»[5]: Այդպիսի նամակներ նա ուղարկել էր Աբդուռահման աղային, շեյխ Աբդուլբաքի էֆենդի Քյուֆևրիզադեին՝ Բիթլիսից, Օմեր աղային՝ Դերշևից**, Ռեսուլ աղային Մուշից, նախկին պատգամավոր Սադուլլա էֆենդիին, շեյխեր Մահմուդ էֆենդիին և Զիաետդին էֆենդիին՝ Նորշինից*** և գերզանի ցեղի առաջնորդ Զեմիլ Չեթո բեյին[6]: Սակայն նա շահագրգռված չէր, որ Կոմիտեն ձեռնարկեր իրական քայլեր քրդերի համախմբման համար. դա նրան պետք էր, որպեսզի իր հսկողության տակ պահեր քրդերին և չթողներ ո՛չ քուրդ-բրիտանական և ո՛չ էլ քուրդ-հայկական զինակցության ստեղծում ընդդեմ թուրքերի:

Պետք է նշել, որ քրդական վերնախավի ազդեցիկ մի հատված կասկածանքով և բացասաբար էր վերաբերում Քեմալի խոստումներին և նրա շարժման մեջ քրդերի ներգրավմանը: Օսմանյան պառլամենտի նախագահ սեիդ Աբդուլ Քադիրը, Ալի, Զելադեթ և Քամուրան Բադրխան եղբայրները դիմում էին անգլիացիներին և սուլթանական կառավարությանը՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկել Մ. Քեմալի դեմ: Քեմալի դեմ էին նաև ալևի քրդերով ու զազաներով բնակեցված շրջանները, որոնք բացի ազգային բռնաճնշումից ցանկանում էին նաև ազատագրվել սուննի մեծամասնության դաժան

---

* Հաջի Մուսա բեյ (1853- 1927)՝ Բիթլիսի հույթու ցեղի առաջնորդ: Հայտնի է որպես Արևմտյան Հայաստանի Բիթլիսի և Մուշի շրջանների հայերի դեմ իրականացված բազմաթիվ հանցագործությունների հեղինակ: Հայոց Մեծ եղեռնի ժամանակ այդ շրջանների հայ բնակչության ջարդարարներից մեկն էր: Ակտիվորեն մասնակցել է Քեմալի ազգայնական շարժմանը: Սակայն 1924 թ. վերջին նա ձերբակալվել է «Ազադի» կոմիտեի նիստերին մասնակցելու մեղադրանքով և աքսորվել է Կայսերի (Կեսարիա):

[5] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը Թուրքիայում և անկախ Քրդստանի ստեղծման ծրագրերը միջազգային դիվանագիտության լույսի ներքո: «Պատմա-բանասիրական հանդես», 2008, հմ. 1:

** Դերշև՝ բնակավայր Շըրնաքի սանջակում:

*** Նորշին՝ բնակավայր Դիարբեքիր վիլայեթի Չյունգյուշ սանջակում:

[6] Տես *Վ. Բայբուրդյան,* Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության տարիներին: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 20: Ե., 2001, էջ 32:

տիրապետությունից: Մասնավորապես հայտնի հետախույզ մայոր Նոելը*, որին տարածաշրջան էին ուղարկել անգլիացիները և սուլթանական կառավարությունը, Թուրքիայի քրդաբնակ վիլայեթներում իր կատարած շրջագայության ժամանակ նշում էր[7], որ Այնթապից մինչև Մալաթիա ընկած շրջանների բնակչության 70-80 տոկոսը քրդեր էին, որոնց մոտ 75 տոկոսը շիաներ էին և չէին ընդունում քեմալական շարժումը: Այնթապի և Մալաթիայի քրդերն ավելի ազգայնական էին, քան իրենցից արևելք ընկած հողերում ապրող քրդերը: Նրանք չէին վախենում հայերի վերադարձից և կողմ էին անգամ համագործակցել նրանց հետ՝ ընդդեմ թուրքերի: Նրանք պատրաստ էին ընդունելու անգլիական գերիշխանությունը, եթե տեղական իշխանությունը կազմված լիներ քրդերից[8]:

Սակայն Մ. Քեմալի համար ծայրահեղ դժվար այդ փուլում ոչ թե Այնթապի և Մալաթիայի հարթավայրերի այդ շիա քրդերն էին վտանգավոր, այլ Դերսիմի լեռներում ամրացած ալևի զազա քրդերը: 1919 թ. ամռանն ու աշնանը, Դերսիմում անհանգիստ իրավիճակ էր: Փարիզում ընթացող բանակցությունները Անտանտի և Օսմանյան կայսրության միջև, ինչպես նաև անգլո-ֆրանսիական զորքերի հայտնվելը Ուրֆայում ու Մարաշում, մի կողմից, և Անատոլիայում օրեցօր թափ հավաքող քեմալական շարժումը մյուս կողմից, քաղաքականապես կիսել էին Դերսիմը: Ցեղապետերի մեծ մասը հակված էր անգլիական գերիշխանության հաստատմանը, եթե պաշտոններում նշանակվեին քրդերը: Իսկ փոքր մասը՝ Հասան Հայրիի* գլխավորությամբ, կողմ էր թուրքական գերիշխանության պահպանմանը, սակայն ներքին

* Էդվարդ Ուիլյամ Չարլզ Նոել (1886–1974)՝ բրիտանացի դիվանագետ, հետախուզության սպա: Սերում է ազնվական ընտանիքից: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հանդես է եկել որպես Քրդստանի անկախության կողմնակից: 1919 թ. ամռանը իրավիճակին անձամբ ծանոթանալու նպատակով շրջագայել է Արևմտյան Հայաստանում և Հյուսիսային Քրդստանում:

[7] Տես *E. W. Ch. Noel.* Diary of Major Noel on special duty in Kurdistan from June 14th, to September 21st, 1919, Basrah, 1920:

[8] Տես *М. С. Лазарев.* Империализм и курдский вопрос. М., 1989, с. 106:

* Հասան Հայրի (1881-1925)՝ դերսիմցի թրքամետ գործիչ, քեմալական շարժման ակտիվ կողմնակից: 1920 թ., Դերսիմից ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր: 1920–1921 թթ. եղել է Քոչգիրիի ապստամբության ակտիվ հակառակորդը: 1925 թ. մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի Դերսիմը չմիանա շեյխ Սայիդի ապստամբությանը, սակայն այն ճնշելուց հետո ձերբակալվել է՝ շեյխ Սայիդին աջակցելու անհիմն մեղադրանքով և նույն թվականի նոյեմբերի 23-ին ենթարկվել մահապատժի:

ինքնավարությամբ: Այսինքն՝ շիա քրդերի հակաքեմալական ելույթը 1919 թ. աշնանը կարող էր պսակվել հաջողությամբ, սակայն քրդական վերոհիշյալ վերնախավը կատարեց մի քանի սխալներ, որոնք էլ կանխորոշեցին ելույթի անհաջողությունը: Նախ՝ որպեսզի ավելի լուրջ տեսք տան իրենց ապստամբությանը և ցույց տան, թե դրա հետևում կանգնած է Մեծ Բրիտանիան, Նոելի երկրորդ այցելության ժամանակ[*] Զելադեթ ու Քամուրան Ալի Բադրխանները, Զեմիլ փաշազադե էքրեմ բեյը Դիարբեքիրից՝ 15 հեծյալներով ուղեկցում էին նրան[9]: Սա Քեմալի համար շատ լավ առիթ էր մեղադրելու նրանց հայրենիքը և իսլամին դավաճանելու, անհավատ անգլիացիների հետ համագործակցելու մեջ: Որպես արդյունք սուննի քրդերի մեծամասնությունը թշնամական դիրք ընդունեց նրանց նկատմամբ, իսկ շիաների մեծամասնությունը չհամարձակվեց միանալ նրանց: Օգտվելով այս ամենից՝ Քեմալը կարողացավ Շիրո տեղանքում տեղի ունեցած քուրդ ցեղապետերի կոնգրեսը, որտեղ «Քրդերի իրավունքների պաշտպանության կոմիտեի» անունից հռչակվեցին անկախ Քրդստանի հիմնական սկզբունքները: Եվ քանի որ այդ կոնգրեսը տեղի էր ունենում Սվասի կոնգրեսի հետ միաժամանակ, Քեմալը մեղադրեց Բադրխաններին ու Զեմիլ փաշազադեին՝ սուլթանական կառավարության ու անգլիական հատուկ ծառայությունների հետ, Սվասի կոնգրեսի մասնակիցներին ոչնչացնելու ծրագրին մասնակցելու մեջ[10]: Նա հրամայեց իրեն հավատարիմ զորամասերի հրամանատարներին հարձակվել Մալաթիայի վրա և ոչնչացնել այդ հակահեղափոխական օջախը, իսկ առաջնորդներին ձերբակալել: Սեպտեմբերի 9-ին էլյազիգում տեղակայված 15-րդ գնդի հրամանատար Իլյաս բեյը 52 զինվորներով և 2 գնդացրով շարժվեց դեպի Մալաթիա: Նրա հետ միաժամանակ դեպի Մալաթիա ուղևորվեցին նաև երկու հեծելազորային էսկադրոն էլյազիգից, մեկ հեծելազորային էսկադրոն Սևերեկից և Սվասիսից՝ մի քանի սպաներ ավտոմեքենայով: Իմանալով այդ ուժերի մոտենալու մասին՝ Մալաթիայում հավաքված քուրդ ղեկավարները փախան Քյախթա, որտեղ սկսեցին նախապատրաստվել

[*] Որպեսզի Նոելի երկրորդ այցելությունը թուրքական իշխանությունների շրջանում ավելորդ կասկածներ ու մտավախություններ չառաջացնի, նրան պաշտոնապես Թուրքիա էր ուղարկել Փարիզում գումարված Խաղաղության Կոնֆերանսը՝ արևելյան վիլայեթներում քրդերի ու հայերի թվաքանակը պարզելու համար:

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время. Е., 1990, с. 27:

պատասխան գործողությունների: Սեպտեմբերի 11-12-ին Ռաքայում Խալիլ Ռահմի բեյը և նրա կողմնակիցները սպասում էին, որ իրենց կմիանան Սևերեկի ու հատկապես՝ Դերսիմի քրդերը, սակայն նրանց հույսերը չարդարացան: Չստանալով անհրաժեշտ օգնություն՝ ապստամբ քրդական ուժերը ցրվեցին: Մայոր Նոելը լքեց Թուրքիայի տարածքը և էլբիստանի վրայով անցավ Հալեպ[11]:

Այս իրադարձությունները Քեմալին ցույց տվեցին շիաների ուժը, ինչի հետ ստիպած էր հաշվի նստել: 1919 թ. դեկտեմբերի 23-ին նա Նևշեհիրում այցելում է ալևիների Հաջի Բեքթաշ Վելիի դերգյահը (սուֆիների կացարանը), որտեղ հանդիպում է շեյխ Զեմալեդդին Չելեբիի հետ և: խնդրում է օգնություն՝ դրա փոխարեն խոստանալով հաղթանակից հետո կրոնական ազատություն: Բացի մարտիկներից, միաբանությունը տալիս է նաև 1800 ոսկի լիրա[12]: Թուրք ալևիների այս քայլը չէր կարող չազդել նաև քուրդ ալևիների վրա, որոնց մի մասը նույնպես միացավ քեմալական շարժմանը: Այդ քուրդ շիաներից ամենահայտնին Հասան Հայրին էր, որը դեռ իր բացասական դերը կունենա շեյխ Սայիդի ապստամբության ժամանակ:

1.2. **Մուսթաֆա Քեմալի առաջին հակաքրդական քայլերը և Քոչգիրիի ապստամբությունը** 1920–1921 **թթ.**

Սակայն քուրդ շիաների մեծ մասը թշնամաբար էր վերաբերում Քեմալի շարժմանը՝ գտնելով, որ հերթական թուրք ղեկավարը ոչնչով չի տարբերվելու նախորդից: Այնթապի և Մարաշի քրդերի կեսից ավելին շիա էին, և համագործակցում էին անգլիացիների հետ: տարածքային առումով գտնվելով Հայաստանի Հանրապետությունից մեծ հեռավորության վրա՝ նրանք չէին վախենում հայկական հավակնություններից: Իսկ Դերսիմի ալևիները, քաջատեղյակ էին չերքեզների և հույների դեմ Քեմալի իրագործած վայրագություններին և վստահ էին, որ հաջորդն իրենք են լինելու: Եվ բնական էր, որ քրդերի շրջանում առաջին հակաքեմալական ապստամբությունը պետք է բռնկվեր Դերսիմում: Ապստամբները վստահ էին, որ Մ. Քեմալը քրդերին ինքնավարություն տալու ոչ մի նպատակ էլ չուներ, այլ ընդամենը ժամանակ էր շահում քրդերի հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով:

[11] Տես նույն տեղում, էջ 28:

[12] Տես *Д. В. Жигульская.* Алевиты Турции. М., 2016, с. 45:

1920 թ. հունվարի 28-ին քեմալականների ճնշման տակ օսմանյան պառլամենտի ընդունած Ազգային ուխտը ցրեց քրդերի բոլոր հույսերը՝ կապված ինքնավար Քրդստանի հետ: Իսկ մարտի 16-ին դաշնակիցների՝ Կ. Պոլսի գրավումը ավելի ծայրահեղացրեց թուրք հասարակության տրամադրությունները: Այդ պայմաններում քրդական ինքնավարության մասին խոսելը հավասարեցվում էր հայրենիքի հանդեպ դավաճանության: Դերսիմցիների համար ակներև էր, որ քրդական պրոբլեմը կարող էր լուծվել միայն զինված ապստամբության դեպքում: Դերսիմում ակտիվ գործունեություն էին սկսել «Քրդստանի Վերածննդի ընկերության» նախկին անդամները: Իր ակտիվությամբ հատկապես աչքի էր ընկնում անասնաբույժ Մեհմեդ Նուրի Դերսիմին[*], որը գործունեությունն էր ծավալում Զարա, Դևրիկ, Կանգալ, և այլ կազաներում և սերտ կապեր ուներ Դերսիմի ցեղապետերի հետ: Մ. Ն. Դերսիմին Մուդրոսի զինադադարից հետո մեկնել էր Ստամբուլ՝ միանալու սեիդ Աբդուլ Քադիրի հիմնադրած «Քուրդիստանի Վերածննդի ընկերությանը», սակայն հիասթափվելով վերջինիս՝ Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունից ինքնավարություն խնդրելու որդեգրած քաղաքականությունից, 1920 թ. հոկտեմբերին վերադարձել էր Ուրֆանիե և միացել ապստամբությանը: Նրա նման արմատականորեն տրամադրված մեկ այլ գործիչ՝ սեիդ Ռիզան[**], նույնպես չէր համաձայնվում համագործակցել թուրքերի հետ և ակտիվ աշխատանքներ էր տանում քրդական ցեղերը համախմբելու համար: Ըստ Ն. Դերսիմիի՝ Դերսիմից կարող էր պատերազմի դաշտ դուրս բերվել 90 հազար զինվոր[13]:

Դեռ 1920 թ. հուլիսին քրդական ջոկատները Մստոյի ղեկավարությամբ գրոհել էին Զառա սանջակում տեղակայված զինվորական

[*] Մեհմեդ Նուրի Դերսիմի (Բայթար Նուրի)՝ 1890–1973, քուրդ ազգային գործիչ, մասնագիտությամբ անասնաբույժ, մասնակցել է Քոչգիրիի և Դերսիմի ապստամբություններին, եղել է սեիդ Ռիզայի աջակիցը: Դերսիմի ապստամբության պարտությունից հետո արտագաղթել է Սիրիա, որտեղ էլ գրել է Դերսիմի և այնտեղ տեղի ունեցած ապստամբությունների պատմությունը:

[**] Սեիդ Ռիզա (1863–1937)՝ զազա ցեղապետ Օվաջըքից, քրդական ազգային գործիչ, բազմիցս ապստամբել է թուրքական իշխանությունների դեմ, համարվել է քեմալական կառավարության անհաշտ հակառակորդը, եղել է Քոչգիրիի 1920–1921 թթ. և Դերսիմի 1937–1938 թթ. ապստամբությունների գլխավոր կազմակերպիչներից մեկը: 1937 թ. սեպտեմբերին ձերբակալվել է և թուրքական դատարանի որոշմամբ նոյեմբերին մահապատժի է ենթարկվել:

[13] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925. Austin, 1989, P. 29:

անցակետերը՝ գերելով բազմաթիվ սպաների և զինվորների[14]: Իսկ նույն ամսվա վերջին շադան ցեղի առաջնորդ Փաշոն գրավել էր Երզնկայի Ռեֆահիե քաղաքը և իրեն հռչակել տեղի քրդական ուժերի հրամանատար[15]:

Անկարայի կառավարությունը ստիպված էր պաշտոններ առաջարկել նրա ղեկավարներին: Քոչգիրի ցեղի առաջնորդ Ալիշանը նշանակվում է Ռեֆահիե սանջակի կայմակամի տեղակալ, իսկ նրա եղբայր Հայդարը՝ Սեբաստիայի Ումրանիե սանջակի կայմակամ[16]: Սակայն ստանալով այս պաշտոնները՝ եղբայրները ոչ միայն հետ չքաշվեցին ապստամբությունից, այլև օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը՝ նրան ավելի կազմակերպված բնույթ հաղորդեցին: Նրանց հաջողվեց հասնել մինչև Խոզաթ՝ իրենց շուրջը համախմբելով այն ցեղերին, որոնք անկախ Քրդստանի ստեղծման կողմնակից էին:

Դերսիմում 1920 թ. աշնան սկզբին քրդական ջոկատների հարձակումները թուրքական բանակային և ոստիկանական պահակակետերի վրա արդեն կրում էին պարբերական բնույթ և ավարտվում էին քրդերի հաղթանակով, որոնց տրամադրության տակ էին անցնում մեծ քանակությամբ սպառազինություն, սննդամթերք, ինչպես նաև ձիեր և ջորիներ: Զարգացնելով առաջին հաջողությունները՝ զազա քրդերի ջոկատները 1920 թ. հոկտեմբերի 20-ին էղին վայրում գրավեցին թուրքական բանակին պատկանող մեծ զինապահեստներ: Քոչգիրիի ցեղապետերից Ալիշանը, Դերսիմից եկած ապստամբ ջոկատների հետ Քուրուչայ-Քեմահ (Կամախ) շրջանից անցնելով Օվաջըքի շրջան, այդտեղ միացավ մի շարք այլ ցեղապետերի, գնաց Խոզաթ և այնտեղ նոյեմբերի 15-ին Չմշկածագի ու Օվաջըքի շրջանների ցեղապետերի հետ հրավիրեց մեծ ժողով, որտեղ որոշում ընդունվեց համախմբել ուժերը՝ ազգային իրավունքները նվաճելու նպատակով[17]: Ժողովը Անկարայի կառավարությանն ուղարկեց պահանջագիր, որտեղ պահանջում էր տալ հստակ պատասխան քրդական ինքնավարության ապագայի մասին, ինչպես նաև Քոչգիրիից հետ քաշել թուրքական զորքերը, բանտերից ազատել բոլոր քրդերին և քրդական

[14] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 33:

[15] Տես *V. Şadillili.* Türkiye'de Kürtçülük hareketleri ve isyanlar. Ankara, 1980, s. 37:

[16] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 34:

[17] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 38:

մեծամասնությամբ շրջաններից հետ կանչել բոլոր թուրք պաշտոնյաներին[18]:

Անկարայի կառավարությունը Խարբերդից հանձնաժողով ուղարկեց Դերսիմ՝ քննարկելու վերջնագիրը, բայց նրա անդամները հետ ուղարկվեցին: Ապստամբները նոյեմբերի 25-ին նոր հեռագիր ուղարկեցին Անկարա՝ նշելով, որ եթե Դիարբեքիրի, Էլյազիգի, Խարբերդի, Վանի և Բիթլիսի (Բաղեշի) վիլայեթների տարածքում չստեղծվի անկախ Քրդստան պետություն, ապա արևմտյան Դերսիմի ցեղապետերը հասնելու են դրան զենքի ուժով[19]: Քեմալական կառավարությունը ժամանակ շահելու նպատակով Խարբերդի վալիի միջոցով հայտնեց ապստամբության ղեկավարներին, որ ընդհանուր առմամբ համաձայն են քրդերի պահանջների հետ և նրանք պետք է դադարեցնեն ռազմական գործողություններն ու բանակցություններ սկսեն: Սակայն դրան զուգահեռ թուրքերը վերադասավորեցին իրենց ուժերը և սկսեցին մարտեր մղել Սեբաստիայի շրջակայքի ապստամբների դեմ: Եվ քանի որ Դերսիմում ձմեռը ձյունառատ է, դերսիմցիները չկարողացան օգնության գնալ նրանց: Մինչդեռ ապստամբության հետաձգումը մինչև գարուն ձեռնտու էր քեմալականներին, այլ ոչ թե քրդերին: Եվ նրանք առավելագույնս արդյունավետ ձևով օգտագործեցին այդ հնարավորությունը: Կենտրոնական բանակի հրամանատար Նուրեդդին փաշան* կատարեց զորքերի վերադասավորում՝ ուժեղացնելով էրզինջանի, Սվազի, էրզրումի, Մալաթիայի և այլ ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքների կայազորները՝ այդպիսով չթողնելով ապստամբության տարածումը Դերսիմից դուրս, ինչպես նաև դրսի օգնությունը դերսիմցիներին:

Դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլի պայմանագրով հայ-թուրքական պատերազմի ավարտը, թուրքական հրամանատարությանը հնարավորություն տվեցին զգալի քանակով զորքեր ուղարկելու Դերսիմ: Մյուս կողմից՝ քեմալական իշխանությունը սիրաշահում էր

[18] Տես *M. Nuri Dersimi.* Kürdistan Tarihinde Dersim. Istanbul, 1997, s. 38:

[19] Տես *R. Olson*. The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 55:

* Նուրեդդին Իբրահիմ Քոնյար (1873–1932)՝ թուրքերի շրջանում հայտնի է նաև որպես Սաքալլը (մորուքավոր) Նուրեդդին փաշա, թուրք ռազմական գործիչ, գեներալ-մայոր (միրլիվա): 1920 թ. ամռանը միանում է Մ. Քեմալին և նույն թվականի դեկտեմբերին նշանակվում 10 000 հոգուց բաղկացած Կենտրոնական բանակի հրամանատար: 1921 թ. գարնանը անասելի դաժանությամբ ճնշում է քրդերի ապստամբությունը Քոչգիրիում, որից հետո ակտիվ մասնակցություն է ունենում Պոնտոսի հույների կոտորածներին և տեղահանությանը:

տատանվող որոշ քուրդ առաջնորդների՝ խոստանալով նրանց բարձր պաշտոններ, ինչպես նաև նյութական բարիքներ: Մուսթաֆա Քեմալին հաջողվեց իր կողմը գրավել Մեչո և Դիյափ աղաներին՝ նշանակելով նրանց ԹԱՄԺ-ի պատգամավորներ: Սակայն քեմալականներին չհաջողվեց գլխատել ապստամբությունը: Մեչո և Դիյափ աղաների, ինչպես նաև Զեքի, Ահմեդ Ռեմզի, Աբդուլհակ Թևֆիք և Հասան Հայրի բեյերի՝ Անկարա մեկնելուց հետո ապստամբության ղեկավար դարձավ սեիդ Ռիզան, ումը հաջողվեց համախմբել ապստամբական ուժերին: Նա Դերսիմից անցավ Քոչգիրի և կարողացավ այնտեղի ցրված ջոկատներին համախմբելով բերել մարտական վիճակի: Նույն ժամանակ Անկարա տեղափոխված Դերսիմի պատգամավորները հայտնում էին նրան, որ պետք չէ գործը տանել ռազմական բախման, իրենք ԹԱՄԺ-ում աշխատում են, որպեսզի խնդիրը լուծվի խաղաղ ճանապարհով[20]: Ամենայն հավանականությամբ, հասկանալով, որ խաբվել են և իրենց հեղինակությունը դերսիմցիների շրջանում հիմնավորապես խախտված է, հուսահատ փորձեր էին անում վերականգնելու այն: Սակայն դա ավելի քան անիմաստ քայլ էր, որովհետև բոլորը հասկանում էին, որ խնդիրն այնքան է խորացրել և ներկայացված պահանջներն այնքան անիրականանալի էին, որ այն պետք է լուծվեր միայն ռազմական ճանապարհով: Ամեն դեպքում երկու կողմերն էլ ձգտում էին հարցը լուծելու խաղաղ ճանապարհով և դրա համար պատրաստ էին ինչ-որ զիջումների գնալ: Սեիդ Ռիզան, օրինակ, ընդհանուր առմամբ դեմ չլինելով քեմալական իշխանությանը, համաձայն էր անգամ ինքնավար Քրդստանի ստեղծմանը Թուրքիայի կազմում և քրդերի ազգային իրավունքների բավարարմանը: Որոշ զիջումների համաձայն էր և Մուսթաֆա Քեմալը: Մասնավորապես՝ նա առաջարկում էր Ալիշան բեկին կա՛մ գալ Անկարա և դառնալ ԹԱՄԺ-ի պատգամավոր, կա՛մ էլ դառնալ Սվազի վիլայեթի բարձր պաշտոնյաներից մեկը: Նա նաև խոստանում էր, որ վալիի տեղակալ կնշանակվեր քուրդ, որը կուղարկվեր Դերսիմ: Ի պատասխան դրան Ալիշան բեկը և սեյիդ Ռիզան ասացին, թե իրենք ուզում են անկախ քրդական վարչակարգ և չեն ուզում Անկարայում որևէ քուրդ պատգամավոր, ինչպես չեն ուզում նաև որևէ թուրք պետական պաշտոնյա կառավարիչ Դերսիմում: Ապստամբության ղեկավարներին վախեցնելու և նրանց պայքարից հետ պահելուն էր ուղղված նաև նրանց ձերբակալումը: Սակայն այս դեպքում էլ անգամ Քեմալը փորձում էր բանտում նրանց սիրաշահել, քանի որ արևմտյան

[20] Տես նույն տեղում, էջ 56:

ռազմաճակատում ընթանում էին կատաղի մարտեր հույների դեմ, իսկ Դերսիմի ապստամբության դեպքում նախ կփակվեին երկրի արևելքը կենտրոնի և արևմուտքի հետ կապող ռազմավարական ճանապարհները և երկրորդ՝ հունական ճակատներից ստիպված պետք է զորք հանվեր, ինչը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Այսպես, երբ 1920 թ. դեկտեմբերի 20-ին Քեմալի հրամանով ձերբակալվեց Նուրի Դերսիմին՝ Բալյայի հանքերի 1200 հանքափորներին զինելու մեղադրանքով, մինչև նրա բանտից ազատվելը Սվազի վալի Ռեշիթ բեյը խորհուրդ էր տալիս նրան, որ նա համոզի Դերսիմի քրդերին հետ կանգնել ապստամբությունից Թուրքիայի համար այս վճռորոշ պահին, ինչի փոխարեն, ըստ վալիի, Մուսթաֆա Քեմալի հրամանով նրան Դերսիմում կտրվեին հողատարածքներ[21]: Նա ընդունեց այդ առաջարկը, որ Քրդստանում կարողանա ծավալել ազգային գործունեություն: Դերսիմին բանտում հասկացավ թուրքերի ու քրդերի միջև տարբերությունը, և թե ինչու քրդերին ավելի դժվար է կազմակերպել ապստամբության համար: Հարցաքննություններից մեկի ժամանակ Մուսթաֆա անունով դատախազը կամաց շշնջացել է նրա ականջին, թե անկախ իր պաշտոնից նա հոգով ապստամբների հետ է, քանի որ քուրդ է[22]:

Ահա այսպիսի միջոցներով քեմալական կառավարությունը կարողացավ ձմռանը քրդերին զերծ պահել ակտիվ մարտական գործողություններից և մեծաքանակ զորքերով շրջապատել Դերսիմը: Տեղաբաշխելով անհրաժեշտ քանակությամբ զորքերը՝ թուրքական կողմը սկսեց նախահարձակ լինել: Առաջին բախումը տեղի ունեցավ դեռ հունվարին: Փետրվարի 12-ին թուրքական զորախումբը շարժվեց Ուիմրանիեի ուղղությամբ: Ստանալով այս տեղեկությունը՝ քրդերը ցանկացան անմիջապես ոտքի կանգնել, սակայն ապստամբության ղեկավարները գերադասեցին մի քիչ էլ սպասել, մինչև որ ձյունը կհալվեր և ավելի շատ ցեղեր կկարողանան օգնության գալ: Նրանք կարծում էին, թե թուրքերի հիմնական ուժերը կսկսեն հարձակվել գարնան սկզբին, երբ Դերսիմի ճանապարհները բացվեն և կդիմեն ոչ այնքան մարտական գործողությունների, այլ կաշխատեն իրենց կողմը գրավել ապստամբներին՝ փակելով ազգային կազմակերպությունները, իսկ առավել արմատական տրամադրված ազգայիններին՝ ձերբակալել և աքսորել երկրի արևմտյան մասերը: Որպեսզի արդարացնեին ապագա պատժիչ գործողությունները, քեմալական իշխանութ-

[21] Տես նույն տեղում:

[22] Տես նույն տեղում:

յունները սկսեցին լուրեր տարածել, թե իբր դերսիմցիները, իսկ ավելի ստույգ՝ շադան ցեղի ցեղապետ Հուսեյն աղան, ում նաև անվանում էին Զելիմ Չավուշ, ապստամբությամբ բռնկված շրջաններում իր ջոկատով վայրագություններ է կատարում թուրք խաղաղ բնակչության, ինչպես նաև իշխանություններին հավատարիմ քրդերի նկատմամբ[23]: Ավարտելով զորքերի վերախմբավորումը՝ թուրքական կողմը վերջնագիր ներկայացրեց ապստամբներին՝ պահանջելով հանձնել իրենց մոտ եղած ամբողջ զենքը և անձնատուր լինել, հակառակ դեպքում նրանց գյուղերը անխնա կոչնչացվեն: Որպեսզի քրդերը համոզվեն, որ թուրքերը պարզապես չեն սպառնում, Ուիմրանիեն գրավված գնդի հրամանատար Հալիս բեյը մարտի 4-ին ձերբակալեց տեղի մի քանի քուրդ գործիչների և ուժեղացված վաշտի ուղեկցությամբ ուղարկեց Զառա: Սակայն Յազը Հաջիում տեղի քրդական ջոկատը գլխովին ջախջախեց այդ վաշտը և ազատեց ձերբակալվածներին: Ընդ որում, թուրքական կողմն այս մարտերը ներկայացնում է այլ կերպ: Ըստ պաշտոնական վարկածի՝ Սվազում նոր ձևավորված 6-րդ հեծելազորային գունդը փետրվարի կեսերին տեղափոխվում է Ուիմրանիե՝ Զելիմ Չավուշի դեմ պայքարելու, ինչպես նաև դասալիք զինվորներին ձերբակալելու նպատակով: Մարտի 3-ին գնդի զինվորները ձերբակալում են 5-10 դասալիքների (միայն թվերի այսպիսի անորոշությունը մեզ բերում է այն եզրահանգման, որ քեմալականները ստում են), որոնց տեղափոխման ժամանակ Յազը Հաջի գյուղի մոտ 7-8 ապստամբներ փորձում են ազատել դասալիքներին, ինչը հանգեցնում է նրանց և թուրքական դասակի բախմանը: Ապստամբներին օգնության եկած 300-400 քրդերը սպանում են զինվորների մի մասին, մյուսներին՝ գերում, իսկ ձերբակալվածներին ազատ արձակում: Հարկ է նշել, որ հատուկ ընգծվում է այն փաստը, որ ապստամբ քրդերն այս դեպքից հետո հավաքվում են Շերեֆիեում, բացականչելով՝ «կառավարությունը մեզ էլ է ուզում հայերի նման կոտորել»[24]:

Այս իրադարձությունով էլ սկսվում է ապստամբության մարտական փուլը: Քրդական ջոկատները Մահմուդ, Ազամաթ և Աշքի բեյերի հրամանատարությամբ մարտի 6-ին շրջապատում են Ուիմրանիեն և պահանջում են գնդապետ Հալիս բեյից, որ նա հանձնի գունդը և ազատի քաղաքը: Սակայն Հալիս բեյը մերժում է վերջնագիրը՝

[23] Տես *M. Balcıoğlu.* İki isyan: Koçgiri, Pontus/ Bir Paşa: Nurettin Paşa. Ankara, 2000, s. 138:

[24] Տես նույն տեղում, էջ 139:

խնդրելով, որ թողնեն գունդը վերադառնա Սվազ: Այս առաջարկը մերժվում է և մեկ օր տևած մարտերից հետո ապստամբներին հաջողվում է պարտության մատնել գնդին և ազատագրել Ումրանիեն: Քաղաքի կենտրոնում բարձրացվում է Քրդստանի դրոշը, հենց այդտեղ էլ Հալիս բեյը գնդակահարվում է հատուկ ստեղծված քրդական տրիբունայի կայացրած մահվան դատավճռի հիման վրա: Ապստամբների ձեռքն է անցնում 203 հրացան, երկու ծանր գնդացիր, զինամթերք, ռազմական հանդերձանք, ինչպես նաև 135 կենդանի, 118 թամբ: Գերի է վերցվում 90 զինվորական[25]: Ռազմագերիների խնդիրը լուծելու նպատակով ատեղծված հատուկ հանձնաժողովը գերված թուրք սպաներին և զինվորներին տալիս է համապատասխան փաստաթղթեր և ազատ է արձակում, իսկ քուրդ և չերքեզ սպաներին ու զինվորներին ցանկության դեպքում թույլատրվում է միանալ ապստամբներին[26]: Այս իրադարձությունները լայն արձագանք ստացան այլ վիլայեթների քրդական ցեղերի շրջանում: Էրզինջանի և Մալաթիայի ցեղերը, որոնց մեծամասնությունը նույնպես դավանում էր շիիզմ, ցանկանում էր օգնական ուժեր ուղարկել Դերսիմ, սակայն, իրենց խոսքերով, առատ ձյան պատճառով չեն կարողանում: Ումրանիեի դեպքերից հետո ապստամբեցին Քոչգիրի ցեղերը, որոնք իրենց Դերսիմից օգնության հասած օվաջըք ցեղերի հետ 1921 թ. մարտի 8-ին մաքրեցին իրենց շրջանները թուրքերից: Նույն օրը, քրդական ուժերը, անցնելով Մնձուրի ձյունածածկ լեռները, գրավեցին Կամախը՝ ձերբակալելով տեղի կայմակամին, ժանդարմական զորքերի հրամանատարին, ինչպես նաև քուրդ խոշոր հողատերերի՝ Շահսուվար օղլուին և Մեհմեդ աղային, որոնց կասկածում էին թուրքերի հետ համագործակցության մեջ: Ավարտելով Կամախի գրավումը՝ քրդական ջոկատները վերանորոգեցին Եփրատ գետի վրա ընկած Սատանայի կամուրջը և գրավեցին Քուրուչաց սանջանկը՝ այնտեղ էլ ձերբակալելով թուրքական իշխանության ներկայացուցիչներին տեղափոխեցին Ումրանիե դատելու համար: Ընդհանուր առմամբ մեկ շաբաթյա մարտերից հետո ապստամբներին հաջողվեց թուրքերից գրավել Քանգալ, Քոչհիսար, Դիվրիգ, Զարա, Ռեֆահիե, Քուրուչաց և Կամախ սանջակները: Ըստ որոշ տվյալների՝ ապստամբները կազմավորել էին 15 ջոկատ՝ յուրաքանչյուրը՝ 100-1500 մարդ[27], իսկ մեկ այլ տվյա-

[25] Տես նույն տեղում, էջ 141:

[26] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 36:

[27] Տես նույն տեղում, էջ 37:

լով՝ 3000 հոգի[28]: Նրանց հսկողության տակ էր անցել մոտ 15000 քառ. կմ տարածք: Ուիմրանիեից Քոչհիսար արշաված քրդական ջոկատների հրամանատարներն էին Քուրմեշան ցեղի առաջնորդներ Սեիդ Ազիզը, Զալիմը և նրա եղբայր Հասանը: Դիվրիգի ռազմաճակատի հրամանատարը Ալիշանի որդի Մահմուդն էր, իսկ նրա օգնականները Ազամեթն և Ալքինն էին: Ապստամբության մյուս հայտնի զինվորներն էին փեզգավոր ցեղի առաջնորդ Բիրական Իբրահիմը, մաքսուդան ցեղի առաջնորդ Մունզուրը, ասլանան ցեղի առաջնորդ Մեհմեդը, ինչպես նաև Ալիշիրը[29]:

Ոգևորված առաջին հաջողությունից՝ ապստամբության ղեկավարները մարտի 11-ին հեռագիր ուղարկեցին ԹԱՄԺ-ի նախագահին, որում Քոչգիրի, Դիվրիգ, Ռեֆահիե, Քուրուղաց և Կամախ սանջակներից պահանջում էին կազմավորել առանձին վիլայեթներ, որի վալին պետք է նշանակվեր տեղի հայտնի քրդերից: Սակայն շատ քրդեր, ճիշտ գնահատելով իրավիճակը, քաջ գիտակցում էին, որ առանց դրսի օգնության անհանար կամ դժվար է լինելու հաղթող դուրս գալ այս գոտեմարտից: Նրանք մտադրվել էին օգնություն խնդրել Ուրֆայում և Գազիանթեպում տեղակայված ֆրանսիական զորքերի հրամանատարներից, սակայն առավել ազգայնորեն տրամադրված գործիչները՝ երիտքրդերը, մերժեցին այդ առաջարկությունը և գերադասեցին պայքարել թուրքական իշխանությունների դեմ իրենց ուժերով: Քեմալական կառավարությունը մերժեց մարտի 11-ին քննարկել ապստամբների ուղարկած պահանջները, սակայն Նուրեդդին փաշան, հակառակ Սվազի վալիի անհամաձայնության, բանակցությունների համար Դերսիմ ուղարկեց Սվազի Բողոքարկիչ դատարանի նախագահ, ծագումով քուրդ Շեֆիք Բիթլիսիին, որը իրականում պարտավոր էր նախ հետախուզել իրավիճակը քրդական ցեղերի շրջանում և հետո աշխատել պառակտել ապստամբների ուժերը: Վերջինս Սվազի վիլայեթի մի շարք քուրդ ցեղապետերի հետ մարտի 15-ին ժամանեց քրդաբնակ Բողազվիրա գյուղ: Որպեսզի բանակցությունների ժամանակ հավատ ներշնչի, նա հայտարարում է, թե ինքն էլ է քուրդ և նույնիսկ քրդական շարժման համակիր է և միակ բանը, որ նա ցանկանում է, խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելն է: Նա մասնավորապես խնդրում է ապստամբներից բանակցությունների ժամանակ դադարեցնել մարտական գործողությունները, պատճառաբանե-

[28] Տես *A. Süslü. Mesud Fani (Bilgili)'ye göre Kürtler ve sosyal gelişmeleri. Ankara, 1993, s. 47:*

[29] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 42:

լով, որ նա այդպես ավելի հեշտ կարող է թուրքական կառավարությունից կորզել զիջումներ: Որոշ քուրդ ցեղապետեր անցան Շեֆիքի կողմը՝ թուլացնելով ապստամբների դիրքերը: Նրա գրած զեկուցագրից 13-րդ հեծյալ բրիգադի հրամանատար Ֆահրին եզրակացնում է, որ. 1. ցեղերի մեջ կան անհամաձայնություններ, 2. թուրքերը չեն մասնակցում ապստամբությանը (ամենայն հավանականությամբ նկատի ուներ Քեմալին ընդդիմադիր ուժերին) և 3. Դերսիմից օգնական ուժեր չեն գալու, իսկ եթե գան էլ, ապա երկար ժամանակ կպահանջվի[30]:

Նույն այդ ժամանակ Նուրեդդին փաշան, տեսնելով, որ Դերսիմը շրջապատած ուժերը բավարար չեն ապստամբությունը ճնշելու համար, հրամայեց լրացուցիչ ուժեր բերել այդտեղ: Սվազում կենտրոնացվեցին 13-րդ հեծյալ բրիգադը և 14-րդ հեծյալ էսկադրոնը, ինչպես նաև 5-րդ հեծյալ էսկադրոնի հրամանատարությունը, որի տրամադրության տակ դրեցին Սվազից և Զառայից զորակոչված պահեստազորայիններին: Ռեֆահիե մտավ Թոփալ Օսման աղայի կազմավորած հետևակային գունդը, իսկ մարտի 12-ին Յոզղաթից ապստամբությամբ բռնկված շրջան անցավ 53-րդ հեծյալ գունդը[31]: Կառավարությունը Սվաս, էլյազիգ և էրզինջան վիլայեթներում մարտի 15-ին ռազմական դրություն մտցրեց[32]: Սվազում հիմնվեց Ռազմական դատարան: Գլխավոր շտաբը Նուրեդդին փաշային ուղարկած հրամանահրահանգում մանրամասնորեն անդրադառնում է հնարավոր ամեն դեպքին և որպես դրա պատասխան կառավարության զորքերի գործողություններին: Մասնավորապես, առանձնահատուկ ընդգծում է, որ իշխանությանը հավատարիմ մնացած ազգաբնակչության ունեցվածքը, արժանապատվությունը, կենդանիները պետք է ամեն կերպ պաշտպանվեն, անկախ նրանց լեզվական և կրոնական բաժանումից: Զինվորական իշխանությունները ժողովրդի շրջանում պետք է դրան ուղղված քարոզչական աշխատանք տանեն: Նույնիսկ հրահանգավորվում էր, որ ամեն մի ստորաբաժանման հրամանատար պետք է աշխատի թալանված ունեցվածքը իրենց տերերին հետ վերադարձնել: Բոլոր տղամարդիկ պետք է ներկայանային իշխանություններին և հանձնեին զենքերը 45 ժամվա ընթացքում, այլապես նրանք կդառնային դավաճաններ՝ այստեղից բխող բոլոր հետևանք-

[30] Տես *M. Balcıoğlu.* Op. cit., p. 144:

[31] Տես նույն տեղում, էջ 143:

[32] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 58:

ներով: Ապստամբության ղեկավարները պետք է ձերբակալվեին և հանձնվեին Սվազի Կենտրոնական բանակի հրամանատարությանը: Չհանձնվողների ունեցվածքը բռնագրավվելու, իսկ տները՝ այրվելու էին: Գյուղերը, որոնք կհրաժարվեին ենթարկվել կենտրոնական իշխանությանը և կդիմադրեին կառավարության զորքերին, կմատնվեին կրակի: Կձերբակալվեին նաև այն անձինք, ովքեր կթաքցնեին ապստամբներին, կամ չէին հայտնի նրանց տեղը: Առանձնահատուկ կերպով ընդգծվում էր, որ այն գյուղերը կամ ցեղերը, որոնք ոչ մի հակաօրինական բան չեն արել, չպետք է ենթարկվեն ոչ մի բռնաճնշման: Այնուհետև հետևում էին զուտ մարտական հրահանգավորումներ, ինչպիսիք էին օրինակ ապստամբներին շփոթեցնելու համար կազմակերպվող գիշերային գրոհներին նախապատրաստվելը, ստորաբաժանումների միջև փոխգործություն մշակելը, հնարավորինս արդյունավետ թուրքական իշխանություններին հավատարիմ ազգաբնակչության հնարավորությունը և ուժերը ապստամբությունը ճնշելու գործում օգտագործելը, և վերջինը՝ սույն հրամանը խիստ գաղտնի պահելը[33]:

Սակայն ինչպես սովորաբար ընդունված է Թուրքիայում, մի բան է թղթի վրա գրված հրամանը, մեկ այլ բան՝ իրականությունը: Բոլորն էլ լավ հասկանում էին, որ արյան համն առած թուրք զինվորները հրով ու սրով անցնելու են գյուղերով և քաղաքներով՝ առանց հաշվի առնելու՝ իրենց առջև ապստամբներ են, թե կառավարության կողմնակիցներ, տղամարդիկ են, կանայք, երեխաներ, թե ծերեր: Այդ իսկ պատճառով, երբ թուրքական իշխանությունը հեռագիր ուղարկեց Դերսիմ պարզելու համար, թե վերջնաժամկետից հետո ապստամբները շարունակելու են պայքարը, թե անձնատուր են լինելու, ապստամբները պատասխանեցին՝ քանի որ Անկարայի կառավարությունը իր առջև նպատակ է դրել ոչնչացնել քրդերին, նրանք կշարունակեն իրենց պայքարը հանուն իրենց ազգային իրավունքների և օրինական պաշտպանության[34]: Ապստամբության ղեկավարները չէին սխալվում. անգամ Մուսթաֆա Քեմալն իր գործունեությամբ ապացուցեց նրանց խոսքերի իրավացիությունը: Հետագայում՝ 1925 թ., նա հրամայեց կախաղան հանել Հասան Հայրիին, որը Դիարբեքիրում տեղակայված 16-րդ կորպուսի շտաբին կից ստեղծված քրդական վաշտի հրամանատարն էր՝ նշանակված Քեմալի հրամանով: Այդ վաշտի զինվորներն ու սպաները կրում էին քրդական տարազներ, իսկ հրամանները

[33] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 45- 47:

[34] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 146:

տրվում էին քրդերեն: Քոչգիրիի ապստամբության ժամանակ Հասան Հայրին կտրուկ կերպով դեմ դուրս եկավ այդ ապստամբությանը՝ ասելով, թե «Թուրքերը և քրդերը հարազատ եղբայրներ են և երբեք իրարից չպետք է բաժանվեն»[35]: Նրան մահվան դատապարտելու միակ մեղադրանքն այն էր, որ պատգամավոր եղած ժամանակ ԹԱՄԺ-ի նիստերին մասնակցել էր քրդական ազգային տարազով, այսինքն՝ ըստ քեմալականների՝ քարոզել էր քրդականություն: Անկախության դատարանի նախագահ Ալի Սայիբի որոշման վրա չազդեց անգամ Հայրիի այն արդարացումը, որ տարազը ԹԱՄԺ-ի նիստերին նա կրել էր անձամբ Քեմալի հրամանով[36]: Միայն այս փաստը բավական է Մ. Քեմալի բարոյական կերպարը պարզելու համար:

Շեֆիք Բիթլիսիի անցկացրած բանակցության ընթացքում Նուրեդդին փաշան, ինչպես արդեն նշվեց, 1921 թ. մարտի 12-ին Յոզղաթ տեղափոխված 53-րդ հեծելազորային գնդին հրամայեց շարժվել դեպի ապստամբության շրջան: Երկու օր անց՝ մարտի 14-ին նույն ուղղությամբ շարժվեցին Ամասիայում տեղակայված դիվիզայի օպերատիվ գումարտակները և Մերզիֆոնում տեղակայված դիվիզիայի 10-րդ գնդի երկու գումարտակները: 54-րդ հեծելագունդը Սվազից շարժվեց դեպի Քոչհիար, 32-րդ հեծելագունդը Թոքաթից՝ Սվազ, իսկ էրզինջանի ժանդարմները և միլիցիայի ստորաբաժանումները ուղարկվեցին Ռեֆահիե[37]: Կենտրոնական խմբավորման զորքերի հրամանատարի ենթակայության տակ դրվեցին Սվազում, Յոզղաթում, Ամասիայում, Մերզիֆոնում, Թոքաթում, էրզինջանում, Բայբուրթում, Գիրեսունում, Շապին-Կարահիսարում, Չեմիշքեզեքում, Արաբկիրում և այլ քաղաքներում տեղակայված զորամասերը, ինչպես նաև ժանդարմների ստորաբաժանումները: Սակայն, այսպիսի միջոցառումներից հետո էլ անգամ այս ամենը անբավարար համարելով՝ Նուրեդդին փաշան որոշեց մասնակի զորահավաք սկսել Դերսիմին մոտ ընկած վիլայեթներում: Իսկ կառավարությունը, որը ոչ պակաս էր անհանգստացել քրդերի՝ մարտի 4-ից մինչև 12-ը ծավալած հաջող հարձակումներից, հունական ռազմաճակատից շտապ Սվազ ուղարկեց 14-րդ հեծելազորային դիվիզիան և 13-րդ հեծելազորային բրիգադան, իսկ դեպի արևելք և հյուսիս ապստամբություն չծավալելու և չտարածելու նպատակով Քեմալի հրամանով մեծաքանակ ուժեր տեղակայ-

[35] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 44:

[36] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 102:

[37] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 47:

վեցին էրզինջանում և էլյազիգում, ինչպես նաև վերահսկողության տակ վերցվեցին Սվազ–Քանգալ–Մալաթիա–էլյազիգ և Սվազ–Զառա ճանապարհները, Եփրատ և Արածանի (Մուրադ) գետերի վրա ընկած կամուրջները, որոնք կապում էին Դերսիմը էլյազիգի, Արաբկիրի, Մալաթիայի, էգինի և Կամախի հետ[38]: Ըստ թուրքերի պաշտոնական տվյալների՝ պատժիչ զորքերը հաշվվում էին մոտ 3200 զինվոր, որոնց զինանոցում կար 3 թեթև, 18 ծանր գնդացիր, 2750 հրացան, իսկ թիկունքի ծառայությունում կար մոտ 1250 ջորի[39]: Սակայն, այստեղ հաշվի էին առնվում միայն կանոնավոր զորամասերը, իսկ եթե դրան գումարենք նաև քրդական մի քանի ցեղերի աշխարհազորը, որը հավատարիմ էր մնացել Անկարայի կառավարությանը և կռվում էր ապստամբ քրդերի դեմ, ժանդարմերիայի և միլիցիայի ստորաբաժանումները, ինչպես նաև այլ զորամասերը, որոնք չէին մասնակցում մարտական գործողություններին, սակայն վերահսկում էին ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները և կամուրջները, ապա կարելի է ենթադրել, որ կառավարական ուժերի թիվը 5000-ից պակաս չի եղել: Թերևս արժանահավատ են այն տեղեկությունները, ըստ որոնց ապստամբների և պատժիչ ուժերի ընդհանուր քանակը եղել է մոտ 10 000[40]: Այսպիսի անհրաժեշտ նախապատրաստությունից հետո Կենտրոնական բանակը Նուրեդդին փաշայի հրամանատարությամբ 1921 թ. ապրիլի 11-ին սկսեց հարձակողական գործողությունները ապստամբած ուժերի նկատմամբ: Ծավալվեցին կատաղի մարտեր ինչպես Դերսիմ–Էզինջան, այնպես էր Սվազ–Քոչհիար–Զարա և Սվազ-Քանգալ ուղղություններով: Թուրքական զորքերի դաժանությունն այդ շրջանների քրդերին ոչ մի այլ ելք չէր թողնում, քան ամբողջ ազգաբնակչությանը՝ կանայք, երեխաներ և ծերեր, ոտքի հանել զենքով պաշտպանելու իրենց կյանքն ու պատիվը: Բնակչության նկատմամբ կատարվող գազանությունները թուրքերի դեմ տրամադրեցին այն քուրդ ղեկավարներին, որոնք մի քանի օր առաջ բանակցում էին նրանց հետ: Այդ ղեկավարներից էր մասնավորապես Հայդար բեյը, որն իր հավատարիմ ջոկատով միացավ ապստամբներին: Սակայն, որքան էլ անձնուրաց էին պայքարում քրդերը, ուժերը խիստ անհամաչափ էին և քրդերի աշխարհազորը

[38] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 38:

[39] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 47:

[40] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 58:

անկարող էր դիմադրել թուրքերի կանոնավոր զորքերի ճնշմանը: Թուրքական զորքերը մեկը մյուսի հետևից գրավում էին գյուղերը՝ հրի ու սրի ճարակ դարձնելով դրանք: Բնակչության մեծ մասը ապստամբ ջոկատների հետ քաշվել էին Քոչգիրիի լեռները, սակայն պարզ էր, որ ապստամբներն ի վերջո չէին կարողանալու պայքարել թուրքերի դեմ, և տեղի բնակչությունն էլ սրի կքաշվի: Նման օրհասական պայմաններում որոշվեց խաղաղ բնակչությանը տեղափոխել Դերսիմ: Անցումը պետք է ղեկավարեր Հայդար բեյը փոքրաթիվ ջոկատով: 1921 թ. ապրիլի 4-ին Հայդար բեյի գլխավորած քարավանը Քոչգիրիի լեռներից շարժվեց դեպի հյուսիս-արևելք՝ Էրզինջանի Փյուլյումյուրի ուղղությամբ: Էրզինջանի վիլայեթում նա մտավ կուրեյշան և բազաբան ցեղերի տիրույթներ: Նա հույս ուներ, որ քրդական այս ցեղերը կօգնեն և Փյուլյումյուր–Մամախաթուն լեռնանցքներով կանցկացնեն Դերսիմ: Սակայն կուրեյշան ցեղի մի քանի հազար մարտիկներ փակեցին Հայդար բեյի ճանապարհը և հրամայեցին հետ դառնալ Քոչգիրիի լեռները՝ հակառակ դեպքում սպառնալով մարտական գործողություններ սկսել գաղթականների դեմ[41]: Ամենայն հավանականությամբ Քյոռ փաշան վախեցավ թուրքերի պատժիչ զորքերի վրեժխնդրությունից: Հեյդար բեյը ստիպված էր մարտերով հետ վերադառնալ Քոչգիրիի լեռները, որտեղ իրավիճակն ավելի էր վատացել: Մի քանի ծանր պարտությունից հետո քուրդ ցեղապետերից ոմանք բռնեցին ապստամբների ճամբարը լքելու և թուրքերին միանալու ճանապարհը, և այդ նպատակով բանակցությունների մեջ մտան Նուրեդդին փաշայի հետ: Նրանցից էր Մուրադ աղան, որը ապստամբության վերջին փուլում իր գլխավորած գինյան ցեղով անցավ կառավարական զորքերի կողմը: Քանգալի շրջանում հեղինակություն վայելող Նաջի և Մուրադ աղաները նույնպես որոշում ընդունեցին անցնել կառավարության կողմը: Զելալիի շրջանում նրանց հաջողվեց պարտության մատնել ապստամբներին, իսկ ջոկատների հրամանատարներ Սեիդ Ազիզին, Զալիմին և նրա եղբայր Հասինին ձերբակալեցին և հանձնեցին Նուրեդդին փաշային: Կառավարական զորքերին հաջողվեց պարտության մատնել քուրմեշան ցեղին: Ճակատամարտի ժամանակ ցեղի առաջնորդ Գյուզել աղան սպանվեց: Գյուզել աղայի սպանվելուց հետո այդ ցեղը դադարեց դիմադրել և նրա մարտիկները ցրվեցին տներով[42]: Չնայած այս լուրջ պարտություններին, որոնց

[41] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 39:

[42] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 49:

պատճառով ապստամբների շարքերում նկատվում էր հուսալքություն և դասալքություն, ապստամբական ուժերը, այնուամենայնիվ ծանր կորուստներ էին պատճառում թուրքական զորքերին: Որպեսզի վճռական հարված հասցներ ապստամբներին, Նուրեդդին փաշան դիմեց խորամանկության: Հետագա արյունահեղությունը կանխելու պատրվակով նա հորդորեց Սվազի քուրդ ցեղապետերին բանակցությունների հրավիրել Հայդար աղային: Հայդար աղան կուլ տվեց խայծը և մեկ հազարանոց ջոկատով ժամանեց Սվազ, սակայն նա այստող ձերբակալվեց իր 400 կողմնակիցների հետ, իսկ մնացած 600-ը ուղարկվեցին երկրի արևմուտք, որտեղ էլ ոչնչացվեցին[43]: Այս աղետը վճռորոշ եղավ ապստամբության համար: Բացի կրած ահռելի կորուստներից, այն ունեցավ նաև բարոյահոգեբանական ճնշում՝ կոտրվեց ապստամբների մեծ մասի մարտական ոգին: Նրանք կա՛մ վերադառնում էին իրենց տները, կա՛մ էլ անցնում էին կառավարական ուժերի կողմը: Մնացած փոքրաթիվ ջոկատները Ալիշերի, Նուրիի, Սաբրիի, Նեմդ Ալիի, Զըգըզի, Մեմո Թարբազալիի, Քամր Ազիզի, Դիլոյի, Փաշո Աբբասի և այլոց հրամանատարությամբ քաշվեցին Դերսիմի լեռները և այնտեղ շարունակեցին պայքարը: Քոչգիրիում պայքարը շարունակող վերջին ապստամբ ջոկատին մայիսի 30-ին Լըլըչ լեռնանցքում շրջապատեցին կառավարական գերակշիռ ուժերը և գերեվարեցին: Գերիների մեջ էին Ալիշանը, Ալիշիրը, Նուրի Դերսիմին, Փաշօղլու Մահմուդը, Հայդարը ևս 32 ազդեցիկ քրդեր և 600 շարքային մարտիկներ, որոնց ուղարկեցին Սվազ՝ թուրքական Կենտրոնական բանակի շտաբ[44]: Բացի դրանից, նախորդ մարտերում գերեվարվել էին ապստամբ ուժերի հրամանատարներ Ազամաթ Բահրի բեյը, Սանիթ բեյը, Ֆելիք Ալին, Համոն, Ազիզը, Թաքին, Փեհլիվանը, Հուսեյն Աշուրը և այլք: Կառավարական զորքերն ապստամբներից առգրավել էին մոտ 2000 հրացան և այլ սպառազինություն[45]: Ապստամբության պարտությունից հետո թուրքական Կենտրոնական բանակի հրամանատարությունը Սվազում հրապարակեց պաշտոնական հաղորդագրություն, ըստ որի՝ մարտերի ընթացքում ոչնչացվել էր 123 ապստամբ, գերի էին վերցվել 159 մարդ[46]: Սակայն Գլխավոր շտաբին ուղարկված հեռագրում Նուրեդդին փաշան գրում էր, որ

[43] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 40:

[44] Տես *A. Süslü.* Op. cit., p. 49:

[45] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 159:

[46] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 40:

ոչնչացված էր մինչև 500 խռովարար, իսկ մի մասին էլ հաջողվել էր փախչել[47]: Ապստամբների նկատմամբ հաղթանակ տանելուց հետո թե՛ կառավարական ուժերը, թե՛ կանոնավոր բանակը, թե՛ անկանոն կիսառազմական բաշիբոզուկ ջոկատները, սկսեցին հաշվեհարդար տեսնել քրդական խաղաղ բնակչության նկատմամբ: Զարա, Քանգալ, Քուրուչայ սանջակներում քոչգիրի ցեղին պատկանող 135 գյուղեր, որտեղ բնակվում էր 10000 մարդ, մատնվեց հրի ու սրի: Տներն այրում էին, գույքը և անասունները՝ թալանում, իսկ բնակչությանը կա՛մ ոչնչացնում, կա՛մ էլ ենթարկում ծանր կտտանքների: Իր գազանությամբ առանձնապես աչքի ընկավ ազգությամբ լազ Թոփալ Օսման աղան: Նրա վարձկան ջոկատները, որոնք հիմնականում կազմված էին քրեական թափթփուկներից և բախտախնդիրներից, ոչինչ չէին խնայում: Նրանց անցած գյուղերում մնում էին միայն ծխացող տներ և տանջամահ արված դիակներ: Ապստամբության պարտությունից հետո Սվազում արտակարգ ռազմական տրիբունալը դատեց 400 հոգու, այդ թվում՝ Հայդար Բեյին, Սեյիդ Ազիզին և ևս 15 ղեկավարների դապատարտեց մահվան: Հեռակա կարգով մահվան դատապարտվեցին Ալիշերը, Նուրին, Մահմուդ Մուսթաֆա Փաշաօղլուն, Մեմո Թարբազալին, Դիլոն, Սաբրին և ևս 95 ապստամբներ: 400 հոգուց 110-ը արդարացվեցին, սակայն աքսորվեցին Թուրքիայի տարբեր մասեր: Իսկ մնացած մասը դատապարտվեց 5 տարուց մինչև ցմահ բանտարկության[48]: Քոչգիրիի ապստամբությունը պարտություն կրեց, սակայն հակաթուրքական շարժումը Դերսիմում չդադարեց: Քոչգիրի ապստամբության պարտությունից հետո նրանց նպատակը բանտարկված քրդերի ազատությունն էր: Նրանք անընդհատ հեռագրեր էին ուղարկում Անկարա՝ պահանջելով անհապաղ ազատ արձակել բանտարկյալներին: Սակայն լավ հասկանալով, որ միայն հեռագրերով չէին կարող ստիպել թուրքերին կատարել պահանջը, նրանք սկսում են մարտական գործողություններ վարել Էրզինջան–Կամախ–Էգին գծում՝ հասնելով մինչև Զարա և Դիվրիգ: Եվ այս մարտավարությունը տալիս է իր արդյունքը: Զբաղված լինելով հույների դեմ վճռական ճակատամարտով, երբ խիստ անհրաժեշտ էր թուրքական բանակի կենտրոնացումն արևմտյան ճակատում, Քեմալը որոշեց գնալ զիջումների: Նրա առաջարկով ԹԱՄԺ-ը չեղյալ հայտարարեց Սվազի Արտակարգ ռազմական տրիբունալի՝ քուրդ ապստամբների

[47] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 49:

[48] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, с. 40:

նկատմամբ կայացրած դատավճիռը՝ բացառությամբ Ալիշերի և Նուրիի: Նույնիսկ մահվան դատապարտված ապստամբներն ազատ արձակվեցին: Համաներումը, սակայն, չէր տարածվում այն ապստամբների վրա, որոնք խուսափել էին ձերբակալությունից և թաքնվում էին լեռներում: Սակայն ներված չլինելու հանգամանքն ամենևին չէր վշտացնում Դերսիմի լեռներում քուրդ ապստամբներին, քանի որ այնտեղ դրության տերը քուրդ ֆեոդալներն էին, որոնք չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը: Աղդայում, որը պատկանում էր Սեիդ Ռիզային, բարձրացվել էր անկախ Քրդստանի դրոշը, և թեկուզ թուրքական իշխանությունները գիտեին այդ մասին, սակայն այդ պահին ոչինչ անել չէին կարող: Այսպիսով՝ թեև թուրքերին հաջողվել էր ճնշել ապստամբությունը, սակայն քրդերին հաջողվեց պահել Դերսիմը:

ԳԼՈՒԽ 2
ՔԵՄԱԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՇԵՅԽ ՍԱՅԻԴԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1924–1925 ԹԹ.

2.1. Մուսթաֆա Քեմալի հակաքրդական քաղաքականության սաստկացումը

1922 թ. հոկտեմբերի 11-ին Մուդանիայում կնքված զինադադարով ավարտվեց թուրք-հունական պատերազմը: Նոյեմբերի 20-ին Լոզանում իր աշխատանքները սկսեց խաղաղության վեհաժողովը: Վեհաժողովում թուրքական պատվիրակությունը, որի ղեկավարն էր Իսմեթ Ինյոնյուն, կտրականապես մերժեց հայկական և քրդական պրոբլեմների քննարկումը: Բրիտանական կողմը հմտորեն օգտագործեց դա և այն դարձնելով առևտրի առարկա՝ քրդերին փոխանակեց Մոսուլի վիլայեթի դիմաց: Իրենց հերթին Մոսուլի հարցում անզիջում դիրք գրավելը թուրքական պատվիրակությանը հնարավորություն էր տալիս զիջումներ կորզելու դաշնակիցներից և թույլ չտալու նրանց այլևս խառնվել իրենց ներքին գործերին: Եվ դա հաջողվեց: Եթե մինչ այդ՝ «Սևրյան ժամանակաշրջանում», խոսվում էր քրդերի ազատ ինքնորոշման, ընդհուպ մինչև անկախության կամ գոնե՝ ինքնավար Քրդստանի ստեղծման մասին (ընդ որում, հասկացվում էր թուրքական Քրդստանը), ապա Լոզանում, մերժելով Սևրն ընդհանրապես, Ինյոնյուն կարողացավ քրդական պրոբլեմը փոքրացնել և տեղավորել Մոսուլի վիլայեթի խնդրի մեջ՝ անգլիացիներին դնելով բարդ իրավիճակում: Քրդական պրոբլեմը թուրքական քրդերի վրա տարածելու բրիտանացիների փորձերը ևս հանդիպեցին թուրքական պատվիրակության կտրուկ մերժմանը այն հիմնավորմամբ, որ քրդերը Թուրքիայում ազգային փոքրամասնություն չեն, քանի որ թուրքերը ազգային փոքրամասնություն ասելով նկատի ունեին ոչ մահմեդական ժողովուրդներին:

Դաշնակիցները, փորձելով Լոզանում վերականգնել Սևրի պայմանագիրը, հեռագրով հարցում ուղարկեցին ԹԱՄԺ-ի քուրդ պատգամավորներին, թե արդյոք նրանք ուզու՞մ են անջատվել Թուրքիայից: Հրավիրվեց ԹԱՄԺ-ի արտակարգ նիստ, որտեղ Մ. Քեմալը «առաջարկեց» քուրդ պատգամավորներին պատասխանել հեռագրին:

Հուսեյն Ավնի բեյը հայտարարեց, թե Թուրքիան պատկանում է քրդերին և թուրքերին, և որ այս ամբիոնից միայն 2 ազգ կարող են խոսել՝ քրդերը և թուրքերը: Իր հերթին, մյուս քուրդ պատգամավոր Հասան Հայրին հայտարարեց, թե քրդերը երբեք չեն անջատվի թուրքերից: Այս հայտարարությունները որպես պաշտոնական պատասխան ուղարկվեցին Լոզան: Որպես հիմք ընդունելով այս գրությունը՝ Լոզանում թուրքական պատվիրակության ղեկավար Ի. Ինյոնյուն հայտարարեց, որ Անատոլիայի քրդերը պատրաստ են թուրքերի հետ կողք կողքի, զենքը ձեռքին պայքարելու Քրդստանը Թուրքիայից անջատելու ամեն մի փորձի դեմ[49]: Քեմալն այնքան գոհ էր այս ամենից, որ թույլատրեց քուրդ պատգամավորներին ԹԱՄԺ գալ քրդական ազգային տարազներով[50]: Սակայն, որպեսզի դաշնակիցներին զրկեր վերջին կասկածներից, Քեմալի հանձնարարությամբ Ի. Ինյոնյուն պատվիրակության կազմում ընդգրկեց քուրդ պատգամավորների՝ Փիրանզադե Ֆևզի և Զուլֆիզադե Զուլֆի բեյերին: Այս քուրդ պատգամավորները Լոզանի վեհաժողովում իրենց ժողովրդի անունից պաշտոնապես հայտարարեցին, որ քրդերը թուրքերի հետ եղբայրներ են, իրենց մեջ ոչ մի տարբերություն չկա և որ իրենք չեն ուզում անջատվել թուրքերից[51]:

Թուրքական պատվիրակությունն ինքն էր մեղադրում անգլիացիներին և արաբներին Մոսուլի քրդերի իրավունքները ոտնահարելու մեջ: Որպես արդյունք՝ քրդական պրոբլեմ ասելով սկսվեց հասկացվել Իրաքի քրդերի հարցը: Այսպես. քրդական պրոբլեմը հանվեց վեհաժողովի օրակարգից և դարձավ Մոսուլի հարցի լոկ մի բաղկացուցիչ մասը: Քուրդ կամ Քրդստան բառերն ընդհանրապես չօգտագործվեցին խաղաղության պայմանագիրը կազմելու ժամանակ: Թուրքիան հրաժարվեց քրդերին և այլ մահմեդական ժողովուրդների ճանաչել որպես ազգային փոքրամասնություն:

Եթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմը քրդերով բնակեցված շրջանները բաժանված էին 2 պետությունների՝ Թուրքիայի և Իրանի, ապա Լոզանի պայմանագրով այն արդեն բաժանվեց 4 պետությունների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի միջև: Արևմուտքը, Թուրքիայի հետ հարաբերություններում հանելով

[49] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում: «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», 2010, հմ. 131.6 (http://www.old.ysu.am/files/ 01 V_Bayburdyan.pdf):

[50] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 189:

[51] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 49:

քրդական պրոբլեմը, հրաժարվում էր ճանաչել քրդական պրոբլեմի գոյությունը Թուրքիայում և քրդերին՝ որպես ազգային փոքրամասնություն: Այս փաստը հնարավորություն էր տալիս թուրքական իշխանություններին անպատիժ հալածանքների ենթարկելու քրդերին, ինչից և նրանք անմիջապես օգտվեցին: Լոզանի պայմանագրից հետո թուրքական կառավարությունը անցավ բացահայտ հալածանքների քրդերի դեմ:

Սակայն նույնիսկ դեռ մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը ԹԱՄԺ-ը ընդունել էր մի շարք օրենքներ, որոնք կոչված էին օրինականացնելու քրդերի դեմ պատժիչ գործողությունները: 1922 թ. ամռանը Թուրքիայի ՆԳՆ-ը հանդես եկավ առաջարկությամբ, ըստ որի քրդերին ավելի բարձր քաղաքակրթական մակարդակի բարձրացնելու նպատակով անհրաժեշտ էր արևելյան վիլայեթներում կառուցել դպրոցներ, ճանապարհներ, ինչպես նաև ժանդարմական պահակակետեր և նոր զորանոցներ[52], իսկ հուլիսի 31-ին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք, որը կոչված էր վերակազմավորելու Անկախության դատարանների համակարգը: Համապատասխան շրջանի անկախության դատարանը պետք է կազմվեր 1 նախագահից, 2 անդամներից և գլխավոր դատախազից, որոնք պետք է ընտրվեին ԹԱՄԺ-ի պատգամավորներից քվեարկության միջոցով: Այդ օրինագծի ընդունման արդյունքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին. 1923 թ. հունվարի 23-ին Դիարբեքիրում հիմնվեց արևելյան վիլայեթների համար Անկախության դատարան: Իսկ 1923 թ. հոկտեմբերի 18-ին ԹԱՄԺ-ը ընդունեց ավազակությունները ճնշելու մասին հմ. 356 օրենքը, ըստ որի շատ խիստ պատիժ էր նախատեսվում (ընդհուպ մինչև մահապատիժ) ավազակություն կատարողներին, ինչպես նաև նրանց աջակցողներին կամ թաքցնողներին[53]:

1923 թ. ամռանը տեղի ունեցած ԹԱՄԺ ընտրությունների ժամանակ ոչ մի քուրդ չընտրվեց պատգամավոր, իսկ քրդական շրջաններից կառավարության որոշմամբ ընտրվեցին միայն թուրքեր: Քրդաբնակ վիլայեթներում բարձր պաշտոնների սկսեցին նշանակվել միայն մոլի ազգայնական թուրք պաշտոնյաները, իսկ քրդերը կարող էին նշանակվել մինչև կայմակամի պաշտոններում, այն էլ՝ միայն վստահելի մարդիկ: Փոխվում էր վերաբերմունքը բանակ զորակոչված քրդերի հանդեպ: Նրանց հանձնարարում էին ամենածանր ու ոչ

[52] Տես *D. McDowall.* A modern history of the Kurds. London, 2005, P. 191:

[53] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами. «Курдский альманах», 2001, № 1:

պատվաբեր աշխատանքները և բուժում էին ծայրահեղ դեպքում ու շատ վատ: Տեղանունների քրդական անվանումները փոխարինվում էին թուրքականներով: Այլևս խոսք չկար քրդական ինքնավարության մասին, որը պատերազմից հետո քուրդ ցեղապետերին և շեյխերին խոստացել էր Մ. Քեմալը: Ընդհակառակը՝ իրավիճակն ավելի էր վատթարանում քրդերի համար: 1924 թ. մարտին պաշտոնապես արգելվեց օգտագործել քրդերենը[54]: Առաջին հերթին դա վերաբերում էր դպրոցներին, որտեղ ուսուցումն այսուհետ կատարվելու էր միայն թուրքերեն լեզվով: Պաշտոնապես թուրքական իշխանությունները մերժում էին «քուրդ ազգ» հասկացությունը, պնդելով, թե «այսպես կոչված քրդերն իրականում լեռնային թուրքական ցեղեր են, որոնք դարեր առաջ քաշվելով անանցանելի լեռները և կտրվելով թուրք ժողովրդի հիմնական հատվածից՝ սկսել են խոսել բարբառներով, սակայն հանրապետական կարգը կվերացնի այս բացը և այսպես կոչված քրդերը կմերվեն իրենց մայր ժողովրդի մեջ»[55]: Հարված հասցվեց նաև ալևի քրդերին. 1924 թ. մարտի 18-ին ԹԱՄԺ-ի ընդունած հմ. 442 օրենքով բոլոր գյուղերում պետք է լինեին մզկիթներ, իսկ այն գյուղերում, որտեղ նոր պիտի կառուցվեին, պարտադիր պետք է տեղադրվեին գյուղի կենտրոնում[56]: Թեև Քեմալն ալևիներին խոստացել էր վերացնել կրոնական հալածանքները, սակայն հաղթանակից հետո նա դրժեց իր խոստումը՝ վերսկսելով դրանք: Այդ հալածանքներն Թուրքիայում շարունակվում են մինչև օրս:

Ժողովրդագրական վիճակն իրենց օգտին փոխելու նպատակով թուրքական իշխանությունները ծառայությունից զորացրված թուրք զինվորներին, ինչպես նաև Թուրքիա ներգաղթած մուհաջիրներին սկսեցին հողեր տրամադրել քրդաբնակ վիլայեթներում, որոնք պատկանել էին հայերին, ասորիներին, ինչպես նաև 1916 թվականին դեպի Անատոլիա քշված քրդերին[57]: Կյանքի կոչելով լաիցիզմի* քաղաքականությունը՝ Մ. Քեմալի ցուցումով ԹԱՄԺ-ը 1924 թ. մարտի 3-ին հմ. 431 օրենքով վերացվեց խալիֆայությունը, և Թուրքիան

[54] Տես *D. McDowall.* Op. cit., p. 191:

[55] Տես *M. E. Üzümeri, S. Dinçer, S. Kazancı.* Türkiye ansiklopedisi, cilt II. Ankara, 1956, s. 52:

[56] Տես *Д. В. Жигульская.* Op. cit., p. 116:

[57] Տես *D. McDowall.* Op. cit., p. 192:

* Լաիցիզմ՝ Մ. Քեմալի առաջ քաշած թուրքական ազգայնականության գաղափարախոսության վեցը կետերից մեկը: Նպատակն էր պետությանը տալ աշխարհիկ բնույթ՝ շարիաթի չեղարկում, կրոնական կրթության արգելում և բոլոր դպրոցների ենթարկեցում Ազգային լուսավորության նախարարությանը:

հռչակվեց աշխարհիկ հանրապետություն: Երկրից արտաքսվեցին օսմանյան դինաստիայի բոլոր ներկայացուցիչները, որոնք զրկվեցին թուրքական քաղաքացիությունից: Հանրապետության ամբողջ տարածքում հոգևոր դպրոցները՝ մեդրեսեները, համաձայն հմ. 430 օրենքի, ենթարկվեցին Ազգային լուսավորության նախարարությանը: Նույն օրն էլ հմ. 429 օրենքով վերացվեց Շարիաթի նախարարությունը, և դատավարությունը կատարվում էր աշխարհիկ դատարանների և դատավորների միջոցով, իսկ որպես դատական օրենսգիրք Ղուրանին փոխարինելու եկան աշխարհիկ քրեական, քաղաքացիական և այլ օրենսգրքեր[58]:

Սա հարուցեց քրդական հասարակության բոլոր խավերի խիստ դժգոհությունը: Հասարակ ժողովուրդը դեմ էր խալիֆայության վերացմանը, դիտարկելով այդ քայլը որպես անարգանք իսլամի և սուլթանության դեմ: Է՛լ ավելի դժգոհ էին մտավորականությունը և ցեղային առաջնորդները, որոնք նաև որպես հոգևոր առաջնորդներ՝ շեյխեր, ղեկավարելով միաժամանակ նաև դերվիշական միաբանությունները, զրկվում էին քուրդ երիտասարդությանը կրոնական կրթություն տալու հնարավորությունից, ինչով թուլանում էր նրանց ազդեցությունը հասարակության և պետության մեջ: Քուրդ խոշոր ավատատերերի համար մեծ վտանգ էր նաև Քեմալի հակաավատատիրական քաղաքականությունը, ինչի հետևանքով նրանք բացի հարստությունից կորցնում էին ամենագլխավորը՝ հողը՝ նրա վրա ապրող ճորտ գյուղացիներով հանդերձ: Թուրքական կառավարության իրագործած քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային բարեփոխումները, որոնք կոչված էին երկիրը դարձնելու ժամանակակից եվրոպական տիպի պետություն, ցայտուն կերպով ցույց տվեցին իրենց ազգայնամոլական էությունը, որն ուղղված էր ազգային փոքրամասնությունների և առաջին հերթին՝ քրդերի դեմ, «քանզի բարեփոխումներն իրականացվում էին թուրքերի կողմից, թուրքերի համար և հանուն թուրքերի»[59]: Քեմալական իշխանությունը քրդաբնակ վիլայեթներում բարեփոխումներն անցկացնում էր հիմնականում հոծ թուրքաբնակ շրջաններում (Կարին, Երզնկա, Կարս, Խարբերդ), և այնքան, որքան անհրաժեշտ էր թուրքական պետության շահերը պաշտպանելու համար: Մ. Քեմալը և նրա շրջապատը լավ հասկանում էին,

[58] Տես *Մ. Ա. Հասրաթյան, Ս. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան,* Թուրքիայի պատմության ուրվագծեր: Ե., 1986, էջ 248:

[59] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945). М., 2005, с. 31:

որ քրդական վիլայեթներում բարեփոխումների անցկացման դեպքում ամրապնդվելու էր քրդական բուրժուազիայի դիրքերը՝ իր բացասական հետևանքներով: Ճիշտ է, կային նաև բարեփոխումների իրականացումն արգելակող օբյեկտիվ պատճառներ՝ հեռավորությունը թուրքական ծովափնյա քաղաքներից, լեռնային կտրտված տեղանքը՝ գրեթե զուրկ ժամանակակից ճանապարհներով և երկաթգծային ցանցով: Սակայն թուրքական կառավարությունը ոչինչ չէր անում դրանք շտկելու համար, այլ ընդհակառակը՝ պետական մակարդակով խոչընդոտում էր ճանապարհային և երկաթգծային ցանցի զարգացմանը 4 պատճառով.

1. քեմալական իշխանությունը չէր ցանկանում, որպեսզի քրդաբնակ վիլայեթները տնտեսապես զարգանային և ստեղծվեր նյութական հիմք անկախության պայքարի համար,
2. վախենալով ԽՍՀՄ-ի կամ Մեծ Բրիտանիայի հետ հավանական պատերազմից՝ Անկարան միտումնավոր կերպով չէր զարգացնում տրանսպորտային ցանցը՝ նրանց բանակների հարձակման թափը կոտրելու նպատակով,
3. քանի որ արևելյան վիլայեթները սահմանակից էին Թուրքիայից տնտեսապես ավելի զարգացած Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային և ԽՍՀՄ-ին, Անկարան երկյուղում էր, որ տրանսպորտային համակարգը զարգացնելու դեպքում այդ վիլայեթները տնտեսապես և քաղաքականապես կընկնեին նրանց ազդեցության տակ,
4. իրանական և իրաքյան քրդերի՝ Անկարայի կառավարության դեմ թուրքական քրդերի բարձրացրած հավանական ապստամբությանը մասնակցելու խիստ վտանգավորությունը, ինչպես նաև նրանց շփումների կարևորությունը ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացման գործում, ինչը խախտում էր քեմալական կառավարության որդեգրած՝ թուրքական քրդերին թրքացնելու քաղաքականության իրագործումը:

Արևելյան վիլայեթներում տնտեսության համար կարևոր խոչընդոտ էր նաև ռազմական դրության պահպանումը, որն ուղղված էր հաճախակի դարձած քրդական ապստամբությունները ճնշելուն: Մեծաքանակ ռազմական ուժերի ներկայության պատճառով սովորական երևույթ էր դարձել թալանը և բռնությունը քուրդ խաղաղ բնակչության նկատմամբ: Թուրքական պետության այս քաղաքականության պատճառով վերջիններս ապրում էին ծայրահեղ աղքատ և հետամնաց վիճակում: Նրանց միայն 10 % էր բնակվում քաղաքում: Արևելյան վիլայեթներում ապրողների 94 %-ը գյուղացիներ էին, 1%-ը՝ բանվորներ և արհեստավորներ, ևս 1 %-ը վաճառականներ, 0,5 %-ը՝

ծառայողներ, 0,3 %-ը՝ ազատ մասնագիտություններով զբաղվողներ և 2 %-ը՝ զինվորականներ և ոստիկաններ[60]:

Բնակչության միայն 4 %-ն էր գրագետ (Թուրքիայի մնացած շրջանների 8 %-ի դիմաց), իսկ առավելապես քրդերով բնակեցված Վանի և Հաքյարի վիլայեթներում 1-2 %-ը, ընդ որում, կանանց շրջանում գրագիտությունն 10 անգամ ավելի ցածր էր: Աշխարհիկ դպրոցները քրդաբնակ վիլայեթներում շատ քիչ էին՝ 215-ը՝ 8400 աշակերտներով (այն դեպքում, երբ Թուրքիայի մնացած շրջաններում կար 4660 դպրոց՝ 382000 աշակերտներով)[61], իսկ սովորելու գնալ Թուրքիայի ծովափնյա քաղաքների կամ արաբական պետությունների հոգևոր դպրոցներ կարող էին իրենց թույլ տալ հատուկենտ մարդիկ:

Ողբալի վիճակում էր առողջապահությունը. ամբողջ երկրամասում չկար հիվանդանոց և միայն 1942–1943 թթ. Էրզրումում և Դիարբեքիրում բացվեցին մեկական հիվանդանոց՝ 205 և 3 ծննդատուն՝ 60 մահճակալներով: Բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղվում էր անասնապահությամբ, որը տարվում էր էքստենսիվ եղանակով, ինչի պատճառով տարեցտարի մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազում էր 10 %-ով:

Հողագործությունը ևս գտնվում էր անմխիթար վիճակում: Վարելահողի տակ էր գտնվում հողերի ընդամենը 3 %-ը, այն դեպքում, երբ Թուրքիայի կենտրոնական և արևմտյան վիլայեթներում այդ թիվը հավասար էր 14-ի: Այն նույնպես տարվում էր էքստենսիվ եղանակով, ինչի հետևանքով բերքատվությունը շատ ցածր էր և տարեցտարի այն ավելի էր նվազում: Արևելյան 16 քրդաբնակ վիլայեթներում, որը կազմում էր երկրի տարածքի մոտ 35 %-ը, օգտագործվում էր Թուրքիայում եղած գյուղատնտեսական մեքենաների ընդամենը 1,3 %-ը[62]:

Արդյունաբերություն իր դասական իմաստով գոյություն չուներ, ձեռնարկությունները հիշեցնում էին արհեստանոցներ, որտեղ աշխատում էր միջինը 3 մարդ: Շարունակում էին գոյատևել համքարությունները: 20-ական թվականներին երկրամասում չկար արդյունաբերական ձեռնարկությունների համար հոսանք արտադրող էլեկտրակայան և միայն 30-ականների վերջին Բիթլիսում բացվեց 1 փոքրիկ էլեկտրակայան, այն դեպքում, երբ թուրքաբնակ վիլայեթներում կար

[60] Տես նույն տեղում, էջ 21:

[61] Տես *D. McDowall.* Op. cit., p. 192:

[62] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 16:

72 էլեկտրական: Քաղաքների լուսավորության համար նախատեսված 187 էլեկտրականներից միայն 14-ն էր գտնվում քրդաբնակ վիլայեթներում[63]: Քրդաբնակ վիլայեթների տեսակարար կշիռը արտահանման և ներմուծման մեջ տարեցտարի նվազում էր: Եթե 1930 թ. (երբ սկսվել էր պետականորեն արձանագրվել) այն կազմում էր համապատասխանաբար 5,8 % և 5,6 %, ապա 1940 թ.՝ ընդամենը 0,04 % և 0,2 %:

Ցանկանալով ջլատել և գլխատել քրդական վերնախավին, որոնք կարող էին գլխավորել հակաթուրքական շարժումը, թուրքական իշխանությունները պայքար սկսեցին նրանց դեմ, սակայն այն ներկայացնում էին որպես քաղաքակրթական պայքար տգիտության և հետամնացության դեմ, որի նպատակն էր ճորտատիրության վերացումը: 1924 թ. հոկտեմբերին ԹԱՄԺ-ը ընդունեց հմ. 1505 օրենքը, որը թույլ էր տալիս քուրդ ավատատերերից խլել հողերը և տրամադրել թուրք ներգաղթյալներին[64]: Թուրքական մամուլը 1924 թվականի վերջերից ներկայացնում էր քուրդ գյուղացիների իրավազուրկ կարգավիճակը քուրդ դերեբեյների մոտ և հանգում այն եզրակացության, որ թուրքական պետության սրբազան պարտականությունն է ազատել իր քաղաքացիներին այդ միջնադարյան շղթաներից: Այսպես. կառավարությունը քրդական վերնախավի հանդեպ բռնաճնշումներ իրականացնելու նպատակով ստեղծում էր իրավական հիմք: Այն կոչված էր ձևավորելու երկրի ներսում և Եվրոպայում այն հասարակական կարծիքը, թե Թուրքիայի առաջադեմ և աշխարհիկ իշխանությունները պայքար են մղում խավարամիտ կղերա-ավատատիրական ուժերի դեմ, որոնք ուզում էին վերականգնել Օսմանյան կայսրությունը: Այս ամենը նպատակ ուներ քրդերի դեմ բռնաճնշումներ իրականացնելու ժամանակ զերծ պահել Թուրքիան արտաքին ուժերի միջամտությունից: Մեծ մասամբ թուրքերին հաջողվեց դա իրագործել նաև քրդական վերնախավի շնորհիվ, որոնք հայտարարում էին, թե իրենք պայքարում են քեմալական կառավարության դեմ ոչ թե անկախ Քրդստան ստեղծելու, այլ Օսմանյան կայսրությունը վերականգնելու նպատակով և կապեր էին հաստատել Քեմալին ընդդիմադիր իսլամական-միապետական ուժերի հետ:

1924 թ. Թուրքիայի հանրապետության առաջին սահմանադրության հռչակմամբ ավարտուն տեսք ստացավ պանթուրքիզմի

[63] Տես նույն տեղում, էջ 20:

[64] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 126:

գաղափարախոսությունը, ազգային փոքրամասնությունների իրավազուրկ կարգավիճակը և նրանց ապագան՝ կա՛մ ձուլվել թուրքերի հետ, կա՛մ էլ՝ արտաքսվել: Երկրում պաշտոնապես մոլեգնում էր թուրքական ազգայնականությունը: Հասնելով իր ուզած խաղաղությանը և ամրացնելով իր դիրքերը երկրի ներսում՝ Մ. Քեմալն այլևս կարիք չուներ սիրաշահելու ազգային փոքրամասնություններին: Այժմ նա նույնիսկ լսել չէր ուզում «քուրդ ժողովուրդ» հասկացության մասին. նրա համար Թուրքիայի բոլոր քաղաքացիները թուրքեր էին, կամ՝ պիտի դառնային: Սահմանադրության 68-րդ հոդվածում նշվում էր, որ յուրաքանչյուր թուրքն է ծնվում և ապրում ազատ, իսկ 69-րդ հոդվածը, որ բոլոր թուրքերն են հավասար օրենքի առաջ: 70-րդ հոդվածը ավելի էր կոնկրետացնում այն՝ նշելով, որ անձի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, մամուլի, տեղաշարժման, գործարքների, աշխատանքների, սեփականության, հավաքների, միությունների և ընկերությունների իրավունքներն ու պարտականությունները թուրքերի միակ պարտականություններն են: Ըստ հոդված 88-ի՝ Թուրքիայի բոլոր քաղաքացիները, անկախ ռասայական և կրոնական պատկանելիությունից, թուրքեր են[65]: Ազգային փոքրամասնություններին ձուլելու քաղաքականության իրագործմանն էր կոչված երկրորդ հոդվածը, որտեղ նշվում էր, որ Թուրքիայում պետական լեզուն համարվում է թուրքերենը՝ այսպիսով կոպիտ կերպով ոտնահարելով ազգային փոքրամասնությունների իրավունքները, քանզի ամբողջ գրագրությունը պետք է կատարվեր թուրքերենով, նրանց երեխաները պետք է սովորեին պետական դպրոցներում, որտեղ ուսուցումը կատարվում էր թուրքերենով, իսկ մայրենի լեզվի գործածումն արգելված էր[66]: 1924 թ. ամռանը երկրի տարածքում պաշտոնապես արգելվեց գործածել քրդերենը, բոլոր քրդերը պարտադիր կերպով պետք է սովորեին և խոսեին թուրքերեն: 1925 թ. ամռանը, ելույթ ունենալով «Թուրքական օջախներ»-ի համագումարում, Ի. Ինյոնյուն նշել էր, որ իրենք անթաքույց ու բաց ազգայնականներ են և իրենց վերջնական նպատակն է թուրքացնել Թուրքիայում բնակվողներին[67]:

Ինչ վերաբերում էր քրդերին, ապա Մ. Քեմալը «մոռացել էր», որ ընդամենը 2 տարի առաջ ԹԱՄԺ-ը կողմ էր քվեարկել ինքնավար Քրդստանի օրինագծին և այն պետք է ի կատար ածվեր: Բազմաթիվ

[65] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами:

[66] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, сс. 54- 55:

[67] Տես *Ա. Ա. Колесников.* Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой республики. М., 1984, с. 65:

ազդեցիկ քրդեր վտարվել էին երկրից: Քրդերի համար վիճակը օրըստօրե վատանում էր: Ըստ Քամուրան Բադրխանի. «Լոզանի պայմանագիրը դեռ նոր էր ստորագրվել, երբ Մուսթաֆա Քեմալը կտրուկ շրջադարձ կատարեց համագործակցության քաղաքականությունից դեպի իր խոստումների և ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ թուրքական կառավարության նույնիսկ պայմանագրային պարտավորությունների դրժումը... Երբ թուրքերին հիշեցրին ժամանակին տրված խոստումների մասին, նա (Մուսթաֆա Քեմալը – *Վ. Բ.*) հրամայեց փակել դպրոցները և բանտարկել հայրենասերներին ու ազդեցիկ դեմքերին: Նորից սկսեցին գործել ապօրինություններ... Մի քանի նախկին պատգամավորներ ձերբակալվեցին ու հանձնվեցին ռազմադաշտային դատարանին: Ամբողջ Քրդստանում սկսեցին իրականացվել բռնություններ»[68]:

2.2. Քրդերի ազատագրական շարժման նոր փուլը և համաքրդական ապստամբության նախապատրաստությունները

Քրդերի հանդեպ տարվող այս քաղաքականությունը չէր կարող անպատասխան մնալ:

Քրդական վերնախավի որոշ անդամներ, լինելով քեմալական շարժման մասնակիցներ, այնուամենայնիվ արդեն շարժման վերջին տարիներին հասկանալով, որ Մ. Քեմալը մտադիր չէ կատարել իր՝ քրդերին ինքնավարություն տալու խոստումը, արդեն ձեռնարկում էին գործնական քայլեր նրա դեմ ապստամբելու և անկախ Քրդստան ստեղծելու ուղղությամբ:

Դեռ 1922 թ. աշնանը Ստամբուլում քեմալական իշխանության հաստատումից և քրդական ազգային կազմակերպությունների ջախջախումից հետո Քրդստանի անկախության համար տարվող աշխատանքներն իրենց վրա վերցրեցին քրդաբնակ վիլայեթներում ստեղծված գաղտնի կազմակերպությունները և դերվիշական միաբանությունները: Սա ունեցավ իր դրական արդյունքը, քանի որ ի տարբերություն արևելյան վիլայեթներում ոչ մի ազդեցություն չունեցող Ստամբուլի սալոնային քուրդ մտավորականությունից, պայքարը գլխավորեցին ցեղապետերը, որոնք ունեին հարստություն և իրական զինական ուժ: Այս հանգամանքն ավելի էր վտանգավոր դառնում

[68] Մեջբերումն ըստ՝ *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում:

թուրքերի համար, քանի որ ցեղապետերը, որպես կանոն միաժամանակ նաև կա՛մ կրոնական առաջնորդներ էին՝ շեյխեր, կա՛մ բարձրաստիճան սպաներ, որոնք զբաղեցնում էին բարձր հրամանատարական պաշտոններ թուրքական բանակում: Քիչ չէր նաև զինվորների և կրտսեր սպաների կազմում քրդերի թիվը, որոնց շնորհիվ այս քրդական կազմակերպություններում հաստատվեց զինվորական կարգապահություն և գաղտնապահություն: Շատ կարճ ժամանակահատվածում շարժումը ձեռք բերեց նշանակալի հաջողություններ, քանի որ ի տարբերություն մտավորականներից, զինվորականներն ավելի իրատես էին և կարողանում էին ոչ միայն ծրագրել անհրաժեշտ գործողություններ, այլև՝ իրագործել դրանք: Այդ կազմակերպություններից ամենակենսունակը և ազդեցիկը «Քրդական անկախության ընկերությունն» էր, որն ավելի շատ հայտնի էր «Ազադի» անվանմամբ: Նրա ղեկավարն էր ջիբրան ցեղի ցեղապետ, Էրզրումի կայազորի հրամանատար գնդապետ Հալիթ բեկ Ձիբրանլին: Ղեկավար կազմի մեջ էին մտնում նաև ԹԱՄԺ-ի նախկին պատգամավոր Յուսուֆ Ձիա բեյը Բիթլիսից, Բիթլիսի պատգամավոր Ալի Ռիզան և Քեմալ Ֆևզի բեյը և այլ երևելի քրդեր: Ազադիի ստեղծման տարեթիվը ստույգ պարզված չէ, նրա հավաստի գործունեության մասին տեղեկությունները թվագրվում են 1923 թ., սակայն, ըստ ամենայնի, այն ստեղծվել է ավելի վաղ: Դաշնակցական աղբյուրներում նշվում է 1920 թ. հոկտեմբերը[69], մեկ այլ տվյալներով, որոնք ձեռք է բերել բրիտանական հետախուզությունը, 1921 թ. Էրզրումում[70]: Կա տեսակետ, որ այն ստեղծվել է 1922 թ. հոկտեմբերին[71]:

1924 թ. ամռան վերջին Ազադին լուրջ ուժ էր: Ըստ բրիտանական հետախուզության՝ այն ուներ 23 մասնաճյուղ, որոնցից Սղերդում՝ 5, Բիթլիսում՝ 2, Վանում՝ 7: Մնացած 9 մասնաճյուղերը տեղակայված էին Դիարբեքիրում, Ստամբուլում, Դերսիմում, Կարսում, Խնուսում, Մուշում, Երզնկայում, Մանազկերտում և Խարբերդում: Կազմակերպությունն ակտիվ գաղտնի աշխատանքներ էր տանում քրդական ցեղերի շրջանում համաքրդական ապստամբություն բարձրացնելու նպատակով, որը նախատեսված էր իրագործել 1925 թ. մարտի 21-ին՝

[69] Տես *Կ. Սասունի,* Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները: Պէյրութ, 1968, էջ 242:

[70] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 69:

[71] Տես *С. С. Аванесов.* Положение национальных меньшинств в Турции. Е., 1963, с. 52:

Նովրուզի օրը: Սակայն 1924 թ. օգոստոսին Բեյթ Շեբաբում ասորական ապստամբությունը ճնշող 7-րդ կորպուսի 2-րդ դիվիզիայի 18-րդ գնդի քուրդ սպաների և զինվորների մի մասը, սխալ ընդունելով Ստամբուլից Յուսուֆ Զիայի՝ այդ գնդում ծառայող իր եղբորն ուղարկած հեռագիրը որպես ապստամբության նշան, խռովություն բարձրացրեցին, սակայն աջակցություն չստանալով հարևան քրդական ցեղերից՝ անցան Իրաք և հանձնվեցին բրիտանացիներին:

Այս խռովությամբ բացահայտվեց «Ազադիի» գոյությունը, և թուրքական հատուկ ծառայություններն սկսեցին ուշիուշով հետևել նրա անդամներին: Դեռ ամռան կեսին թուրքական իշխանությունները, լրջորեն անհանգստանալով քրդերի ակտիվությունից, սկզբնական ժամանակաշրջանում փորձում էին խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, քանի որ, նախ, իրենք անհրաժեշտ ուժեր չունեին լայնածավալ ապստամբությունը կանխելու համար և երկրորդ՝ Մոսուլի հարցի վերաբերյալ զեկույց կազմող Ազգերի Լիգայի հանձնաժողովը թուրքական բռնաճնշումների պարագայում վճիռ կկայացներ հօգուտ Մեծ Բրիտանիայի: Քեմալի ջանքերով 1924 թ. օգոստոսի 1-ին Դիարբեքիրում բացվեց թուրք-քրդական կոնգրեսը, որտեղ թուրքական կողմը պատրաստ էր ընդառաջելու քրդերի պահանջներին, իսկ դրանց իրագործման դեպքում քրդերը պարտավորվում էին աջակցել թուրքերին Մոսուլի հարցում[72]:

Սակայն Բեյթ Շեբաբի դեպքերից հետո թուրքական իշխանություններն անցան ավելի կոշտ մեթոդների և սկսեցին ձերբակալություններ կատարել և առաջին հերթին՝ բանակում: Հարցն այնքան լուրջ էր, որ Մ. Քեմալը, աշնանը գտնվելով Էրզրումում, սեփական աչքերով տեսավ իրադրության ամբողջ բարդությունը: Մինչև այդ ստեղծված իրադրության մասին նրան գաղտնի նամակով տեղեկացրել էր խորմեկ ցեղի ղեկավարությունը: Այժմ Քեմալը համոզվեց, որ նամակում շարադրված փաստերը ճշմարտացի են[73]: Նրան հատկապես վրդովեցրել էին Բեյթ Շեբաբի դեպքերը, որոնք լրջորեն հարվածեցին Մոսուլի վիլայեթը Թուրքիային վերադարձնելու ծրագրերին[74]:

Ինչ վերաբերում է իրենց խռովության պատճառներին, ապա քուրդ սպաները նշում էին, որ քեմալական կառավարությունը վերջին

[72] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 75:

[73] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, с. 64:

[74] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 77:

մեկ տարում սաստկացրել էր քրդերի նկատմամբ բռնաճնշումները: Մասնավորապես նրանք նշում էին 11 պատճառ[75]: Այսպիսով՝ իրենց ապստամբությամբ քրդերը կանխեցին քրդական ցեղերի բախումը բրիտանական զորքերի հետ, որոնց մեծամասնությունը ասորիներ էին և հնդկական գնդեր, թուրքական զորքերի ամրանալը ասորական լեռներում, ինչպես նաև թուլացրեցին թուրքական բանակի մարտական ոգին: Սակայն, ըստ ամենայնի, քուրդ սպաները չափազանցում էին՝ հույս ունենալով ապացուցել բրիտանացիներին, որ քրդական շարժումը Թուրքիայում բխում է նաև Բրիտանիայի շահերից և այսպիսով օգնություն ստանալ նրանցից: Բայց Լոզանի պայմանագրից հետո Մ. Քեմալը չէր գնա արկածախնդրության և նոր պատերազմ չէր սկսի աշխարհի ամենահզոր պետության դեմ: Ամենայն հավանականությամբ, Քեմալը ծրագրել էր բրիտանացիների դեմ գործողությունները սահմանափակել Մահմուդ Բարզանջի ապստամբությամբ, որպեսզի Ազգերի Լիգան Թուրքիային վերադարձներ Մոսուլը: Իրականում Բեյթ Շեբաբի դեպքերը անհանգստացնում էին Մ. Քեմալին ուրիշ պատճառով: Այն ցույց տվեց, որ քուրդ զինվորականության մի մասը ցանկանում էր ստեղծել անկախ Քրդստան: Վիճակն ավելի էր բարդանում նաև նրանով, որ երկրի արևելքում տեղակայված զորամասերի անձնակազմերի կեսը քրդեր էին:

Դիարբեքիրի թուրք-քրդական վեհաժողովը ոչ մի արդյունք չտվեց: Նրա ավարտից մի քանի շաբաթ անց թուրքական կառավարության դեմ նորից ապստամբեցին Դերսիմի Քոչգիրիի ցեղերը, որոնց ճնշումը հանձնարարվեց Սվազի բանակի գեներալ-տեսուչ Ձևադ փաշային[76]: Այս փաստը վկայում է այն մասին, որ քրդերն արդեն չէին հավատում Քեմալի խոստումներին, և անվստահության այդ անդունդը օրստօրե մեծանում էր: Քոչգիրիի ապստամբությունը և Բեյթ Շեբաբի դեպքերը լավ առիթ էին թուրքերի համար չկատարելու կոնգրեսում իրենց վրա վերցրած պարտավորությունները: Ավելին, Մուսթաֆա Քեմալի ցուցումով այդ վեհաժողովի օրերին արևելյան վիլայեթներ ուղարկվեցին թուրքական բանակի նոր զորամասեր: Ադանայից երկաթգծով Ռաս ուլ Այն ուղարկվեց 50-60 երկաթուղային վագոն

[75] Ավելի հանգամանորեն տես *M. van Bruinessen.* Agha, Shaikh, and State: The Social and Political Structures of Kurdistan. London and New Jersey, 1992, P. 282:

[76] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 76:

սպառազինություն: Նոյեմբերի 12-ին Դիարբեքիրից Մարդին ուղարկվեց երկու դաշտային թնդանոթ, իսկ 20-ից մինչև 26-ը՝ մեկական հետևակային և հեծելազորային գնդեր: Դեկտեմբերի 14-ին Դիարբեքիր ուղարկվեց 16 միավոր հրետանի[77]: Այս նախապատրաստությունները տեսնելով՝ կոնգրեսին ներկա քրդերի մեծ մասը համոզվեց, որ թուրքերը միտք չունեին կատարելու դրանք: Այս քրդերը արդեն այն դյուրահավատ քրդերը չէին, որոնք, Էրզրումի և Սվասի կոնգրեսների ժամանակ Մ. Քեմալի՝ պատերազմից հետո Քրդստանին ինքնավարության կարգավիճակ շնորհելու խոստումներին հավատալով, մարտնչում էին հույների, հայերի և ֆրանսիացիների դեմ: Անցած տարիները ցույց տվեցին, թե ինչ արժեն Քեմալի խոստումները: Քոչգիրիի ապստամբության ճնշումը, ԹԱՄԺ-ում քրդական վիլայեթներին ինքնավարություն տալու օրինագծի տապալումը, Լոզանի պայմանագիրը, սուլթանության և խալիֆայության վերացումը սառը ցնցուղի ազդեցություն ունեցան անգամ ամենաթրքամետ քրդերի համար: Քեմալն ուղղակի ժամանակ էր շահում, ցանկանում էր կանխել քրդական ապստամբությունը, սին խոստումներով ստանալ ցեղապետերի ռազմական աջակցությունը Մոսուլի համար պայքարում, ինչպես նաև կանխել նրանց միավորումը, ինչի համար այդքան աշխատանք էր տարել «Ազադին»: Եվ քրդական ցեղերի մեծ մասը չմիացավ թուրքերին, այլ սկսեց նախապատրաստվել համաքրդական ապստամբությանը, որը ծրագրել էր «Ազադին»: 1924 թ. սեպտեմբերին Սասունում տեղի ունեցավ խորհրդակցություն, որի ժամանակ ընտրվեցին նոյեմբերին Հալեպում տեղի ունենալիք համագումարի պատգամավորները[78]: Համագումարում կայացվեց երկու կարևոր որոշում: Առաջին որոշման մեջ հստակեցված էին մասնակիցների դերերը և անելիքները ապստամբության ժամանակ, ինչպես նաև նրա սկիզբը՝ 1925 թ. մայիսի 25-ը[*]: Երկրորդ որոշումը վերաբերում էր դաշնակիցներին: Կար երեք ելք՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ և ռուսներ: Առավել մեծ դիմադրության հանդիպեց ռուսների թեկնածությունը: Առաջին աշխարհամարտից եկող թշնամանքին այժմ գումարվել էր բոլշևիկների անհավատությունը, որն անընդունելի էր մահմեդականների համար: Սակայն շեյխ Սայիդը համոզեց մասնակիցներին ընդունել բոլշևիկների մոտ պատվիրակներ ուղարկելու որոշումը, որոնք հասան

[77] Տես նույն տեղում, էջ 157:

[78] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 48:

[*] Այլ աղբյուրներում նշվում է 1925 թ. մարտի 21-ը՝ Նովրուզի տոնի ժամանակ:

Վրաստան և այնտեղ էլ հանդիպեցին նրանց: Բոլշևիկները պատասխանեցին, որ տեղյակ են քրդերի ճակատագրի մասին, սակայն ոչնչով չեն կարող օգնել: Բայց խոստացան, որ ապստամբության դեպքում չեն օգնի քեմալականներին[79]:

2.3. **Շեյխ Սայիդի ապստամբությունը**

Համոզվելով, որ իրադրությունը դուրս է գալիս հսկողությունից՝ Մ. Քեմալը հրամայում է ձերբակալել «Ազադիի» ղեկավարներին: 1924 թ. հոկտեմբերին ձերբակալվում է Յուսուֆ Զիան[*], որը տարվում է Բիթլիսի բանտ, Հաջի Մուսան և էլի մոտ 20 ազդեցիկ քրդեր: Թուրքերը, հավատարիմ մնալով «բաժանիր, որ տիրես» սկզբունքին, Հաջի Մուսայի ձերբակալությունը օգտագործում են քրդական շարժումը պառակտելու համար: Նրան ձերբակալած գեներալ Քազըմ Դիրիքը համաձայնում է բաց թողնել նրան, եթե բաբակուրդի ցեղային միությունը չմիանա «Ազադիին»[80]: Իսկ դեկտեմբերի 20-ի գիշերը ձերբակալվում է Զիբրանլը Հալիթ բեկը[81]: 1924 թ. աշնանը և դեկտեմբերին ձերբակալվում կամ արտաքսվում են բազմաթիվ քուրդ ղեկավարներ, իսկ մյուսները, ինչպես Իհսան Նուրին, իրենք են լքում Թուրքիան: Զիբրանլը Հալիթ բեկի ձերբակալությունից հետո «Ազադիի» նախագահ է ընտրվում շեյխ Սայիդը: Ստեղծված իրավիճակում, չնայած Հալեպի համագումարի՝ 1925 թ. մարտի 21-ի Նովրուզի տոնին ապստամբություն սկսելու որոշմանը, Ազադիի ղեկավարությունը որոշում է սկսել ապստամբությունը և գրավելով Բիթլիսը՝ ազատել Հալիթ բեկին և Յուսուֆ Զիային: Դրա իրագործումը դրված էր Հասանանլը Հալիթ բեկի վրա, իսկ շեյխ Սայիդը պետք է գրավեր Դիարբեքիրը և կապեր հաստատեր Սիրիայի քրդերի հետ: 1925 թ. հունվարի 4-ին Բալուի

[79] Տես *M. van Bruinessen.* Op. cit., p. 280:

[*] Յուսուֆ Զիա (1882–1925)՝ թուրքական և քրդական քաղաքական գործիչ: Ազգայնական շարժման ժամանակ աջակցել է Մ. Քեմալին և 1920 թվականի ընտրություններում հաղթելով՝ դարձել ԹԱՄԺ առաջին նստաշրջանի պատգամավոր: Սակայն հետագայում դարձրել է Քեմալի քաղաքական հակառակորդը, վերադարձել իր հայրենի Բիթլիս և դարձել «Ազադիի» անդամ: Ձերբակալվել է 1924 թ. հոկտեմբերին և Անկախության դատարանի որոշմամբ մահապատժի է ենթարկվել 1925 թ. ապրիլի 14-ին

[80] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 126:

[81] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, с. 64:

սանջակի Քըրըքիանե գյուղում տեղի է ունենում ցեղապետերի խորհրդակցություն:

Սակայն քեմալական իշխանությունները տեղյակ էին այս ամենի մասին և միակ ճիշտ որոշումն էր սադրել վաղաժամ ապստամբություն, քանի դեռ քրդական ցեղերը չէին միավորվել, ինչը և տեղի ունեցավ 1925 թ. փետրվարի 5-ին, երբ շեյխ Սայիդը որոշ ցեղապետերի և 100 հեծյալների ուղեկցությամբ ժամանեց Փիրան գյուղը՝ իր եղբայր Աբդուռահմանի մոտ: Նույն օրը Փիրան ժամանեց 15 ժանդարմից բաղկացած մի ջոկատ՝ 2 սպաների հրամանատարությամբ, որոնցից մեկը պահանջեց շեյխ Սայիդից իրենց հանձնել սպանության մեջ մեղադրվող 10 քրդերին: Շեյխը խնդրեց նրանց որպես իր հանդեպ հարգանքի նշան չձերբակալել այդ անձանց: Սակայն թուրք սպան հայտարարեց, որ ինքը չի հարգում ոչ մեկին, բացի հանրապետության օրենքներից և կրկնեց իր պահանջները: Որպես արդյունք՝ փետրվարի 8-ին տեղի ունեցավ փոխհրաձգություն, որի ժամանակ, ըստ թուրքական Գլխավոր շտաբի, վիրավորվեց երկու զինվոր, իսկ մյուսները՝ գերեվարվեցին[82], իսկ ըստ Վ. Շադիլլիլի՝ սպաներից մեկը և երկու զինվորներ զոհվեցին, իսկ մնացած զինվորները մյուս սպայի հետ գերեվարվեցին[83]: Իրադարձությունների այսպիսի զարգացմանը դեմ էր շեյխ Սայիդը, որովհետև քրդերը դեռ պատրաստ չէին ապստամբությանը: Նա շտապ դուրս եկավ դեպի Գենջ՝ կանխելու ապստամբությունը: Սակայն նրա եղբայր շեյխ Թահիրը փետրվարի 10-ին զավթեց Լիջեից գնացող փոստը, իսկ հաջորդ օրը՝ Գենջի փոստատունը[84], որտեղ հանդիպելով շեյխ Սայիդին՝ նրան հանձնեց այդ փոստի փաստաթղթերը և փողերը[85]: Շեյխ Սայիդն ստիպված էր ապստամբության հրաման տալ: Այն տարածվեց 14 վիլայեթներում՝ ընդգրկելով 35 քուրդ սուննի ցեղեր՝ 10 հազար մարտիկներով[86]: Ապստամբության տարածքն ընդգրկում էր 50-60 հազ. քառ. կմ[87]: Քրդերն արագորեն մաքրեցին շրջանը թուրքական զորքերից և

[82] Տես “Genelkurmay belgelerinde Kürt isyanları”, cilt I. İstanbul, 1992, s. 126:

[83] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 77:

[84] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 146:

[85] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 68:

[86] Տես *М. Лебский.* Курды. Потерянные на Ближнем Востоке. М., 2016, с. 56:

[87] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո: Ե., 2008, էջ 344:

շարժվեցին դեպի Դիարբեքիր, որը հաղթանակի դեպքում պետք է դառնար ապագա Քրդստանի մայրաքաղաքը:

1925 թ. փետրվարի 14-ին տասը հազար մարտիկներով շեյխ Սայիդը գրավում է Գենջը[88], իսկ արդեն 22-ին Հանիի լեռնանցքում տեղի է ունենում առաջին բախումը քրդական ջոկատների և թուրքական կառավարական ուժերի միջև: Դեռ Փիրանի դեպքերից մի քանի օր անց թուրքական հրամանատարությունը, չիմանալով ապստամբության իրական ծավալների մասին[89], այնտեղ է ուղարկում 21-րդ հեծելազորային գունդը՝ բաղկացած 120-130 հեծյալներից, ինչպես նաև 7-րդ բանակային կորպուսից 70-80 հեծյալներից բաղկացած մի հեծելավաշտ դեպի Արգանա Մադեն: Հանիի լեռնանցքում կարճատև ընդհարման ընթացքում թուրքական հեծելագունդը պարտություն է կրում և ստիպված էր նահանջել դեպի հարավ, որտեղ էլ վերակազմավորում է երկու հեծելավաշտի: Որպես երրորդ հեծելավաշտ նրան է միացվում 7-րդ կորպուսի հեծելավաշտը, որը նույնպես քրդերի ճնշման տակ նահանջել էր: Գնդի հրամանատար լեյտենանտ Հ. Հյուսնին ազատվում է իր պաշտոնից, ձերբակալվում և տեղափոխվում Դիարբեքիրի բանտ: Այս պարտությունների հետևանքով առաջին հեծելազորային դիվիզիան, որի կազմի մեջ էին 11-րդ և 14-րդ հեծելազորային գնդերը, ընկնում են ծանր դրության մեջ և ստիպված մարտական գործողություններ են վարում իրենց համար ոչ շահավետ պայմաններում: Դիվիզիան, որի տեղակայման վայրը Մարդինն էր, նույնպես շարժվում է դեպի իրանական սահման, սակայն Դիարբեքիրից դեպի Հանիի լեռնացքի միջև ընկած վայրում փետրվարի 22-ից մինչև 27-ը տեղի ունեցած ճակատամարտում կատարյալ պարտություն է կրում և ստիպված նահանջում է դեպի Մարդին՝ վերակազմավորվելու: Թուրքական միայն մեկ հեծելավաշտի է հաջողվում երկու սպաների գլխավորությամբ առանց կորուստների նահանջել Խարբերդ: Երկու սպա սպանվում են, 26-ը՝ գերեվարվում, 14-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Քազըմը՝ վիրավորվում, իսկ 11-րդ գնդի հրամանատարը՝ կորչում: 5 սպաներ, որոնք փախել էին մարտի դաշտից, բանտարկվեցին Դիարբեքիրի բանտում[90]: Քրդերի ձեռքն

[88] Տես *М. А. Гасратян.* Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида). «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 13: Ե., 1985, էջ 43:

[89] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 78:

[90] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 147:

անցան 13 թնդանոթ, 34 գնդացիր, 1300 հրացան, 140000 փամփուշտ, 470 ձի, 120 ջորի և այլ ավար[91]: Ճակատամարտից հետո քրդական ուժերը շատ արագ հայտնվեցին Դիարբեքիրի մոտ: Փետրվարի 28-ին Դիարբեքիրը գրավելու նպատակով Թալա վայրում շեյխ Սայիդը կենտրոնացրեց իր գլխավոր ուժերը:

Պետք է նշել, որ Ֆեթհի բեյի կառավարությունը չէր գիտակցում ապստամբության իրական ծավալները, և հույս ուներ ճնշել ապստամբությունը տեղում եղած ուժերով, այդ իսկ պատճառով մինչև մարտի առաջին կեսը քրդական ուժերը կարողանում էին պարտության մատնել թուրքերին: Մինչև մարտի 3-ը, ինչպես ըստ թուրքական պաշտոնական, այնպես էլ ըստ բրիտանական հետախուզության տվյալների, թուրքական զորքերի թվաքանակը չէր անցնում 20 հազարը, որից 12 հազարն էր կռվող ուժ, իսկ մնացածները թիկունքային և այլ ոչ մարտական ստորաբաժանումների ծառայողներ էին, որոնց գերակշիռ մասը զինված չէր: Այսպիսով՝ սկզբնական ժամանակաշրջանում թուրքերի և քրդերի մարտական ուժերը հավասար էին, իսկ եթե դրան գումարենք նաև այն, որ զինվորների և սպաների մի մասը քրդեր էին և Քեմալին ընդդիմադիր թուրքեր, իսկ քուրդ ապստամբները՝ տեղանքին ավելի լավ ծանոթ և ազգաբնակչությունից ստանում էին մեծ աջակցություն, ապա ապստամբության սկսման օրից ընդամենը 20 օր անց Դիարբեքիրի պաշարումը ավելի քան տրամաբանական էր: Միայն փետրվարի վերջին օրերին թուրքական կառավարությունը սկսեց մասնակի զորակոչ կատարել 8-9 դիվիզիան համալրելու նպատակով (մոտ 35000 մարդ): Երբ փետրվարի 18-ին ԹԱՄԺ-ի պատգամավորներից մեկը շեյխ Սայիդի ապստամբության վերաբերյալ հարց ուղղեց Ներքին գործերի նախարար Ռեջեփ Փեքերին[*], նա պատասխանեց, որ Գենջում հայտնվել է մի ավազակ շեյխ, որն իր օգնականների հետ թալանում է փոստային բաժանմունքները, սակայն շատ շուտով նրան կվերացնեն[92]: Թուրքական կառավարությունն ապստամբությունն այլ երկրներին ներկայացնում էր որպես նոր իշխանությունից դժգոհ հերթական քուրդ շեյխի

[91] Տես «Դրօշակ»: Փարիզ, 1925, հմ. 4, էջ 126:

[*] Մեհմեթ Ռեջեփ Փեքեր (1889–1950)՝ թուրք ռազմական և պետական գործիչ: Քեմալի կառավարման ժամանակ զբաղեցրել է կարևոր պետական պաշտոններ: 1942–1943 թվականներին Թուրքիայի ներքին գործերի նախարար էր: 1946 թվականի օգոստոսի 7-ին բազմակուսակցական շրջանում դարձել է առաջին վարչապետը, այդ պաշտոնը զբաղեցրել է մինչև 1947 թվականի սեպտեմբերի 7-ը: 1948 թվականին նա հեռացել է քաղաքական կյանքից:

[92] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 16:

անհնազանդություն: Մասնավորապես՝ ԽՍՀՄ-ում Թուրքիայի հավատարմատար էնիս բեյը ՌՈՍՏԱԳ-ին տված հարցազրույցում նշում էր, որ կառավարության համար վտանգ և երկրի համար անդորրության խաթարում այդ շարժումը չի կարող առաջ բերել, քանի որ բացառությամբ մի փոքր հատվածի, բնակչության գերակշիռ մեծամասնությունը դեմ է այդ հետադիմական կրոնական ապստամբությանը, և համոզմունք հայտնում, որ այդ ապստամբությունը արագ կճնշվի[93]: Կառավարությունը հրահանգել էր բոլոր ՁԼՄ-ներին, ինչպես նաև իր դեսպանատներին որպես պաշտոնական տեսակետ ապստամբությունը ներկայացնել որպես կրոնական, այլ ոչ թե ազգային շարժում, քանի որ հակառակ դեպքում Թուրքիան ստիպված կլիներ ընդունել քրդական պրոբլեմի առկայությունն իր երկրի ներսում, որը նրանք ժխտում էին՝ ներկայացնելով քրդերին որպես իրենց ցեղակից ժողովուրդ՝ լեռնային թուրքեր, որոնք չէին ցանկանում դուրս գալ Թուրքիայի կազմից: Նույնիսկ 55 տարի անց, երբ Թուրքիան ընդունել էր քրդերի իրանախոս ժողովուրդ լինելու փաստը, ապստամբության բնույթի պաշտոնական տեսակետը չէր փոխվել[94]: Եվ չնայած թուրքական իշխանություններն ամեն քայլափոխի հաղթական ելույթներ էին ունենում՝ հայտարարելով, թե ապստամբության ճնշումն օրերի հարց է, սակայն գիտակցում էին, որ դրությունը շատ լուրջ է: Նրանցից առաջինն իհարկե Մ. Քեմալն էր, որը միանգամից ձեռնարկեց շատ լուրջ միջոցներ: Արդեն 1925 թ. փետրվարի 21-ին նրա խնդրանքով Ստամբուլից շտապ Անկարա ժամանեց Ի. Ինյոնյուն: Խնդիրն այնքան հրատապ էր Քեմալի համար, որ նա Թուրքիայի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության հետ միասին (բացի վարչապետ Ալի Ֆեթհի Օքյար* բեյից) ժամանել էին Անկարայի կայարան՝ դիմավորելու նրան[95]: Հանդիպման ժամանակ Մ. Քեմալը Ի. Ինյոն-

[93] Տես «Заря Востока». Тифлис, 01.03.1925, № 810, с. 1:

[94] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 70:

* Ալի Ֆեթհի Օքյար (1880–1943)՝ թուրք պետական գործիչ և դիվանագետ, Թուրքիայի երկրորդ վարչապետը (1924-–1925) և Թուրքիայի խորհրդարանի երկրորդ նախագահը: 1922 թվականի հոկտեմբերին նշանակվել է Թուրքիայի ներքին գործերի նախարար: 1923–1924 և 1924–1925 թվականներին՝ Թուրքիայի վարչապետ: Միաժամանակ այդ պաշտոնը համատեղել է երկրի ազգային պաշտպանության նախարարի պաշտոնի հետ (1924–1925): Այդ նշանակումների միջև ընկած ժամանակահատվածում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ էր: 1939–1941 թվականներին զբաղեցրել է Արդարադատության նախարարի պաշտոնը:

[95] Տես *M. Toker.* Şeyh Sait ve isyanı. Ankara, 1968, s.14:

յուին ներկայացրեց ապստամբության իրական ընթացքը, ինչպես նաև այն, որ վարչապետ Ֆեթիի բեյը չի կիսում իր անհանգստությունը և համարում է ապստամբությունը տեղական նշանակության անկարգություն: Ինյոնյուն, սակայն, ամբողջովին կողմնակից էր Քեմալի ծրագրերին: Ավելին, նրանք հանգեցին այն եզրակացության, որ պետք է մեկընդմիշտ արմատախիլ անել ոչ միայն այս քրդական ապստամբությունը, այլև ցանկացած հակակառավարական ելույթ կամ ընդդիմադիր ուժերի գործունեություն: Ընթրիքի ժամանակ նրանց միացավ ԹԱՄԺ-ի նախագահ Քյազըմ Օզալփ* փաշան: Նրանք ուսումնասիրում էին այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեին իրադրությունը շտկելու նպատակով: Հաջորդ օրը՝ փետրվարի 22-ին, տեղի ունեցավ ԹԱՄԺ-ում ժողովրդա-հանրապետական կուսակցության խմբակցության նիստը, որին ներկա էին նաև Մ. Քեմալը և Ի. Ինյոնյուն: Խնդրի շրջանակներում պատգամավորների և կառավարության անդամների միջև տեղի ունեցան մտքերի փոխանակումներ: Երեկոյան Մ. Քեմալի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, որին այս անգամ ներկա էր նաև վարչապետ Ֆեթիի բեյը, քննարկվեցին ապստամբությունը ճնշելուն ուղղված քայլերը: Կարծիքները կիսվեցին երկու մասի: Քեմալը, Ինյոնյուն, Քյազըմ փաշան, ինչպես նաև Մահմուդ էսադ բեյը** այն կարծիքին էին, որ պետք է ձեռնարկել արտակարգ միջոցառումներ, սակայն Ֆեթիի բեյը գտնում էր, որ պետք չէ ուռճացնել դեպքերը, հատկապես՝ թուրքական մամուլում, քանի որ դրանք ստեղծում են լարվածություն երկրի քաղաքական կյանքում[96]: Մի քանի ժամ անց՝ փետրվարի 23-ին, տեղի ունեցավ նախարարների խորհրդի նիստ, որին ներկա էր նաև Գլխավոր շտաբի պետ Մուսթաֆա Ֆևզի Չաքմաքը***: Կառավարությունը որոշում կայացրեց

* Քյազըմ Ֆիքրի Օզալփ (1882-1968)՝ թուրք քաղաքական և ռազմական գործիչ, Միլլի շարժման առանցքային դեմքերից մեկը: Հույների կողմից Իզմիրի գրավման ժամանակ եղել է դրա դեմ դիմադրություն կազմակերպիչներից մեկը: 1921 թ. Սաքարյայի ճակատամարտից հետո ստացել է գեներալի զինվորական կոչում: 1921 – 1925 թթ. եղել է Թուրքիայի պաշտպանության նախարարը, իսկ 1924 – 1935 թթ.՝ ԹԱՄԺ-ի նախագահը: 1935 – 1939 թթ. նորից դարձել է պաշտպանության նախարար:

** Մահմուդ էսադ Բոզքուրտ (1892–1943)՝ թուրք քաղաքական գործիչ, իրավաբան և դասախոս: 1919 թ. հույների կողմից Իզմիրը գրավելուց հետո եկել է Թուրքիա և միացել Քեմալի շարժմանը: 1920 թ. մինչև իր մահն անընդմեջ եղել է ԹԱՄԺ-ի պատգամավոր: 1922–1923 թթ. զբաղեցրել է էկոնոմիկայի նախարարի, իսկ 1924 – 1930 թթ.՝ Արդարադատության նախարարի պաշտոնը:

[96] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 80:

*** Մուսթաֆա Ֆևզի Չաքմաք փաշա (1876–1950)՝ օսմանյան և թուրք ռազմա-

ապստամբած շրջաններում մեկ ամսով հայտարարել արտակարգ դրություն: Ըստ Սահմանադրության 86-րդ կետի՝ նման որոշումը կյանքի կոչելու համար այնպայման անհրաժեշտ էր ԹԱՄԺ-ի հաստատումը: Նույն գիշերը, վարչապետ Ֆեթիի բեյի ստորագրությամբ, որոշումն ուղարկվեց ԹԱՄԺ՝ հաստատման, ինչը շատ արագ կերպով կատարվեց: Որոշման մեջ ասվում էր, որ էրզանի վիլայեթի մի մասում սկսված ապստամբությունն արդեն տարածվել է Դիարբեքիր, Էլյազիգ, Գենջ վիլայեթներում, և քանի որ այն միտում ունի տարածվելու նաև Մուշ, Էրզանի, Դերսիմ, Դիարբեքիր, Մարդին, Ուրֆա, Սիվերեք, Սիիրտ, Բիթլիս, Վան, Հաքյարի վիլայեթներում, ինչպես նաև Էրզրում վիլայեթի Քղի և Խնուս սանջակներում, թուրքական կառավարությունը որոշել է վերոհիշյալ շրջաններում մեկ ամսով հայտարարել արտակարգ դրություն[97]: Նշված վիլայեթներում ստեղծվեցին ռազմական դատարաններ, որոնք պետք է քննեին միայն ապստամբության հետ կապված հանցագործությունները: Հաջորդ օրը՝ փետրը-վարի 24-ին, տեղի ունեցավ ԹԱՄԺ-ում ԺՀԿ խորհրդարանական խմբակցության նիստ, որտեղ շեյխ Սայիդի ապստամբության առնչությամբ բացատրություններ տվեցին վարչապետ Ֆեթիի բեյը և խմբակցության նախագահ Զեմիլ բեյը: Եվ քանի որ ապստամբությունն ավելի էր տարածվում և սպառնալից դառնում թուրքական իշխանությունների համար, Ֆեթիի բեյն այժմ չէր պիտակավորում ապստամբությունը որպես ավազակային ասպատակություն: Այժմ նա այդ ապստամբությունն անվանում էր հետադիմական և որպես դրա ապացույց նիստում ընթերցում է շեյխ Սայիդի կոչը, որտեղ վերջինս կոչ էր անում ստեղծելու անկախ Քրդստան, վերականգնելու խալիֆայությունը, շարիաթը և պայքարելու Անկարայի անհավատ իշխանության դեմ[98]: Նիստի մասնակիցները միահամուռ էին այն բանում, որ ապստամբությունը քրդերի կրոնական մոլեռանդության և շահագրգիռ տերությունների սադրանքների պտուղն է և որ դրա դեմ պետք է պայքարել ամենաանողոք ձևերով:

կան գործիչ, մարշալ: 1918 թ. ստացել է Ֆերիքի՝ դիվիզիոնային գեներալի կոչում: Քեմալական շարժման ակտիվ մասնակիցներից և Քեմալի ամենահավատարիմ աջակիցներից մեկն է: 1920–1924 թթ. եղել է ԹԱՄԺ-ի պատգամավոր, իսկ 1921–1922 թթ.՝ Թուրքիայի վարչապետ: 1924 թ. վերջնականապես հեռացել է քաղաքականությունից և իրեն նվիրել բանակաշինությանը: 1924–1944 թթ. եղել է թուրքական բանակի Գլխավոր շտաբի պետը:

[97] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 16:

[98] Տես *M. Toker.* Op. cit., p. 22:

Որպես ապստամբության սադրիչ՝ թուրքական իշխանությունները մեղադրում էին Մեծ Բրիտանիային: Պատճառը Մոսուլի վիլայեթի համար Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի միջև ընթացող պայքարն էր: Ազգերի Լիգան հանձնաժողով էր ուղարկել Իրաք և որպեսզի, ըստ նրանց, իրաքյան քրդերը թշնամանային թուրքերի հետ ու հանձնաժողովը Մոսուլի վիլայեթը Իրաքի կազմում թողնելու ոչ թուրքամետ եզրակացություն կազմեր, բրիտանացիները կազմակերպել էին շեյխ Սայիդի ապստամբությունը: Մասնավորապես նման կարծիք ուներ 1925 թ. արտաքին գործերի նախարար Շյուքրյու Քայան*: Նա հավելում էր նաև, որ բրիտանացիները ոչ միայն Մոսուլի, այլև Իրանի նավթաբեր շրջանները զավթելու համար ոտքի են հանում այդ շրջանների քրդերին ևս[99]:

Գլխավոր շտաբը հավանական էր համարում նաև Հունաստանի և օսմանյան պարտքատերերի մասնակցությունը՝ բնակչության փոխանակման և պարտքերը քեմալականների կողմից սպասարկելու բանակցություններում Թուրքիայի դիրքերը թուլացնելու նպատակով: Կար նաև երրորդ վարկածը, ըստ որի այս ապստամբությամբ Մեծ Բրիտանիան ցանկանում էր քրդական պատնեշ ստեղծել և իրարից անջատել Թուրքիան և Խորհրդային Միությունը, քանզի նրանց միասնական ուժը խիստ թուլացնում էր Մեծ Բրիտանիայի դիրքերը Մերձավոր Արևելքում[100]:

Որպես ներքին պատճառներ նշվում էին քրդերի շրջանում թանզիմաթի ժամանակաշրջանից սկսված անկախության համար շարժումները, որոնք մեծ թափ ստացան 1880-ական թվականներին: Հատկանշական է, որ քրդական ազատագրական շարժման մեղավորը,

* Շյուքրյու Քայա (1883–1959)՝ թուրք քաղաքական և պետական գործիչ, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում նշանակվել է ցեղերի և փախստականների տարհանման տնօրեն: Այս պաշտոնում նա համակարգում էր հայերի բռնագաղթի գործնական մասը: 1915 թվականի սեպտեմբերին նշանակվել է Սիրիայում հայերի համակենտրոնացման ճամբարների կառավարիչ և կանոնակարգել հայերի սպանությունները ճամբարներում, որպեսզի նրանց թիվը տեղի բնակչության թվի համեմատ աճ չգրանցեր: 1918 թ. նրան Դաշնակիցները ձերբակալել են որպես ռազմական հանցագործ և աքսորել Մալթա, սակայն նրան հաջողվել է փախչել այնտեղից և գալով Անատոլիա՝ միանալ Քեմալի ազգայնական շարժմանը: Քեմալական ժամանակաշրջանում եղել է գյուղատնտեսության (1924–1925), արտաքին գործերի (1925–1927) և ներքին գործերի նախարար (1927–1938): 1935-1939 թթ. նաև իշխող Ժողովրդահանրապետական կուսակցության գլխավոր քարտուղարներ:

[99] Տես “TBMM Gizli Celse Zabıtları”, cilt 4. Ankara, 1985, s. 474:

[100] Տես “Genelkurmay belgelerinde Kürt isyanları”, cilt I, s. 114:

ըստ թուրքական Գլխավոր շտաբի, սուլթան Աբդուլ Համիդ II էր, որը որպես հայկական ազատագրական շարժման հակակշիռ սկսեց հովանավորել քրդական ցեղերին, մասնավորապես՝ քուրդ ցեղապետերի շատ որդիներ կրթություն ստացան Ստամբուլի Աշիրեթական դպրոցում, որտեղ հաղորդակից դարձան եվրոպական ազգային գաղափարներին, ինչն էլ իր արդյունքները տվեց Առաջին աշխարհամարտից հետո, երբ Օսմանյան կայսրությունը փաստացի կործանվել էր[101]: Որպես մյուս շատ կարևոր ներքին պատճառ նշվում է արևելյան վիլայեթների բնակչության դաստիարակության և բարքերի հետամնացությունը, քանի որ նա չընդունեց և չընկալեց Մուսթաֆա Քեմալի իրագործած բարեփոխումները՝ շարիաթի արգելումը, սուլթանության և խալիֆայության վերացումը, ինչպես նաև արևմտյան մշակույթի տարրերի մուտքը արևելյան վիլայեթներ: Ապստամբությունից երկու շաբաթ առաջ պատգամավոր Զիյա էֆենդին զգուշացնում էր, որ այդ բարեփոխումները հանգեցնելու են ապստամբության: Բայց նրա ելույթն արժանացավ իշխող ԺՀԿ պատգամավորների բացասական գնահատականին[102]:

Պատճառներից անցնելով ապստամբության նպատակներին՝ Մ. Քեմալը և նրա աջակիցները համոզված էին, որ ապստամբները մտադրվել էին կապեր հաստատել իրենց ընդդիմադիր թուրքական ուժերի հետ, որպեսզի վճռական պահին նրանք էլ ապստամբություն բարձրացնեին երկրի թուրքական շրջաններում և մեկ շաբաթվա ընթացքում հասնեին հաղթանակի: Ըստ ապստամբների և բրիտանացիների մշակված ծրագրի՝ սեիդ Աբդուլքադիրը ապստամբությունը սկսվելուն պես ոտքի պետք է հաներ Ստամբուլի քրդերին, որոնց կմիանային Քեմալին ընդդիմադիր թուրքերը և միասին գրավելով Ստամբուլը՝ կշարժվեին և ոտքի կհանեին Բուրսայի, Իզմիրի ու Քոնիայի բնակչությանը և արդեն հսկայական ուժերով գրավեին Անկարան և վերականգնեին Օսմանյան կայսրությունը:

Քեմալականները համոզված էին, որ այս ամենում ակտիվ մասնակցություն ուներ Օսմանյան վերջին սուլթան Վահդեդդինը*, որը օգտվում էր անգլիացիների մեծ աջակցությունից և Ստամբուլում

[101] Տես նույն տեղում, էջ 116:

[102] Տես նույն տեղում, էջ 123-124:

* Սուլթան Մեհմեդ VI Վահդեդդին (1861-1926)՝ օսմանյան վերջին սուլթանը 1918-1922: Սուլթան Աբդուլ Մեջիդի որդին: Սուլթանության վերացումից հետո, ԹԱՄԺ-ի ընդունած օրենքի համաձայն, օսմանյան դինաստիայի բոլոր ներկայացուցիչները սուլթան Մեհմեդ VI-ի գլխավորությամբ արտաքսվեցին Թուրքիայից: Մահացել է Սան Ռեմոյում:

ստեղծել էր «Իլլա ի վաթան» կազմակերպությունը, որը սակայն իրականում «Մյուդաֆֆա ի հուքուք Հիլաֆեթ ի Քյուբրա» անվանմամբ գաղտնի կազմակերպություն էր[103]: Սակայն վերջինիս գործունեության արգելումից հետո նրա կողմնակիցները փախան Բուխարեստ, որտեղ հյուրանոցներից մեկում տեղի ունեցավ «Խալիֆաթ» անվանումը կրող համագումար: Ներքին գործերի նախկին նախարար Ահմեդ Ալիի նախագահությամբ անցկացված այդ համագումարում որոշում կայացվեց օգնել Քեմալին ընդդիմադիր ուժերին նրա իշխանությունը ոչնչացնելու նպատակով: Ինչ վերաբերում է քուրդ ապստամբների հետ կապերին, ապա նրանք շեյխ Սայիդի հետ կապ էին պահպանում սեիդ Աբդուլքադիրի միջոցով, որը որպես ապստամբության ընդհանուր ղեկավար, ղեկավարում էր այն Ստամբուլից: Ըստ պլանի՝ ապստամբությունը պետք է տեղի ունենար 1926 թվականին, երբ իրենք կավարտեին ռազմական նախապատրաստությունները և կնախապատրաստեին թուրքական հասարակությանը[104]:

Ակնհայտ էր, որ քեմալական իշխանությունն սրանով ցանկանում էր քրդական ապստամբությունը կապել սուլթանական շրջանակների և բրիտանական հատուկ ծառայությունների հետ՝ այսպիսով ներկայացնելով շեյխ Սայիդի ապստամբությունը ոչ թե որպես քրդերի ազգային ազատագրական պայքար, այլ Սևրի պայմանագիրը ստորագրած դավաճան սուլթանական իշխանությունների և բրիտանական հատուկ ծառայությունների ծրագիր՝ Օսմանյան կայսրությունը վերականգնելու նպատակով:

Հասկանալի էր, որ ԹԱՄԺ-ում պատգամավորների գերակշիռ մեծամասնությունը կողմ էր ապստամբության ամենադաժան ճնշմանը, որպեսզի քրդերի շրջանում մեկընդմիշտ ոչնչացվեր ազգային որևէ շարժում սկսելու ցանկությունը: Սակայն քիչ թվով ԹԱՄԺ-ի պատգամավորներ կային, որոնք կոչ էին անում ուղղելու թույլ տրված սեփական սխալները, որոնք այդ ապստամբության պատճառ դարձան, ստեղծելու այնպիսի կառավարման ձև, որը կհաստատեր արդարություն այդ վիլայեթներում, կվերացներ չարաշահումները, կաշառակերությունը, այլապես ապստամբություններն այդ երկրամասում կընդունեին շարունակական բնույթ: Պատգամավորներ Իլյաս Սամի և Հաջի Էլյաս էֆենդիներն իրենց ելույթներում նշեցին, որ քրդական ապստամբության պատճառները քաղաքական են, իսկ կրոնական կոչերն ընդհամենը ապստամբության ձևական կողմն է[105]: Սակայն

[103] Տես նույն տեղում, էջ 119:

[104] Տես նույն տեղում:

[105] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 82:

այդ կարծիքներն աջակցություն չստացան պատգամավորների մեծամասնության շրջանում և երբ արդարադատության նախարար Մահմուդ էսադ բեյը ընթերցեց կառավարության կազմած օրինագիծը, ձայների գերակշիռ մեծամասնությամբ այն հաստատվեց: Այն ուներ երկու կետ: Առաջին կետում ասվում էր, որ հայրենիքի դեմ հանցագործություն է համարվում ցանկացած գործողություն, որը քաղաքական նպատակների համար շահարկում է ժողովրդի կրոնական զգացմունքները, իսկ երկրորդ կետում, որ բոլոր նրանք, ովքեր քաղաքական նպատակներով օգտագործում են կրոնը որպես գործիք, ստեղծում են կրոնական ընկերություններ, հրատարակում են հոդված կամ այլ արարքներ, դիտարկվում են որպես պետական դավաճան[106]: Հաջորդ օրը՝ փետրվարի 25-ին, կառավարությունը այս օրինագիծը որպես փոփոխություն մտցրեց դեռ 1923 թ. ընդունված հմ. 556 օրենքի առաջին հոդվածում (հայրենիքի դավաճանություն)[107]:

Մ. Քեմալը հմտորեն օգտագործեց այս ապստամբությունը՝ առաջացնելով քաղաքական ճգնաժամ՝ ԹԱՄԺ-ում ընդդիմությունը (ընդ որում՝ նաև ԺՀԿ-ի ներսում[108]) ջախջախելու նպատակով, ինչը նրան հաջողվեց. ընդդիմադիր ԱՀԿ կուսակցության գործունեությունն արգելվեց[109], իսկ ԺՀԿ չափավորական թևի ղեկավար վարչապետ Ֆեթիի բեյը հայտնեց իր հրաժարականի մասին[110]: Մարտի 3-ին կառավարության գլուխ կանգնեց կուսակցության աջ ծայրահեղական թևը՝ Իսմեթ Ինյոնյուի գլխավորությամբ: ԹԱՄԺ-ը հաստատեց հասարակական կարգի պահպանման մասին օրենքը (հմ. 578), ըստ որի՝ գործադիրին իրավունքներ էին տրվում ոչ միայն ապստամբությունների դեմ պայքարելու, այլև քաղաքական ընդդիմության հետ հաշվեհարդար տեսնելու համար և նա հաշվետու էր միայն երկրի նախագահին[111]: Ստեղծվեցին Անկախության դատարաններ. առաջինը՝ Անկարայում, որի ընդունած մահվան դատավճիռները պետք է հաստատեր ԹԱՄԺ-ը, իսկ երկրորդը՝ Դիարբեքիրում, որն ուներ անսահմանափակ իրավասություններ: Նրանց անդամներն ընտրվում էին ԹԱՄԺ-ի

[106] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 17:

[107] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами:

[108] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 19:

[109] Տես նույն տեղում, էջ 49:

[110] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида), с. 48:

[111] Տես *Д. Е. Еремеев.* Этногенез турок. М., 1971, с. 124:

պատգամավորներից[112]: Մի քանի օր անց կառավարության հրամանով երկրի ամբողջ տարածքում փակվեցին ընդդիմադիր բոլոր թերթերը և ամսագրերը: Փակելով ընդդիմադիր թերթերը՝ Մ. Քեմալը և Ի. Ինյոնյուն սկսեցին ապստամբության ճնշումը: Քեմալի մտերիմ Քեմալեդդին Սամի փաշան նշանակվեց պատժիչ զորքերի հրամանատար: Մարտի 7-ին կառավարության որոշմամբ հայտարարվեց մասնակի զորահավաք, իսկ մարտի 8-ին Մ. Քեմալը դիմեց Թուրքիայի բնակչությանը՝ ընգծելով, որ նա պետք է օգնի կառավարությանը՝ ճնշելու քրդական ապստամբությունը[113]: 1925 թ. մարտի 12-ին Անկարայի Անկախության դատարանը դիմեց ազգաբնակչությանը՝ սպառնալով, որ դաժանորեն պատժելու էր ապստամբներին և նրանց օգնողներին[114]:

Հետզհետե համալրում ստանալով՝ թուրքական զորքերը օղակում էին շեյխ Սայիդի ջոկատները: Շեյխ Սայիդը գիտակցում էր, որ օր առաջ պետք է գրավի Դիարբեքիրը, հակառակ պարագան աղետալի հետևանքներ կունենա շարժման համար: Չունենալով անհրաժեշտ ուժեր և հրետանի՝ մարտի 2-ին նա սկսում է գրոհը քաղաքի վրա, որի պաշտպանությունը վարում էին վալի Ալի Ձեմալ Բարդաքչին, քաղաքի կայազորի հրամանատար Մուրսել, ինչպես նաև բանակի տեսուչ գեներալ Քյազըմ Օրբայ փաշաները: Սակայն մարտի 7-ի լույս 8-ի գիշերը[115] (մեկ այլ տվյալներով՝ մարտի 10-11-ի գիշերը)[116] քաղաքը պաշտպանող 63-րդ գնդի և գնդացիրների վաշտի խաչաձև կրակից քրդերից զոհվեցին 50, գերի վերցվեցին 60 մարտիկներ: Այս մարտի ժամանակ թուրքական կողմը տվեց 13 զոհ (1 գնդապետ, 7 սպա, 5 զինվոր), ևս 15 զինվոր վիրավորվեցին[117]: Դիարբեքիրում տարած հաղթանակը գոտեպնդեց թուրքական զորքերին, որոնք մարտի 20-ին քրդերին պարտության մատնեցին Արածանի (Մուրադ) գետի կամրջի մոտ և հետ շպրտեցին նրանց Բիթլիսից, ինչից հետո Բիթլիսի բանտում կախաղան բարձրացրին «Ազադի» կոմիտեի ղեկավարներ Հալիթ բեկ Ձիբրանլընին և Յուսուֆ Ձիանին[118]: Քեմա-

[112] Տես *М. К. Ататюрк.* Путь новой Турции, т. 2. М., 1932, с. 393:

[113] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 90:

[114] Տես *М. А. Гасратян.* Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида), с. 52:

[115] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 148:

[116] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 72:

[117] Տես *V. Şadillili.* Op. cit., p. 97:

[118] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 153:

լական կառավարությանն անգնահատելի օգնություն ցույց տվեց Ֆրանսիան՝ թույլատրելով թուրքական զորքերի տեղափոխումը սիրիական երկաթուղով դեպի քրդերի թիկունքը, որոնք ընկան շրջապատման մեջ:

Ապրիլի սկզբին պարզ դարձավ, որ ապստամբները պարտություն են կրել: Հիմնական ճակատամարտերը նրանք տանուլ էին տվել, իսկ մարտի մեջ էին մտնում թուրքական նորանոր զորամասեր: Թուրքական կառավարությունը ծրագրել էր լիովին շրջապատել ապստամբներին, և հնարավորություն չտալ նրանց փախչելու Իրան, Իրաք կամ Սիրիա՝ չկրկնելու համար Բեյթ Շեբաբի սխալը: Ըստ Քեմալեդդին Սամի փաշայի՝ քրդական պրոբլեմում թուրքական կառավարության առջև ծառացել էին հետևյալ խնդիրները. 1) ապստամբության անողոք և արյունալի ճնշումը, որի համար ներգրավվել էին 7-րդ, 8-րդ, 9-րդ կորպուսներն ամբողջությամբ, ինչպես նաև մեկական դիվիզիաներ 3-րդ և 5-րդ կորպուսներից[119], 2) բոլոր քրդերի զինաթափումը՝ անկախ ապստամբությանը նրանց մասնակցության չափից և 3) պետության բոլոր շրջաններում քրդերի այնպիսի բնակեցում, որ նրանք ոչ մի տեղ մեծամասնություն չկազմեն[120]:

Մարտի 26–27-ին թուրքերն անցան հարձակման և ապրիլի 1-ին 5-րդ դիվիզիան Քյազըմ բեյի հրամանատարությամբ գրավեց Էլյազիզը, ապրիլի 3-ին Մենդոյի կիրճում պարտության մատնեց շեյխ Շերիֆի ուժերին, իսկ ապրիլի 6-ին գրավեց Ճապաղջուրը: Հյուսիսային ռազմաճակատում 8-րդ բանակային կորպուսը, Սալիմ բեյի հրամանատարությամբ Վարդոյի մատույցում պարտության մատնելով ապստամբներին, ապրիլի 5-ին մտավ Կարլըօվայի հովիտը, որտեղ խորմեկ և լոլան ցեղերի հետ նորից պարտության մատնեց ջիբրան ցեղին: Հյուսիսարևմտյան ռազմաճակատում 12-րդ դիվիզիան մարտի 22-ին մտավ Խնուս, իսկ մարտի 25-ին, պարտության մատնելով ապստամբներին Արփադերեսիի ճակատամարտում, մարտի վերջին գրավեց Վարդոն: Շեյխ Սայիդը մարտի 27-ին նահանջեց Ճապաղջյուր, որտեղ սպասում էր մյուս ռազմաճակատների հրամանատարներին իրենց ուժերով[121]:

Թուրքական հրամանատարությունը, ցանկանալով երկպառակտել ապստամբներին, հրապարակում է հայտարարություն՝ շեյխ Սա-

[119] Տես *М. Лебский.* Op. cit., p. 57:

[120] Տես *М. А. Гасратян.* Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида), с. 52:

[121] Տես նույն տեղում, էջ 52:

յիդին ողջ հանձնողին խոստանալով վճարել 1000 ոսկյա լիրա (8000 թղթ. լիրա), իսկ մահացածի դեպքում՝ 700 ոսկյա լիրա: Խոստացված պարգևավճարը կստանային անգամ ապստամբները, որոնք կազատվեին դատական հետապնդումից[122]: Ապրիլի կեսերին սպառնալիքներով հանդես եկավ Դիարբեքիրի Անկախության դատարանը՝ հայտնելով, որ իր իրավասությունները տարածվում էին արևելյան 14 վիլայեթների վրա, և որ լիազորված է ի կատար ածելու հանրապետության դաժան օրենքները և որ թուրք ազգի անդորրի և անվտանգության դեմ ուղղված ցանկացած գործողություն կդիտվի որպես մեծագույն հանցագործություն[123]:

Օրեցօր վատացող վիճակում հայտնված ապստամբները առաջիկա գործողությունները որոշելու նպատակով ապստամբության ղեկավար շեյխ Սայիդի գլխավորությամբ ապրիլի 3-ին հավաքվում են Սոլհանի Կրվազ գյուղում: Օրակարգում միայն մի հարց էր. ինչպես չգերեվարվել և փախչել Իրան կամ Իրաք: Ապրիլի 6-ին Գենջի հովտում 8-րդ բանակային կորպուսը, 2-րդ դիվիզիայի 35-րդ գունդը, ինչպես նաև 12-րդ դիվիզիան շրջապատում են ապստամբների գլխավոր ուժերին, որոնք ծանր պարտություն են կրում: Զոհերի ու գերի ընկածների թիվը շատ մեծ էր, իսկ փրկվածները ցրվել էին լեռներով: Ապրիլի 14-ին շեյխ Սայիդը փոքրաթիվ ջոկատի ուղեկցությամբ ցանկանում էր անցնել Արածանի (Մուրադ) գետի Չարբաք կամուրջը, սակայն 34-րդ գունդը փակել էր այն, և քրդերը ստիպված էին վերադառնալ Վարդո՝ հույս ունենալով անցնել Իրան: Ապրիլի 15-ին շեյխ Սայիդի ջոկատը մոտենում է կամրջին և, ընկնելով ծուղակի մեջ, 50 հոգանոց ջոկատը շեյխ Սայիդի գլխավորությամբ գերի է հանձնվում: Շեյխ Սայիդի հետ գերեվարվածների թվում էին Իսմայիլ, Մեհմեդ և Ռեշիդ Ձիբրանլիները, շեյխեր Շեմսեդդինը, Իբրահիմը, Հասանը, Ձանի գավառակի շեյխերը, Հաջի Հալիթը և այլ երևելի քրդեր[124]: Մայիսի 10-ին Ճապաղջրում հավաքված բոլոր գերիները փոխգնդապետ Սայիմ բեյի հսկողությամբ ուղարկվում են Դիարբեքիր՝ Անկախության դատարան[125]: Ապրիլի 15-ին կառավարության զորքերը մտնում են Գենջ: Ապստամբների ցաքուցրիվ ջոկատները, մնալով առանց ղեկավար-

[122] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 93:

[123] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 22:

[124] Տես *M. van Bruinessen.* Op. cit., p. 290:

[125] Տես *M. Ş. Fırat.* Doğu İlleri Ve Varto Tarihi. Ankara, 1961, s. 147:

ների, անցնում են Մուշից 45 կմ հյուսիս-արևմուտք՝ Շերաֆուդդին լեռները, որտեղ ընկնում են շրջապատման մեջ և ջախջախվում[126]:

Քրդերը ծանր պարտություն են կրում, իսկ քեմալականները ձեռնամուխ են լինում դաժան հաշվեհարդարի՝ խնդիր ունենալով մեկընդմիշտ փակել քրդական պրոբլեմը: Պայքարն ընթանում էր օրենսդրական[127], դատական, ռազմա-վարչական, ազգայնական ճակատներով:

Թուրքական իշխանությունների համար գլխավոր ճակատը, մնում էր ռազմականը, որը լրացվում էր Անկախության դատարաններով: Հարյուրավոր գյուղեր դատարկվել էին. նրանց բնակչությունը կա՛մ ոչնչացվել էր, կա՛մ էլ քշվել երկրի կենտրոնական և արևմտյան վիլայեթներ[128]: Թուրքական զորքերը հաշվեհարդար էին տեսնում ոչ միայն քրդերի, այլև ասորիների և հայերի նկատմամբ՝ անկախ ապստամբությանը նրանց մասնակցության չափից: Այդ փաստն ապացուցում է Ազգերի Լիգա ուղարկված Ասորիական ընկերության 2 նամակները՝ թվագրված 1925 թ. օգոստոսի 6-ին: Նամակներում նկարագրված էին այն սարսափելի բռնությունները, որ իրագործում էին թուրքերը քուրդ և ասորի խաղաղ բնակչության նկատմամբ: Մասնավորապես ասվում էր, որ բնակիչներին արգելված էր դուրս գալ իրենց գյուղերից, ունեցվածքը թալանված էր, իսկ կանայք բռնաբարվել էին իրենց ամուսինների աչքերի առաջ: Գյուղերի ղեկավարները կախաղան էին հանվում, իսկ հրաշքով փրկված շատ քրդեր՝ տեղահանվում: Էրզրումի 1400 քրդերից, որոնց Տրապիզոնից տեղափոխում էին Թրակիա, տեղ հասավ միայն 400-ը[129]:

Սպանությունների, բռնությունների ու ավերածությունների հետ մեկտեղ տեղի էր ունենում անզուսպ թալան: Միայն Լիջեի և Դիարբեքիրի աճուրդներում վաճառվել էր 30 հազար ոչխար[130]:

Ս. Ավանեսովը փաստում է, որ 1925- 1926 թթ. հիմնովին ոչնչաց-

---

[126] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 94:

[127] Տես *М. А. Гасратян.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами:

[128] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 346:

[129] Տես *С. С. Аванесов.* Op. cit., p. 56:

[130] Տես *R. Olson.* The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, 1880–1925, P. 162:

վել է 206 գյուղ, 8758 տուն և 150 հազար մարդ[131]: Ֆրանսիացի հետազոտող Լ. Ռամբուն նշում է, որ թուրքերը ոչնչացրել են 206 քրդական գյուղ, այրել 8758 տուն և սպանել 150 հազար քուրդ խաղաղ բնակչության[132]: Կ. Սասունին, հղում կատարելով քրդական աղբյուրներին՝ նշում է 50 հազար թիվը[133]: Ըստ Մ. Ս. Լազարևի՝ 1925–1928 թթ. սպանվել էր 15000 քուրդ[134]:

Ապստամբության ճնշումից հետո սկսվեցին դրա ղեկավարների դատավարությունները, որոնք իհարկե պետք է ավարտվեին միայն մահվան դատավճռով: 1925 թ. մայիսի 23-ին դատարանը սեիդ Աբդուլքադիրին և նրա համախոհներին դատապարտեց մահվան, ինչը կախաղանի միջոցով ի կատար ածվեց մայիսի 27-ին Դիարբեքիրում[135]: Մայիսի վերջերին սկսվեց շեյխ Սայիդի և նրա զինակիցների դատավարությունը: Նրա հետ միաժամանակ դատվում էին շեյխ Աբդուլլահը Մելիքանից, Ձիզրեից՝ շեյխ Իսմայիլը և շեյխ Աբդուլյաթիֆը և այլոք[136]: Հունիսի 29-ին, Դիարբեքիրի անկախության դատարանը բոլորին մեղավոր ճանաչեց և դատապարտեց մահվան, որը հաջորդ օրն ի կատար ածվեց[137]: Թուրքական իշխանությունների համար սա պատեհ առիթ էր, որպեսզի ոչնչացնեին քրդական վերնախավն ամբողջովին: Նրանց չէր կանգնեցում նույնիսկ այն, որ տվյալ քուրդը կարող էր թուրքամետ լինել: Մահապատժի ենթարկվեց հայտնի թուրքամետ գործիչ Հասան Հայրին, որին չփրկեց անգամ այն, որ շեյխ Սայիդի ապստամբության ժամանակ ինքն ամեն ինչ արել էր, որպեսզի Դերսիմը չմիանար իրեն: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ թուրքերի համար կար միայն մեկ նպատակ՝ քրդերի թուրքացումը, այլ պարագայում նրանք պետք է ոչնչանային:

---

[131] Տես *С. С. Аванесов.* Op. cit., p. 56:

[132] Տես *Կ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում:

[133] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 249:

[134] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 67:

[135] Տես *М. А. Гасратян.* Курдское движение в новое и новейшее время. М., 1987, с. 128:

[136] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 27:

[137] Տես *М. А. Гасратян.* Курдское восстание 1925 года (Восстание шейха Саида), с. 58:

ԳԼՈՒԽ 3
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱՔՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1926–1939 ԹԹ.

3.1. Քրդերի հանդեպ բռնաճնշումների քաղաքականությունը շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից հետո

Շեյխ Սայիդի ապստամբությունից հետո քեմալական կառավարությունը փորձում էր պատժիչ միջոցներով լուծել քրդական պրոբլեմը՝ խիստ հսկողության տակ վերցնելով քրդերի կյանքի բոլոր ոլորտները: Ավելին, քեմալականները ձգտում էին քայքայելու ավանդական քրդական հասարակությանը, զրկելու նրան կազմակերպող և պայքարի առաջնորդող ուժից: Այս վերջին նպատակով ենթադրվում էր իրագործել մի շարք ծրագրեր և միջոցառումներ, որոնք կթուլացնեին քրդական վերնախավի դերակատարությունն ինչպես թուրքական պետության ներսում, այնպես էլ քրդերի շրջանում:

Շեյխ Սայիդի ապստամբությունից հետո թուրքական իշխանությունները հարյուր հազարավոր քրդերի բռնի տեղահանեցին դեպի երկրի արևմտյան մասերը: 1930 թ. Ֆիլադելֆիայում Հոյբունի հրապարակած տվյալների համաձայն՝ 1926–1927 թթ. ձմռանը տեղահանված քրդերի թիվը հասնում էր 1 միլիոնի[138]: Տարահանումն իրագործվում էր ամենադաժան ձևերով: Ըստ անգլիական դեսպանին հասած տեղեկությունների՝ շատ կանայք և երեխաներ ճանապարհին անհետանում էին[139]:

Սակայն այդպիսի հախուռն և անկազմակերպ տարահանումները սպասված արդյունքը չտվեցին: Թուրքական պետությունը պատրաստ չէր այդպիսի ծավալի միջոցառումների: Բացի այդ՝ իր բնակչության և միջազգային հանրության համար անհրաժեշտ էր տարահանմանը տալ օրինական տեսք: Ուստի քեմալական կառավարությունը որոշեց երկրի արևմտյան շրջաններ տեղափոխել ոչ թե բոլոր քրդերին, այլ հիմնական ապստամբական ուժերին՝ քրդական վերնախավին, որն առաջ-

---

[138] Տես *Sureya Bedr Khan.* The case of Kurdistan against Turkey. By Authority of Hoyboon Supreme Council of the Kurdish Government. Kurdish Independence League. Philadelphia, 1929, P. 53; նաև՝ *В. Никитин.* Курды. М., 1964, с. 90:

[139] Տես *D. McDowall.* Op. cit., p. 200:

նորդում էր շարժման մարտնչող ուժին՝ ապստամբ քոչվոր աշիրեթներին:

1926 թ. մայիսի 31-ին ԹԱՄԺ-ը ընդունեց բնակեցման մասին հմ 885 օրենքը, ըստ որի կառավարությունն իրավունք ուներ նոսր բնակեցված շրջաններ փոխադրել այն գյուղերի բնակիչներին, որոնց տեղափոխումը պայմանավորված էր սանիտարական պայմաններով կամ ապրուստի միջոցի բացակայությամբ, ինչպես նաև վտարել սահմանային շրջանների այն բնակիչներին, որոնց կասկածում էին լրտեսության մեջ[140]: Օրենքի իրագործման պատասխանատվությունը դրվեց Ներքին գործերի նախարարության վրա: Այն հրապարակվելուց հետո տեղական իշխանություններն անմիջապես սկսեցին ջանադրաբար իրագործել այն: Արդեն մայիսի սկզբին Վանից Իզմիր տեղափոխվեցին մի քանի քրդական ընտանիքներ: Միայն Իզմիր քեմալականները մտադրվել էին տեղափոխել մոտ 400 քրդերի: Տեղական իշխանությունների չափից ավելի «ջանասիրությունը» հաճախ վեր էր ածվում զավեշտի: Նրանք սկսեցին արևմտյան վիլայեթներ ուղարկել նաև այն քուրդ ընտանիքներին, որոնք թրքամետ էին: Իսկ երբ այդ ընտանիքները սկսում էին բողոքել, թուրքական մամուլը հեգնական ոճով պատասխանում էր, որ քրդերը պետք է համակերպվեն, եթե կառավարությունը պետքական համարի վերաբնակեցնել նրանց[141]:

1927 թ. սկզբին քեմալական կառավարությունը եկավ այն եզրահանգման, որ Անկարայի և Դիարբեքիրի Անկախության դատարանները կատարել են իրենց խնդիրները, և նրանց գործունեությունն անիմաստ է: Երկրի մի մասում ռազմական դրության հայտարարումը բացասաբար էր անդրադառնում արևելյան վիլայեթների և ամբողջ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման վրա: Այնուհանդերձ, Քեմալը վաղ համարեց Անկախության դատարանների լուծարման հետ մեկտեղ չեղյալ հայտարարել նաև ռազմական դրությունը:

1927 թ. փետրվարի 28-ին ԹԱՄԺ-ի ԺՀԿ խմբակցության նիստում վարչապետ Ի. Ինյոնյուն հայտարարեց, որ կառավարությունը մտադիր է լուծարելու Անկախության դատարանները, որոնց գործունեության ժամկետը լրանում էր 1927 թ. մարտի 7-ին: Մարտի 2-ին ԹԱՄԺ-ն իր որոշմամբ հաստատեց այդ առաջարկությունը[142]: Անկարայի և Դիարբեքիրի դատարանները դադարեցրին իրենց գործունեությունը, իսկ

[140] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами:

[141] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, с. 125:

[142] Տես *Մ. Կ. Ատատյուրք.* Op. cit., T. 3, p. 275:

նրանց վարույթում գտնվող գործերը փոխանցվեցին սովորական դատարաններին: Հիմնավորելով նման որոշումը՝ Ի. Ինյոնյուն նշեց, որ Անկախության դատարանների լուծարումը հնարավորություն կտա քաղաքացիներին ավելի հանգիստ իրավիճակում կատարելու իրենց պարտքը մեջլիսի 3-րդ գումարման ընտրությունների ժամանակ, իսկ եթե «դավաճանները» փորձեն նորից գործել, ապա մեջլիսը չի կանգնի Անկախության դատարանների գործունեությունը վերականգնելու հարցի առջև[143]:

1927 թ. մարտի 2-ին ԹԱՄԺ-ը, հավանության արժանացրեց Անկախության դատարանների լուծարումը, բայց միաժամանակ, ևս երկու տարով՝ մինչև 1929 թ. մարտի 4-ը, երկարաձգեց «Հասարակական կարգի» մասին օրենքի գործունեությունը:

1927 թ. ամռանը կառավարությունը որոշեց արևելյան վիլայեթներում անցնել կառավարման նոր ձևի: Հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը ընդունում է արևելյան վիլայեթներից դեպի արևմտյան շրջաններ քրդերի տեղափոխման մասին հմ. 1097 օրենքը[144]: Նրա առաջին հոդվածում նշվում էր, որ վարչական, ռազմական և հանրային նկատառումներով կառավարությանը տրված էին լիազորություններ պաշարված վիլայեթներից, ինչպես նաև Բայազեթ վիլայեթից դեպի արևմտյան շրջաններ տեղափոխելու 1400 խռովարարի՝ իրենց ընտանիքներով հանդերձ, որոնք այդ վիլայեթներում դատապարտված էին ծանր հանցագործությունների համար: Իսկ 5-րդ հոդվածով քրդերը պետք է բնակվեին այնտեղ, որտեղ նրանց կուղարկեր կառավարությունը[145]: Որոշ ժամանակ անց ի լրումն այդ օրենքի ԹԱՄԺ-ն ընդունեց հմ. 1178 օրենքը, համաձայն որի նախարարների խորհրդին իրավունք էր վերապահվում առաջնորդվել հմ. 1097 օրենքի դրույթներով նաև այն անձանց նկատմամբ, որոնք չէին մասնակցել շեյխ Սայիդի ապստամբությանը և հետագա իրադարձություններին: Միևնույն ժամանակ, քրդաբնակ շրջաններում կառավարությունը ստեղծեց այսպես կոչված «կարգի և անվտանգության ապահովման» գլխավոր տեսչություններ, որոնց վրա դրվում էին պատժիչ գործառույթներ: Տեղական իշխանության բոլոր մարմինները պարտավոր էին ենթարկվելու այդ տեսչություններին: Նրանց իրավունք էր վերապահված տվյալ տարածքում հայ-

[143] Տես “Akşam”. İstanbul, 03.02.1927:

[144] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում:

[145] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами:

տարարելու ռազմական դրություն, մերձակա վայրերում տեղակայված զորքերից առանձնացված ջոկատներ օգտագործելու՝ քրդերի ապստամբական շարժումները ճնշելու նպատակով և այլն[146]:

1927 թ. նոյեմբերի 30-ին ԹԱՄԺ-ի ԺՀԿ խմբակցության նիստում վարչապետ Ինյոնյուն ներկայացրեց նոր ծրագիր: Նա հայտարարեց, որ անհրաժեշտ է վերջ դնել արտակարգ կառավարմանը և անցնել խաղաղ ձևերի: Մասնավորապես, անհրաժեշտ էր այլևս չերկարացնել պաշարողական դրությունը, որի ժամկետը լրանում էր 1927թ. նոյեմբերին, և դրա փոխարեն արևելյան վիլայեթների համար ստեղծել Գլխավոր տեսչություն: Իսկ որպեսզի վերականգնվեր քրդերի վստահությունը, պետք էր դադարեցնել թուրքական պետությանը հավատարիմ մնացած քրդերի աքսորը դեպի երկրի արևմտյան շրջաններ, իսկ արդեն աքսորվածներին հետ վերադարձնել դեպի իրենց բնակության նախկին վայրերը: Սակայն դրա հետ մեկտեղ անհրաժեշտ էր ավելացնել ժանդարմների թիվը արևելյան վիլայեթներում: Ավելորդ է նույնիսկ նշել, որ ԺՀԿ խորհրդարանական խմբակցությունը միաձայն կողմ քվեարկեց այս ծրագրին:

Ի. Ինյոնյուն կառավարության նման ծրագիրը կազմել էր դեռ 1927 թ. հունիսի 25-ին՝ ԹԱՄԺ-ի ընդունած հմ. 1164 օրենքի հիման վրա, ըստ որի կառավարությունն իրավունք էր ստանում պահանջի դեպքում ստեղծել քաղաքացիական տեսչություններ, որոնցից յուրաքանչյուրի մեջ կարող էին մտցվել մի քանի վիլայեթներ: 1927 թ. նոյեմբերի 27-ին քեմալական կառավարությունն ընդունեց հրահանգ, որը սահմանում էր քաղաքացիական տեսչության գործառույթները: Ըստ այդ հրահանգի՝ էլյազիգ, Ուլֆա, Բիթլիս, Հաքյարի, Դիարբեքիր, Սղերդ, Մարդին և Վան վիլայեթները մտցվում էին հատուկ վարչական տարածքի մեջ, որը հետագայում ստացավ Առաջին գլխավոր տեսչություն անվանումը: Առաջին գլխավոր տեսչության տարածքը կազմում էր 107 հազար քառ. կմ, որտեղ բնակվում էր 900 հազար մարդ (ըստ 1927 թ. մարդահամարի տվյալների)[147]:

1927 թ. դեկտեմբերի 5-ին Թուրքիայի Ներքին գործերի նախարար Շյուքրյու Քայան, ԹԱՄԺ-ում հիմնավորելով գլխավոր տեսչության կազմավորման անհրաժեշտությունը, հայտարարեց, որ արևելյան վիլայեթներում իրավիճակն արդեն կայունացել է, իսկ քրդերի շարժումը վերածվել է սովորական ավազակության և դրա դեմ պայքարելու համար բավական են քաղաքացիական միջոցները, բայց միայն այն պայմա-

[146] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում:

[147] Տես “Güneydoğu Birinci Genel Müfettişlik Bölgesi”. İstanbul, 1939, s. 450:

նով, որ այդ վիլայեթներում ժանդարմների և սահմանապահների թիվը ավելացվի նվազագույնը երկու անգամ: Ըստ նրա՝ գլխավոր տեսչության ստեղծումը անցումային շրջան է՝ իշխանությունը զինվորականներից քաղաքացիական վարչակարգին հանձնելու համար:

Քրդաբնակ վիլայեթների միավորումը մեկ վարչական միավորի մեջ նպատակ ուներ է՛լ ավելի կենտրոնացնելու կառավարումը, այն դարձնելու ավելի արդյունավետ, ինչն էլ ավելի կնպաստեր քրդերի թուրքացմանը: Քեմալականները չէին էլ թաքցնում, որ նոր վարչական փոփոխությունների միակ նպատակը քրդերին ավելի արագ և հեշտ թուրքացնելն էր: Դրան էին միտված գլխավոր տեսչության մասին օրենքի 7-ից 13-րդ հոդվածները, ըստ որոնց գլխավոր տեսուչն ստանում էր գրեթե անսահմանափակ իշխանություն[148]:

Այսպիսով՝ ակնհայտ էր դառնում, որ քեմալականներն այս քայլերով պատասխանում էին կրկին զարթոնք ապրող քրդական շարժմանը, քանզի գլխավոր տեսուչը կարող էր համակարգել վալիների և այդ շրջանում գտնվող տարբեր ուժային կառույցների գործողությունները: Նույնը վերաբերում էր իրեն վստահված շրջանի կազմի մեջ մտնող վիլայեթների տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական կապերին: Այսինքն՝ քեմալականները թրքացման նպատակով նպատակադրվել էին հսկողություն սահմանել քրդական ժողովրդի կյանքի բոլոր բնագավառների վրա:

Սակայն ջարդերով ու աքսորներով քրդերին ճնշելը ստիպում էր վերջիններիս համագործակցել Իրաքի և Սիրիայի անգլիական ու ֆրանսիական իշխանությունների հետ: Եկել էր «բլիթի» քաղաքականությանն անցնելու ժամանակը: Թուրքական իշխանությունները, երկրամասի կառավարումը քաղաքացիականներին հանձնելով, հույս ունեին մարելու քրդական շարժումը: Բացի այդ՝ քեմալականներն սկսեցին կիրառել այն մեթոդները, որոնք կիրառում էին սուլթանները: Դրանք էին՝ ցեղապետերի կաշառումը թանկարժեք նվերներով, ոսկով և բարձր պաշտոններով, միջցեղային թշնամանքի հրահրումը և այլն: Նման քաղաքականություն վարելու ամենահարմար թեկնածուն, ըստ Մ. Քեմալի, իր վաղեմի զինակից և համախոհ Իբրահիմ Թալի բեյն էր[*]:

---

[148] Ավելի հանգամանորեն տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, сс. 133- 136:

[*] Իբրահիմ Թալի Օնգորեն (1875–1952)՝ թուրք ռազմական և քաղաքական գործիչ: Մասնագիտությամբ՝ ռազմական բժիշկ: Ազգայնական շարժման ժամանակ եղել է Քեմալի ամենավստահելի աջակիցներից մեկը: Նա այն սպաներից մեկ էր, ով ուղեկցում էր Քեմալին Ստամբուլից Սամսուն նավարկության ժամանակ

Պետք է նշել, որ քեմալական վերնախավի մի մասը համոզված էր, որ քրդերի մեծ մասը հավատարիմ է իրենց և միայն ծանր սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով է ընկնում բրիտանացիների և ֆրանսիացիների կողմից կառավարվող մի քանի դավաճանների ազդեցության տակ: Ուստի բավական էր բարելավել նրանց պայմանները, ու ապստամբություն կազմակերպողները և նրանց ֆինանսավորող օտարերկյա տերությունները ոչինչ չէին կարողանա իրագործել: Մասնավորապես նման կարծիք էր արտահայտում թուրքական մամուլը, ըստ որի՝ ստեղծված իրավիճակում մեղքի իրենց բաժինն ունեին նաև տեղական իշխանությունները, որոնց ոչ արդյունավետ գործունեության հետևանքով տեղի բնակչության շրջանում կորչում էր վստահությունը և հեղինակությունը կառավարության հանդեպ:

Այսպես, «Ջումհուրիյեթ»-ի հայտնի լրագրող Յունուս Նադին եզրակացնում էր, որ անհրաժեշտ է նախևառաջ քայլեր ձեռնարկել ծագող խնդիրներին արագ արձագանքելու և արևելյան վիլայեթներում կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Նա գտնում էր նաև, որ վատ կառավարումը ոչ միայն պաշտոնյաների ընչաքաղցության հետևանքն է, այլև մասնագիտական գիտելիքների բացակայության և տեղական բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ առանձնահատկությունների մասին անտեղյակության արդյունք: Այդ իսկ պատճառով նա առաջարկում էր տարբեր բնագավառների մասնագետներից կազմել հանձնաժողով, որոնք անհրաժեշտ տեղեկությունները հավաքելու համար պետք է մեկնեին այդ վիլայեթները[149]:

Մեկ այլ լրագրող՝ Ահմեդ Ձևդեթը, համարում էր, որ քրդերի ըմբոստ վիճակը պայմանավորված է նրանց սոցիալ-տնտեսական պայ-

1919 թ. մայիսին: 1920 թ. սեպտեմբերին Բաքվում կայացած «Արևելքի ժողովուրդների համագումարում» եղել է թուրքական պատվիրակության ղեկավարը: Մասնակցել է 1920 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմին: 1927 թ. նշանակվել է Առաջին տեսչության գլխավոր տեսուչ: Այդ պաշտոնում նա վարել է քրդերի և այլ ազգային փոքրամասնությունների թուրքացման քաղաքականություն: 1933 թ. նա հրաժարական է տվել գլխավոր տեսուչի պաշտոնից, իսկ 1934 թ. նշանակվել է երկրի արևմտյան վիլայեթները միավորող Երկրորդ տեսչության գլխավոր տեսուչ: Այդ պաշտոնում նա շրջագայել է տեսչության կազմի մեջ մտնող վիլայեթներով և Ներքին գործերի նախարար Շ. Քայային գրված զեկուցագրում մեղադրել տեղի հրեաներին արհմիություններում ներգրավվելու և տարածաշրջանում թուրք բնակչությանը շահագործելու մեջ: Պետական ծառայությունից հեռացել է 1935 թ. օգոստոսին:

[149] Տես «Cümhüriyet». Istanbul, 17.12.1927:

մաններով և հմուտ կառավարման շնորհիվ 10-12 տարվա ընթացքում երկրամասում կարելի է հաստատել բարեկեցություն[150]:

Թվում էր, թե Իբրահիմ Թալի բեյը և նրան նշանակած Մ. Քեմալը նույնպես այդպես էին կարծում: Սակայն մի բացառությամբ. վերոնշյալ բարեփոխումները և դրան հաջորդող բարեկեցությունը նախատեսված էին միայն թուրքերի համար, իսկ մնացած ազգերը և առաջին հերթին՝ քրդերը, պետք է թրքանային, այլապես նրանց սպառնում էր կամ արտաքսում, կամ ոչնչացում: Իբրահիմ Թալի բեյը նշանակվել էր քրդերի թուրքացումն քաղաքակիրթ եղանակներով իրագործելու նպատակով, բայց հասկանալի էր, որ ընդդիմացողներին սպասվում էին դաժան բռնաճնշումներ:

Սակայն իզուր էր Իբրահիմ Թալի բեյն այցելում տարբեր շրջաններ, ահաբեկելով կամովին ներկայացողներին, թե նորից զենք վերցնելու դեպքում նոր պատժին կավելանա նաև հին պատիժը, որը կարճվել էր համաներման շնորհիվ: Բազմաթիվ քրդեր զենքը ձեռքներին բարձրանում էին լեռները:

Մյուս եղանակը, որով քեմալականները ցանկանում էին մարել քրդերի հակաթուրքական տրամադրությունները, սոցիալ-տնտեսական բարեփոխումներն էին: Սա ավելի շատ վերաբերում էր քրդական հասարակության ստորին խավերին և նպատակ ուներ թշնամացնելու քուրդ հասարակ ժողովրդին նրա վերնախավի հետ: Այս բարեփոխումները ձևական էին, մեկերեսային և ամենևին էլ նպատակ չունեին բարելավելու քրդերի վիճակը, և եթե դրանք իսկապես կյանքի կոչվեին, ապա միայն այն դեպքում, եթե քրդերը թրքանային: Սակայն անգամ թուրքական իշխանությունների անկեղծ ցանկության դեպքում այս բարեփոխումներն անհնար էր անցկացնել, քանի որ դրանք հարվածում էին պաշտոնյաների գրպաններին և ազդեցությանը:

Իբրահիմ Թալի բեյն օգտագործեց նման հռչակագրերը քրդական հասարակության խավերի միջև թշնամություն սերմանելու, ինչպես նաև թուրքական իշխանության հեղինակությունը բարձրացնելու համար: Մասնավորապես, բնակչությանն ուղղված իր կոչում նա ընդգծում էր, որ տեղական իշխանություններն անտարբեր են խոշոր ավատատերերի՝ հասարակ ժողովրդին պատճառած տանջանքներին: Նա հատկապես նշում էր այն տարածված երևույթը, որ ավատատերերը տեղական իշխանությունից ստանում են հողի սեփականության փաստաթղթերը և բռնի ուժով կամ դատական կարգով այն վերցնում իսկական տիրոջից: Նա պահանջում էր շուտափույթ այդ հողերը վերադարձնել իրենց

[150] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 137:

նախկին տերերին, ինչպես նաև բնակչից հարկերը հավաքել իրեն հարմար ժամանակ[151]: Սակայն իրական նպատակը քրդական վերնախավին ունեզրկելն էր, ինչի հետևանքով վերջինս կկորցներ իր ազդեցությունը հասարակ ժողովրդի շրջանում, ինչպես նաև քրդական քոչվոր ցեղերին նստակյաց դարձնելը:

Թուրքական իշխանությունները դիմեցին դարերով փորձված ազգամիջյան թշնամանքի հրահրմանը: Այս անգամ ևս որպես թիրախ ընտրվեցին հայերը, քանի որ քեմալականներին լրջորեն անհանգստացնում էր ֆրանսիական կառավարության՝ մոտ 40 հազ. հայ փախստականներին Սիրիայում և Լիբանանում տեղավորելու ծրագիրը, որոնց մեծ մասը բնակություն էր հաստատում մեծամասամբ քրդական բնակչությամբ Թուրքիային սահմանակից շրջաններում (Ալեքսանդրետի սանջակ, Հալեպ, Ղամիշլի, Նուսայբին, Զեզիրե և այլն):

Շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից հետո սկսված հայ-քրդական մերձեցումը լրջորեն անհանգստացնում էր քեմալական իշխանություններին: Թուրքական մամուլը մեղադրում էր Ֆրանսիային՝ հայերին Թուրքիայի հետ սահմանակից շրջաններում դիտավորյալ բնակեցնելու մեջ: Այդ թերթերը «ապացուցում էին», որ Փարիզը նպատակ ուներ այդ հողերի վրա ստեղծելու նոր Հայաստան: Թուրքական իշխանությունները սակայն չէին բավարարվում միայն իրենց ենթակա մամուլի միջոցով պայքար տանելով: Նրանց հաջողվեց ներքաշել նաև որոշ արաբական թերթերի, ինչպես նաև զինել տեղի թափթփուկներից հավաքված հրոսակախմբերին՝ ուղղելով նրանց հայերի դեմ[152]:

Սակայն այդ քայլերը չտվեցին սպասված արդյունքը: Քրդերն ու արաբները կուլ չտվեցին «նոր Հայաստան» անվանումով խայծը, քանի որ թուրքերի հանդեպ նրանց ատելությունն ի սկզբանե անհաջողության էր դատապարտում ցանկացած ծրագիր: Այդժամ քեմալականները հնարեցին հայերի համար մի նոր մեղադրանք, որով նրանք «բացահայտում էին» տեղի բնակչության ծանր սոցիալ-տնտեսական վիճակի գաղտնիքը: Այդ մեղադրանքը մաքսանենգությունն էր: Խնդիրն այն էր, որ իշխանությունների վարած անմարդկային տնտեսական և հատկապես հարկային քաղաքականության հետևանքով Թուրքիայի հարավային և արևելյան վիլայեթները գտնվում էին աղետալի վիճակում: Մի թուրք լրագրող գրում էր, որ արևելյան վիլայեթներում մարդիկ իրար էին խառնում գարու հատիկները, ընկույզի կեղևները, եգիպտացորենի

[151] Տես նույն տեղում, էջ 138:

[152] Տես «Դրօշակ», 1929, հմ. 6- 7, էջ 211:

ցողունները և ուտում այն: Սովից և հիվանդություններից մահացությունները մեծ չափերի էր հասել (Մալաթիայում օրական մահանում էր 40–50, իսկ Մեզրեում՝ 8–10 հոգի) [153]: Իրավիճակն ավելի էին սրում բազմաթիվ հրոսակախմբեր, որոնք սովից դրդված՝ թալանում էին ամեն ինչ: Այդ պատճառով ոչ ոք չէր համարձակվում Թուրքիայի այլ շրջաններից սննդամթերք և այլ ապրանքներ բերել քրդական վիլայեթներ, ինչի հետևանքով ապրանքների գները շատ բարձր էին և գրեթե չկային: Իսկ Սիրիայում Ֆրանսիայի վարած խելացի տնտեսական քաղաքականության շնորհիվ տիրում էր առատություն և սահմանակից շրջաններում գները մի քանի անգամ ցածր էին: Սակայն թուրքական կառավարությունը տեղական արտադրողին պաշտպանելու պատրվակով (իսկ իրականում՝ սիրական և թուրքական քրդերի միջև կապերը խզելու, ինչպես նաև Ֆրանսիայի ազդեցությունը չեզոքացնելու համար) արգելում կամ բարձր մաքս էր սահմանում սիրական ապրանքների վրա: Այդ պատճառով լայն ծավալների հասավ մաքսանենգությունը, որում ներգրավված էին նաև մեծ թվով հայեր: Ուստի քեմալականներն ապրանքների թանկացման մեղքը գցեցին հայերի վրա՝ քրդերի դժգոհությունն ուղղելով նրանց դեմ: Նրանք պատերազմ հայտարարեցին մաքսանենգության և մասնավորապես հայերի դեմ՝ ըստ իրենց քրդերին փրկելով հայ հարստահարիչներից:

Այս ծրագիրն ավելի կարևորելու նպատակով Դիարբեքիր է ժամանում Ներքին գործերի նախարար Շյուքրյու Քայան և հեռագրով հաղորդում է Անկարա, թե մաքսանենգությունն այստեղ ահռելի չափերի է հասել ու դրանում մեղավոր են հայերը: Թուրքական կառավարությունը մաքսանենգությունը հավասարեցնում էր հայրենիքի դավաճանության՝ սահմանելով ծանր պատիժներ: Ֆրանսիային մեղադրելով Թուրքիայի դեմ թշնամական գործողություններ կատարելու մեջ՝ թուրքական մամուլը որպես թուրք-ֆրանսիական հարաբերությունների բարելավման նախապայման առաջարկում է Ֆրանսիային հայերին տեղափոխել Թունիս և Ալժիր: Ե՛վ համաներման ու տնտեսական բարեփոխումները, և՛ քրդերին հայերի դեմ հրահրելու սադրանքները ձախողվեցին: Քրդերի մեծ մասը լավ հասկանում էր, որ իրենց դժբախտությունների միակ աղբյուրը թուրքական իշխանություններն էին:

Սակայն քրդերի համար ամենամեծ չարիքը բռնի թուրքացման քաղաքականությունն էր, որն իսկական պատուհաս էր նրանց համար: Պանթուրքիզմի գաղափարախոսությունը քարոզելու գործում առաջա-

[153] Տես նույն տեղում, 1928, հմ 4, էջ 121:

տարներից մեկը թուրքական մամուլն էր: Այսպես. «Միլլիեթ» թերթը գրում էր, որ թուրքացումն ընթանում էր շատ դանդաղ, և որ իրենք անհամբեր սպասում են, թե երբ պետության իրագործվող բարեփոխումները կտան իրական արդյունքներ, քանի որ, երբ քաղաքացիների միջև հաստատվի լեզվական և նպատակային միատարրություն, իրենք կստանան հզոր մի ուժ[154]:

Նույն թերթի հոդվածագիր Մահմուդ բեյը, մեկնաբանելով ԹԱՄԺ-ի ընդունած հմ. 1239 օրենքը, գտնում էր, որ արևելյան վիլայեթների բնակչությունը հանդարտվել է, քանի որ իրեն համարում է թուրք և Թուրքիայի մի մասնիկը, իսկ նրանք, ովքեր իրենց համարում են ոչ թուրք, ձգտում են թուրք ազգի պառակտմանը[155]:

Իր ազգայնական հոդվածներով հետ չէր մնում նաև «Աքշամը». «-Փոքրամասնության համար երկու ճամփա կա կա՛մ իրապես կապվել այս հայրենիքին և պետությանը, կա՛մ՝ հեռանալ: Փոքրամասնություն կոչված տարրերի համար ուրիշ ելք չկա, քան ընդունել այդ երկրի պետական լեզուն, մշակույթը և ձուլվել: … Իբրև թրքահպատակ՝ այս երկրի մեջ ապրողների շահը կպահանջի թրքանալ: … Այն տարրերը, որոնք կպնդեն, որ թուրք են, կամ կուզեն թուրք դառնալ, պարտավոր են թուրքական դպրոց տանել իրենց զավակներին»[156]: Նույն օրվա իր համարում «Միլլիեթը»-ը կարծես տրամաբանական ավարտին է հասցնում «Աքշամի» մտքերը՝ գրելով. «Թուրք ազգը կատարելապես արթուն է: Թող սա հասկացողները չհասկացողներին բացատրեն»[157]: Նման մտքերով էին ողողված թուրքական թերթերը, և դա դիտվում էր բնականոն և տրամաբանական:

Մամուլի տեսակետը հետևյալն էր. սուլթանները մեծ սխալ կատարեցին, երբ ոչնչացնելու կամ թուրքացնելու փոխարեն արտոնություններ տվեցին փոքրամասնություններին: Ու հիմա իրենք սրբագրեցին այդ սխալը, և եթե ազգային փոքրամասնությունները նոր փորձանքներ չեն ուզում կրել, ապա պետք է թրքանան: Թրքացման այս հիստերիայում քեմալականներն անցնում էին նույնիսկ ամենատարրական տրամաբանության սահմանները: Այսպես. 1928 թ. ԹԱՄԺ-ի ընդունած 1312 օրենքի 4-րդ հոդվածում գրված էր, որ 1929 թ. հունվարի 1-ից հետո Թուրքիայում ծնված բոլոր երեխաները

[154] Տես “Milliyet”. İstanbul, 28.03.1928:

[155] Տես նույն տեղում, 13.05.1928:

[156] Տես “Akşam”, 15.03.1928:

[157] Տես “Milliyet”, 15.03.1928:

կհամարվեն թուրք, նույնիսկ եթե երկու ծնողներն էլ օտարերկրացի կամ այլազգի են[158]:

Քրդաբնակ վիլայեթների թրքացման գործընթացին, բացի պետական մարմիններից, ներգրավվել էր նաև «Թուրքական օջախ» (*Türk ocağı*) կազմակերպությունը՝ իր լայնորեն սփռված մասնաճյուղերի ցանցով[159]: Դրանք դեռ 1912 թ. հիմնադրել էին երիտթուրքերը Օսմանյան կայսրությունում պանթուրքիզմի գաղափարախոսությունը տարածելու նպատակով: 1918 թ. երիտթուրքերի իշխանությունից հեռացվելու հետևանքով «Թուրքական օջախ»-ները անկում ապրեցին: 1924 թ., երբ Մ. Քեմալը ձեռնամուխ եղավ ազգային փոքրամասնությունների թրքացման քաղաքականությանը, «Թուրքական օջախ»-ները նոր կյանք ստացան և է՛լ ավելի մեծ եռանդով լծվեցին թրքացման գործին: Նրանց բազմաթիվ անդամները մեկնում էին քրդաբնակ վիլայեթներ, և տեղական պաշտոնյաների հետ ձեռնամուխ լինում քրդերի թրքացմանը: Ընդ որում, նրանք իրենց հետ բերում էին նաև արևմտյան մշակույթ, որը ըստ քրդերի՝ անարգանք էր իսլամի հանդեպ:

Քրդերի և քրդերենի նկատմամբ հալածանքներն ավելի խստացան և ընդունեցին ավելի կանոնակարգված բնույթ: Օտտոմանյան բանկի արևելյան վիլայեթների երկու մասնաճյուղերից աշխատանքից ազատվեցին ազգությամբ ոչ թուրքերը, որոնց մեջ գերակշռում էին քրդերը[160]: Պաշտոնապես արգելված էր քրդերեն լեզուն, նախակրթարաններում և դպրոցներում դասավանդում էին միայն թուրքերենով: Այդ նպատակի իրագործման համար կառավարությունն արևելյան վիլայեթներ ուղարկեց 250 ուսուցիչների, որոնց մեծ մասը «Թուրքական օջախ»-ների անդամներ էին[161]: Կրթություն նշանակում էր թրքացում: Յուրաքանչյուր կրթություն ստացած քուրդ երիտասարդ գիտեր, որ իր ապագան կախված է թուրքերեն լեզվին լավ տիրապետելու հանգամանքից: Իսկ բանակ զորակոչված քուրդ երիտասարդներն անխտիր ուղարկվում էին ծառայության երկրի արևմտյան վիլայեթներ, որտեղ պետք է դառնային «պարտաճանաչ թուրքեր»[162]:

---

[158] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում:

[159] «Թուրքական օջախների» մասին հանգամանորեն տես *Ü. Füsun.* İmparatorluktan Ulus-Devlet´e Türk Milliyetçiliği: Türk Ocakları (1912-1931). İstanbul, 2010; նաև՝ *А. А. Колесников.* Op. cit.:

[160] Տես *D. McDowall.* Op. cit., p. 201:

[161] Տես «Դրոշակ», 1928, հմ. 1, էջ 23:

[162] Տես *D. McDowall.* Op. cit., p. 202:

Քրդաբնակ վիլայեթների որոշ մասերում թրքացման քաղաքականությունը գրանցել էր որոշակի հաջողություններ: Օրինակ՝ Այնթապում և Ուրֆայում, որտեղ քրդերը կազմում էին բնակչության 50 %-ը, արաբների հետ միասին համաձայն էին որպես թուրք գրանցվելու: Քեմալականների նկատմամբ դրական էին վերաբերվում Մարաշի և Խարբերդի շիա քրդերը, քանի որ նրանց շնորհիվ իրենք պետական մակարդակով ազատվել էին սուննի մեծամասնության բռնաճնշումներից: Ավելին. քեմալական իշխանությունն այժմ ամեն կերպ ճնշում էր սուննի հոգևորականներին և ավատատերերին՝ զրկելով նրանց նյութական և ֆինանսական, հետևաբար՝ քաղաքական ազդեցություններից[163]:

1925–1927 թթ. տեղի ունեցած ապստամբություններն իրենց ծավալով էականորեն զիջում էին շեյխ Սայիդի ապստամբությանը և թուրքական իշխանությունների համար լուրջ վտանգ չէին ներկայացնում: Սակայն Արարատի և Դերսիմի տարածաշրջանները լրջորեն անհանգստացնում էին Անկարային: Նրանցից ամենավտանգավորը, ըստ քեմալականների, Դերսիմն էր, քանի որ այն ավելի մեծ էր, և ապստամբություն պայթելու դեպքում չափազանց դժվար կլիներ ճնշել այն: Սակայն Դերսիմի քրդերը շեյխ Սայիդի ապստամբության ժամանակ չմիացան նրան և, թուրքերը, ըստ էության, փրկվեցին աղետից: Ուստի պատահական չէր, որ թուրքերը, չնայած Արարատում սկսված ապստամբության, կենտրոնացել էին Դերսիմի վրա:

1926 թ. դեկտեմբերի 28-ին Խարբերդի Անկախության դատարանը 96 դերսիմցի քրդերի գործով կայացրեց դատավճիռներ, ըստ որոնց ութ[164] կամ տասներեք հոգի[165] դատապարտվեցին մահվան, տասնչորս հոգի՝ այլ ծանր պատիժների, իսկ ութսուներեքը, որոնց թվում՝ կանայք և երեխաներ, աքսորի: Այս ամենը, բնականաբար, առաջ բերեց դերսիմցիների դժգոհությունը, որոնք պատրաստ էին ամեն վայրկյան ապստամբելու: Ցանկանալով կանխել վերահաս պայթյունը՝ քեմալականները սկսեցին միջցեղային թշնամանք սերմանել, կաշառել և ստել: Դերսիմի ամենաազդեցիկ առաջնորդներից մեկի՝ սեիդ Ռիզայի հետ հանդիպման ուղարկվեց Դիարբեքիրի վալի Ալի Ձեմալը, որը նույնպես ալևի էր: Հանդիպման ժամանակ Ալի Ձեմալն ամեն կերպ աշխատում էր սիրաշահել սեիդ Ռիզային: Ընդգծելով իր ալևի լինելը՝ նա խոստանում էր, որ հասնելու է այն բանին, որ

[163] Տես նույն տեղում:

[164] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 123:

[165] Տես «Դրօշակ», 1927, հմ. 4, էջ 116:

թուրքական կառավարության համաձայնությամբ դերսիմցիներին կբաժանի էրզինջան-էլյազիգ շրջաններում հայերին պատկանող հողերը, կբացվեն դպրոցներ, որտեղ ուսուցումը կտարվի շիիզմի ուսմունքներին համաձայն, ներում կշնորհվի քոչգիրի ցեղին, որը 1921 թ. ապստամբությունից հետո քաշվել էր Դերսիմի անմատչելի լեռները[166]:

Խոզաթում տեղի ունեցած երկրորդ հանդիպմանը մասնակցելու համար Դիարբեքիրից ժամանեց բանակային տեսուչ Իզեդդին փաշան, ինչպես նաև էլյազիգի վալի Ալի Ռիզան, իսկ քրդական կողմից, բացի սեիդ Ռիզայից, ներկա էր նաև Մեհմեդ Նուրի Դերսիմին: Հանդիպման ժամանակ Իզեդդին փաշան վստահեցրեց, որ կպաշտպանվեն Դերսիմի ազգաբնակչության ազգային շահերը[167]: Տեսնելով, որ Ալի Ձեմալի ազդեցությունը մեծ է Դերսիմի որոշ ցեղապետերի մոտ, քեմալական կառավարությունը նրան նշանակեց էլյազիգի վալի, իսկ Ալի Ռիզային՝ Դիարբեքիրի նահանգապետ: Այդ քայլը շուտով տվեց իր արդյունքը, որովհետև Դերսիմի որոշ թրքամետ ցեղապետեր հաճախ էին հյուրընկալվում Ալի Ձեմալին և նրան հայտնում իրենց հավատարմությունը, ինչի համար վարձատրվում էին: Դրանց թվում էր Իբիշ Ձեքին, որը նշանակվեց էլյազիգ վիլայեթի մշտական խորհրդի անդամ: Բացի այդ, Ալի Ձեմալը շռայլորեն կաշառում էր ցեղապետերին և դրանով թշնամանք սերմանում մեկը մյուսի հանդեպ[168]:

Ալի Ձեմալի հեղինակությունը Դերսիմի քուրդ ցեղապետերի մի մասի շրջանում այնքան էր աճել, որ 1926 թ. նրան հաջողվեց գլխավորապես Արևելյան Դերսիմի ցեղապետերից կազմված մի պատվիրակություն ուղարկել Անկարա, որպեսզի վերջիններս հայտնեին իրենց «խորը հարգանքը Մուսթաֆա Քեմալին»[169]: Նրանց Անկարայում դիմավորեց Մեջլիսի նախագահ Քյազըմ Օզալփը: Զրույցի ընթացքում նա ընդգծեց, որ Մուսթաֆա Քեմալը բավարարված է քրդական պատվիրակության ժամանումից, սակայն շատ է ցավում, որ սեիդ Ռիզան չի ժամանել Անկարա:

Ցանկանալով ոչնչացնել սեիդ Ռիզային՝ Ալի Ձեմալն իր մոտ է հրավիրում Դերսիմի Օվաջըք շրջանի արևելյան՝ բեյթան, պեզգևրան

---

[166] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 190:

[167] Տես նույն տեղում, էջ 191:

[168] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում: Ե., 2017, էջ 87:

[169] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 125:

և մաքսուդան ցեղերի առաջնորդներին և, խոստանալով ամեն տեսակ արտոնություններ, կոչ է անում նրանց մասնակցելու սեիդ Ռիզայի հարազատ քոչան ցեղի դեմ պատժիչ արշավանքին՝ հայտարարելով, որ քոչան ցեղի հնազանդեցումից հետո միայն թուրքական կառավարությունը կլուծի դերսիմցիների խնդիրները[170]: Սակայն ցեղապետերը հասկացան Ալի Ձեմալի իսկական նպատակը և խոստացան պատասխանել հաջորդ օրը: Վերադառնալով Դերսիմ՝ նրանք հաջորդ օրը չգնացին Ալի Ձեմալի մոտ, այլ պահանջեցին, որ թուրքական զորքերը չուղարկվեն այն դիրքերը, որոնք պետք է զբաղեցնեին իրենք, ինչպես նաև, որ Օվաջըքի ռազմաճակատի հրամանատար նշանակվեր Նուրի Դերսիմին, և թուրքական իշխանությունները իրենց անհրաժեշտ սպառազինություն մատակարարեին[171]:

Շուտով քեմալականները Հայդար փաշայի հրամանատարությամբ Չմշկածագ են ուղարկում թուրքական մեկ դիվիզիա, որը մի քանի քրդական ցեղերի աջակցությամբ շրջապատում է քոչան ցեղին: Սակայն Քալան շրջանի ցեղերը հրաժարվում են մասնակցել պատժիչ արշավանքին, իսկ քոչան ցեղի հարևան ռեսիքան և շեմքան ցեղերը միանում են նրանց և պայքարում թուրքական դիվիզիայի դեմ: Ստանալով այսպիսի օգնություն՝ քոչանցիներն իրենք են անցնում հարձակման թուրքական դիվիզիայի դեմ[172]: Ակներև էր, որ Հայդար փաշան թերագնահատել էր քրդերին, ուստի նրա դիվիզիան կրեց ծանր կորուստներ: Քրդերին հաջողվեց նույնիսկ զգետնել մեկ ռազմական ինքնաթիռ[173]:

Դիվիզիայի պարտության պատճառով տարաձայնություններ ծագեցին Հայդար փաշայի և Ալի Ձեմալի միջև: Հայդար փաշան դիվիզիայի պարտության ամբողջ մեղքը բարդում էր վերջինի վրա՝ գտնելով, որ պատժիչ արշավանքը պետք է իրագործվեր միայն թուրքերի ուժերով: Նրա հրամանով էրզինջանից Օվաջըք են բերվում հետևակային երեք գունդ, իսկ Օվաջըքի քրդական ցեղերը դուրս են բերվում մարտական գործողությունների վայրերից և հետ ուղարկվում, ինչը սակայն հանգեցնում է թուրքական զորքերի ավելի ծանր պարտութ-

[170] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 199:

[171] Տես նույն տեղում, էջ 200:

[172] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում, էջ 89:

[173] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 201:

յան: Վերադառնալով Օվաջըք՝ տեղի քրդական ջոկատներն իրենք են հարձակվում այդ երեք գնդերի վրա, ինչի հետևանքով ընկնում է զինվորների մարտական ոգին, և ավելի է խորանում նրանց ընկճվածությունը ցրտերի պատճառով: Թիկունքային ծառայության վատ աշխատանքի պատճառով զինվորները չէին ստանում իրենց սնունդը, դրա համար էլ նրանք իրենց զենքերն ու զինամթերքը փոխում էին քրդերի հետ սննդամթերքի դիմաց: 1927 թ. խոր աշնանը, երբ Դերսիմի լեռներում ձյուն տեղաց, զինվորները վերադարձան էրզինջան: Այս ծանր պարտությունն ավելի խորացրեց հակասությունը Հայդար փաշայի և Ալի Ջեմալի միջև: Հայդար փաշան ստիպված էր իր դիվիզիային հրամայել վերադառնալ էլյազիգ: Այստեղ փոխադրվեց նաև Հայդար փաշան էրզինջան[174]:

Դերսիմը հնազանդեցնելու Մ. Քեմալի երկրորդ փորձն ավարտվեց անհաջողությամբ: Դերսիմի առաջնորդները հասկացան, որ միասին լինելու դեպքում հնարավոր է հաղթել թուրքական զորքերին: Իրենց հետևություններն արեցին նաև քեմալականները և հասկացան, որ միայն ռազմական ուժով անհնար է ճնշել քրդական շարժումը և երկպառակություն սերմանել քուրդ առաջնորդների միջև, առավել ևս, որ Արարատում թափ առնող ապստամբությունը պահանջում էր այդտեղ ուղարկել մեծաքանակ զորք: Թուրքական իշխանությունները ստիպված էին, միաժամանակ, Դերսիմում անցնել ահաբեկման քաղաքականության:

Սակայն մինչև 1930 թվականը տևած Դերսիմի դիմադրական շարժման հերթական հանգրվանը, ի տարբերություն Արարատի ապստամբության, տեղային բնույթ էր կրում, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին ստիպելու Դերսիմի ազգաբնակչությանը հանձնել զենքերը: Եվ դերսիմցիները տեղի տվեցին: Նույն պահանջը տարածվեց նաև Առաջին գլխավոր տեսչության տարածքում բնակվող բոլոր քրդերի վրա: Ընդհանուր առմամբ հավաքվեց 20 հազ. մաուզեր և 160 հազ. այլ զենք[175]:

[174] Տես նույն տեղում, էջ 202:

[175] Տես *Ş. S. Aydemir.* İkinci adam. İsmet İnönü, cilt 1. İstanbul, 1968, s. 400:

3.2. **Առաջին համաքրդական կուսակցության՝ Հոյբունի ստեղծումը և Արարատի ապստամբությունը** 1927–1930 **թթ.**

Դերսիմցիների հնազանդեցումը այնքան էլ չէր ուրախացնում քեմալականներին, քանի որ դրան զուգահեռ սկսվել էր Արարատի ապստամբությունը, որը բնույթով տարբերվում էր նախորդներից: Հասկանալով, որ պայքարի հին ձևերով անհնար է հասնել հաղթանակի, քրդական վերնախավն ուղիներ էր փնտրում հակաթուրքական պայքարը որակական նոր մակարդակի բարձրացնելու համար: Սակայն չունենալով անհրաժեշտ մտավոր, գաղափարական, ֆինանսական, կազմակերպչական ուժ՝ նրանց բոլոր փորձերը դատապարտվում էին ձախողման: Խնդիրը ծանրանում էր նաև այն հանգամանքով, որ շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից հետո քեմալական իշխանությանը հաջողվել էր ծայրաստիճան թուլացնել քրդական վերնախավին՝ շատերին սպանելով, իսկ մյուսներին՝ կա՛մ արտասահման արտաքսելով, կա՛մ էլ՝ արևմտյան նահանգներ աքսորելով: Այսպիսով՝ Դերսիմից բացի մյուս վիլայեթներում քրդերը զրկված էին կազմակերպող և կառավարող ուժից:

Արտասահման փախած քուրդ երևելիները մեծ մասամբ հանգըրվանել էին Իրաքում, Սիրիայում, Եգիպտոսում և Լիբանանում: Թուրքիայում քրդերին միավորելու նրանց ջանքերը արդյունքներ չէին տալիս: Միակ ուժը, որ օգնության ձեռք մեկնեց նրանց, ՀՅԴ-ն էր, որը հանուն թուրքերի դեմ պայքարի ընդհանուր շահի համագործակցեց Հայոց ցեղասպանության և թուրք-հայկական պատերազմի մեջ մասնակցություն ունեցած քուրդ ղեկավարների հետ (Քոռ Հուսեյն, Իբրահիմ Հըսգե Թելլի, Իհսան Նուրի և այլք): 1927 թ. հոկտեմբերի 5-ին Լիբանանի Բհամդուն քաղաքում դաշնակցական Վահան Փափազյանի տանը տեղի է ունենում քուրդ մտավորականների և շեյխերի համագումար, որտեղ որոշվում է ստեղծել համաքրդական կուսակցություն՝ կազմված քրդական հասարակության բոլոր խավերից՝ անկախ նրանց սոցիալական, կրոնական, ցեղային և լեզվական ծագումից[176]: Այն անվանվեց Հոյբուն (Անկախություն): ՀՅԴ-ն, ունենալով գաղտնի գործունեության հարուստ փորձ, օգնում էր Հոյբունին կազմակերպորեն, ֆինանսապես և ռազմականապես: Բացի այդ, միջազգային ատյաններում բարձրացնում էր քրդական պրոբլեմը՝ հրապարա-

[176] Տես *Z. Silopi (Kadri Cemilpaşa).* Doza Kurdistan. Kürdistan Davası. Beyrut, 1969, s. 181:

կելով քեմալականների իրագործած զանգվածային սպանությունները և այլ բռնություններ: Քուրդ հետազոտող Աբդուլ Ռահման Ղասեմլուն իր «Քրդստանը և քրդերը» գրքում գրում է, որ ՀՅԴ-ն Հոյբունին աջակցում էր քաղաքական, կազմակերպչական և նյութական առումներով[177]: Իսկ մյուս քուրդ քաղաքական գործիչ Զիննար Սիլոփին նշում էր, որ բացի Դաշնակցությունից ոչ մի այլ կազմակերպություն կամ երկիր օգնության ձեռք չմեկնեց քրդերին, և որ ապագա Հայաստանի և Քրդստանի սահմանները պետք է որոշեն այդ երկրների կառավարությունները[178]: Թուրքական իշխանությունների համար սա շատ վտանգավոր էր, քանի որ դարեր շարունակ իրենց ազդեցության տակ գտնվող քրդական վերնախավը, որը նաև որպես կույր գործիք էր, այժմ իր ոխերիմ թշնամի ՀՅԴ դաշնակիցն էր դառնում: Եվ արդյունքներն սպասեցնել չտվեցին: Հոյբունի կանոնադրության մեջ մտավ մի կետ, որտեղ ասվում էր, որ պետք է համագործակցել և բարեկամություն հաստատել հայերի հետ որպես ընդհանուր թշնամու հանդեպ բախտակից ազգի՝ Հայաստանի և Քրդստանի անկախության և հողային ամբողջության փոխադարձ ճանաչումն ընդունելով որպես անվիճելի նախադրյալ: Հոյբունը նաև հանդես եկավ չորս կետից բաղկացած մի հայտարարությամբ, որի 4-րդ կետում ասվում էր, որ համագումարը հրապարակայնորեն հայտարարում է, որ Հայաստանը և Քրդստանը, որոնք դարերով բնակեցված են եղել այս ժողովուրդներով, մերժում են ենթարկվել որևէ օտար իշխանության, և որ այս երկու երկրները պատկանում են միայն հայ և քուրդ ժողովուրդներին[179]: ՀՅԴ-ի շնորհիվ Հոյբունը նշում էր, որ անկախության պայքարը տարածում էր միայն Թուրքիայի վրա և քրդերը ցանկանում էին բարեկամական կապեր հաստատել ազգակից Իրանի հետ, իսկ Սիրիայում և Իրաքում միայն հասնել քրդերի ազգային իրավունքների ճանաչմանը[180]: Այս քայլով թուրքերը զրկվում էին քրդերին Իրանի դեմ օգտագործելու հնարավորությունից, ինչպես նաև Անգլիային և Ֆրանսիային հակաքրդական պայքարի մեջ ներգրավվելուց:

---

[177] Տես *A. R. Ghassemlou.* Kurdistan and the Kurds. Praha, 1965, PP. 53- 54:

[178] Տես *Z. Silopi (Kadri Cemilpaşa).* Op. cit., p. 114- 116:

[179] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 349:

[180] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը. ՀՅ Դաշնակցություն-Հոյբուն համագործակցության և տարածաշրջանային զարգացումների համատեքստում: «Վէմ», 2014, հմ. 3 (47):

Այդ ժամանակ Արարատ լեռան լանջերին արդեն մեկ տարի թուրքերի դեմ ապստամբում էր հեսեսորի ցեղն իր ցեղապետ Իբրահիմ Հըսգե Թելլիի ղեկավարությամբ, ում քեմալական կառավարությունը որոշել էր աքսորել Թուրքիայի արևմուտք[181]: Հոյբունի և Դաշնակցության ղեկավարների ուշադրությունը միանգամից գրավեց այս ապստամբությունը, քանի որ այն վարվում էր Իրանին սահմանակից տարածքում, որտեղից կարելի էր համալրումներ հասցնել Արարատ: ՀՅԴ ջանքերով այնտեղ է ուղարկվում թուրքական բանակի նախկին կադրային սպա Իհսան Նուրի փաշան, որն իր ձեռքն է վերցնում ապստամբների ռազմական գործողությունների պլանավորումը, կազմակերպումը և իրագործումը, իսկ որպես նրա օգնական նշանակվում է Արտաշես Մուրադյանը[*]՝ Զելիմ խան կամ Զիլան բեյ ծածկանունով[**]:

Արարատի ապստամբության հենց սկզբում՝ 1926 թվականին, քեմալական կառավարությունը միանգամից մեծ ուժեր նետեց այն ճնշելու համար[***]: 1926 թ. մայիսի 16-ին Իբրահիմ Հըսգեի ուժերը մարտի են բռնվում թուրքական 9-րդ հետևակային դիվիզիայի 28-րդ գնդի և ժանդարմական գնդի դեմ ու պարտության մատնում նրանց[182]: Որոշ

[181] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում, էջ 96:

[*] Արտաշես Մուրադյան (1894–1938)՝ ՀՅԴ անդամ, հայ և քուրդ ազատագրական շարժման մասնակից (ավելի հանգամանորեն տես *Ա. Ս. Սայիյան,* Հայ-քրդական զինակցության խորհրդանիշը: Նորահայտ վավերագրեր Արտաշես Մուրադյանի կյանքի ու գործունեության մասին: «Վէմ», 2021, հմ. 4 (76)):

[**] Հայ-քրդական զինակցության մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում: Ե., 2017):

[***] Այն փաստը, որ քեմալական ռազմաքաղաքական ղեկավարությունը տեղյակ էր ծրագրվող ապստամբության մասին, փաստում են թուրքական հատուկ ծառայությունների զեկուցագրերը, որտեղ նշվում էր, որ բրիտանական իշխանությունները քուրդ և չերքեզ սպաներին Իրաքից գաղտնի անցկացնում են Թուրքիա՝ ապստամբությանը մասնակցելու նպատակով (ավելի հանգամանորեն տես *G. K. Moumdjian.* Armenian Involvement in the 1925 (Ararat) and 1937 (Dersim) Kurdish Rebellions in Republican Turkey: Mapping the Origins of “Hidden Armenians”. “Uluslararasi Suçlar ve Tarih / International Crimes and History”, 2018, N 19 (https://www.academia.edu/37972952/ ARMENIAN_INVOLVEMENT_IN_THE_1925_ARARAT_AND_1937_DERSIM_KURDISH_REBELLIONS_IN_REPUBLICAN_TURKEY_MAPPING_THE_ORIGINS_OF_HIDDEN_ARMENIANS)):

[182] Տես *F. Bulut.* Devletin Gözüyle Türkiye’de Kürt İsyanları. İstanbul, 1991, s. 80:

ժամանակ անց՝ հունիսին, թուրքերը պարտվում են նաև երկրորդ բախման ժամանակ, որտեղ մասնակցում էր նաև 34-րդ հետևակային գունդը[183]: Քեմալականների վախն այնքան մեծ էր, որ նրանք Արարատի, Բայազետի և Ալաշկերտի ապստամբների դեմ նետեցին միանգամից 2 բանակային կորպուս (4-րդ և 6-րդ)[184]:

Թեև այս կորպուսները համալրված չէին պատերազմական ժամանակաշրջանի հաստիքներով և ունեին մոտավորապես 10 հազար զինվոր, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնական շրջանում Արարատի ապստամբներին դեռ չէին միացել Ալաշկերտի, Ձիլանի, Աբաղայի և Կողբի քրդերը, թուրքական ուժերը դեռ հզոր ուժ էին:

1927 թ. գարնանը թուրքերն Արարատի վրա են հարձակվում Իգդիրից և Բայազետից, սակայն ջախջախվում են՝ կրելով բազմաթիվ կորուստներ՝ 2 հազար սպանված, 40 գերի, 12 թնդանոթ, 36 գնդացիր, մեծաքանակ փոխադրական միջոցներ (հիմնականում՝ ջորիներ) և ռազմամթերք[185]: Այս պարտությունից հետո թուրքերը չեն համարձակվում փոքրաթիվ ուժերով առճակատման գնալ և Արարատի շուրջ զորքեր են կուտակում: Իսկ քրդերը զարգացնելով հաջողությունը՝ աշնանը ջախջախում են Բայազետի կայազորը՝ գերի վերցնելով 10 սպայի և 45 զինվորի[186]:

Այս հաջողություններից հետո՝ 1927 թ. հոկտեմբերի 28-ին, Սևրի պայմանագրի համաձայն Հոյբունը հռչակեց Քրդստանի անկախությունը, ինչպես նաև պատերազմ հայտարարեց Թուրքիային: Որպես ժամանակավոր մայրաքաղաք հռչակվեց Քուրդավա գյուղը, իսկ այնուհետև՝ Դիարբեքիրը[187]: Արարատում Հոյբունի ներկայացուցիչն էր Մեմդուհ Սելիմ* բեյը[188]: Հասկանալի էր, որ քեմալական կառավա-

[183] Տես նույն տեղում, էջ 83:

[184] Տես *W. G. Elphinston.* Kurds and the Kurdish Question. “Journal of The Royal Central Asian Society”, . 1948, Vol. 35, Part 1:

[185] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 270:

[186] Տես *Մ. Ա. Գասրատյան.* Курды Турции в новейшее время, с. 150:

[187] Տես *A. Safrastyan.* Kurds and Kurdistan. London, 1948, P. 84:

* Մեմդուհ Սելիմ բեյ (1880-1976)՝ քուրդ քաղաքական գործիչ: Առաջին աշխարհամարտից հետո անդամագրվել է սեիդ Աբդուլքադիրի «Քրդստանի վերածննդի ընկերություն» կազմակերպությանը: Շեյխ Սայիդի ապստամբությունից հետո արտագաղթել է Սիրիա, որտեղ Զելադեթ Բարխանի հետ աշխատանքներ է տարել համաքրդական «Հոյբուն» կուսակցության ստեղծման համար: Արարատի ապստամբության ժամանակ նա վերադարձել է և Իհսան Նուրիի հետ

ությունը պետք է աներ ամեն ինչ ապստամբությունն օր առաջ ճնշելու համար, քանի որ նյութականանում էր հայ-քրդական զինակցությունը, ինչը Մ. Քեմալին հիմք էր տալիս կարծելու, թե ստեղծվելու է միասնական հայ-քրդական պետություն, որը Թուրքիայի համար ունենալու է մահացու ազդեցություն: Արևելյան վիլայեթներում բռնկվող քրդական ապստամբություններից, որոնցից ամենանշանակալին իհարկե Արարատի ապստամբությունն էր, ընդգրկվում էին ավելի ու ավելի շատ հայեր: Այստեղ մարտնչում էին ինչպես այդ շրջաններում մնացած, այնպես էլ Արևմտյան Հայաստան ներթափանցած հայերը: Մեծ էր հայերի թիվը նաև Դերսիմի և Սասունի ապստամբություններում: Մասնավորապես՝ հայտնի է, որ Սղերդի և Ռադուանի* հայերի և եզդիների կիսանկախ դրությանը վերջ տալու նպատակով 1926 թվականին Բիթլիսի վալին 30 հազ. զորքով հարձակվում է նրանց վրա, սակայն հայ-եզդիական միացյալ 10 հազ. զորքին հաջողվում է հետ շպրտել նրանց: Նույն կերպ են վարվում նաև Սասունի հայերը և քրդերը, որոնք հնարավորություն չեն տալիս թուրքական զորքերին Սասունով անցնելու դեպի Մուշ՝ այնտեղի քրդական ցեղերի կիսանկախ վիճակը վերացնելու նպատակով: Անցնելով առաջ՝ նշենք, որ քեմալական կառավարությանը միայն 1934 թ. հաջողվեց ծնկի բերել այդ ըմբոստացող շրջանների հայերին[189]:

Քեմալականների համար դրությունն ավելի էր ծանրանում նաև այն պատճառով, որ քրդական վերնախավի և հասարակ ժողովրդի մեծ մասը ապստամբությունների արյունոտ ճնշումներից հետո փոխել էր վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ թուրքական տիրապետության դեմ պայքարում նրանց ընկալելով որպես դաշնակիցներ: Բացի այդ՝ հայերը թվաքանակով այնքան քիչ էին, որ քրդերը նրանցից որևէ վտանգ չէին սպասում:

Հասկանալով, որ հնարավոր չէ քրդերին տրամադրել հայերի դեմ և զգալով հայերի և քրդերի միավորվելու վտանգը՝ քեմալական կառավարությունը 1929 թ. որոշում ընդունեց արտաքսել Արևմտյան Հայաստանի և նրան հարակից շրջանների հայերին՝ արգելելով նրանց վերադարձը: Սակայն մինչ այդ քեմալական իշխանությունն-

ամբողջ ապստամբության ժամանակ մնացել Արարատում: Ապստամբության պարտությունից հետո նորից անցել է Սիրիա, որտեղ էլ մահացել է 1976 թ.:

188 Տես *R. Alakom.* Hoybûn Örgütü ve Ağrı Ayaklanması. İstanbul, 1998, s. 42:

* Ռադուան՝ գավառակ (քազա) Բիթլիսի նահանգի (վիլայեթ) Սղերդի գավառում (սանջակ):

189 Տես *Ս. Կ. Պողոսյան,* Քրդերը և Հայկական հարցը: Ե., 1991, էջ 278:

րը հայերի նկատմամբ սկսել էին տնտեսական հալածանքներ՝ սնանկացնելով և ունեզրկելով նրանց: Այդ գործում նրանց ակտիվորեն օգնում են «Թուրքական օջախները»: Այսպես. Դիարբեքիրի մասնաճյուղը որոշում է առևտրական հարաբերությունների մեջ չմտնել հայերի հետ, չվճարել պարտք, բռնի կերպով գանձել գումարներ և բռնագրավել նրանց ունեցվածքը[190]: 1929 թվականի հունվարի 1-ին քեմալական կառավարությունը արձակում է հրաման, համաձայն որի հայերն իրավունք չունեին վաճառելու իրենց անշարժ գույքը, կամ կտակելու այն: Ամենուրեք թուրք ոստիկանները հրահանգում էին հայերին առանց հապաղելու հավաքվել որևէ քաղաքում: Ունենալով անցյալի ջարդերի դառը փորձը՝ շատ հայեր միանգամից փախչում են դեպի սիրիական սահման: Պետք է նշել, որ այս անգամ թուրքական իշխանություններն աշխատում էին տեղահանությունն իրագործել առանց ջարդերի՝ շեշտը դնելով թալանի վրա: Սակայն եղել են նաև սպանությունների դեպքեր, ինչպես, օրինակ, Դիարբեքիրի հայ քահանայի սպանությունը, որից հետո թուրքական իշխանությունները, ձերբակալելով նրա կնոջն ու ծառային, ստիպել են նրանց խոստովանել, որ սպանությունը կատարել են հայերը[191]: Ստանալով այդ «խոստովանությունը»՝ քեմալականները ձերբակալել են բազմաթիվ հայերի՝ նրանց աքսորելով Թուրքիայի տարբեր վայրեր: Խարբերդի Հայ ավետարանչական եկեղեցու մեջ ռումբ է պայթեցվել, որի մեղքը նույնպես բարդվել է հայերի վրա: Ձերբակալելով մի քանի հայերի՝ քեմալականները խոստացել են բաց թողնել նրանց, եթե նրանք համաձայնեն գաղթել Սիրիա[192]:

1929 թվականին քեմալական իշխանությունները շարունակում են Արևմտյան Հայաստանից և նրան հարակից շրջաններից հայերի վտարումը դեպի Սիրիա: Բշերիկի շրջանից Սիրիա էր անցել մոտ հինգ հազար հոգի՝ ութ հարյուր ընտանիք, որոնցից վեց հարյուրը միաժամանակ ապաստան են գտնում Կամիշլիի և Հասիկեի շրջաններում[*], իսկ երկու հարյուրը՝ Հալեպում[193]: Նույն ժամանակ

[190] Տես «Հայրենիք»: Բոստոն, 1931, հմ. 7, էջ 170:

[191] Տես *Զ. Մսըրլեան,* Քեմալական Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը Հայոց նկատմամբ (1919-1942): «Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ 2018, հ. 38:

[192] Տես նույն տեղում:

[*] Ալ Հասաքա՝ քաղաք Սիրիայի հյուսիս-արևելքում, համանուն մարզի վարչական կենտրոնը:

[193] Տես *Ա. Ֆիշենկճեան,* Հայերու հոսքը դէպի Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջանները: «Տաթեւ հայագիտական տարեգիրք»: Հալեպ, 2008, էջ 314:

Խարբերդում կուտակվել էր չորս հազար հայ, որոնց քեմալականները հավաքել էին տարբեր շրջաններից[194]: 1930 թվականի մարտի 31-ի տվյալներով՝ Թուրքիայից Սիրիա գաղթած հայ ընտանիքների թիվն անցնում էր 800-ից[195]: Հայերը տեղահանվում էին Դիարբեքիրից, Խարբերդից, Բալուից, Մարդինից, Վանից, Բշերիկից: Ճանապարհին նրանք ենթարկվում էին բազմաթիվ զրկանքների՝ ստիպված լինելով կիսասոված և գրեթե առանց հանգստանալու քայլել դեպի սիրիական սահման: Ճանապարհի դժվարությունները հատկապես ծանր էին տանում երեխաները: Ճշտված տվյալներով՝ տարբեր հիվանդություններից ճանապարհին մահացել էր 130 երեխա[196]: Սովորական երևույթ էր նաև կողոպուտը, և բռնագաղթվածներից շատերը թուրք-սիրիական սահման էին հասնում ծայրահեղ թշվառ վիճակում: Այս դաժան բռնագաղթի մասին իր ղեկավարությանն է հայտնում Հալեպում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Մոնք Մեյսոնը՝ այն համեմատելով 1915 թվականի կոտորածների հետ և նշելով, որ բոլոր բռնաճնշումները ճշտորեն համընկնում են բացի կոտորածներից[197]: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցուցում է, որ քեմալականները երիտթուրքերի իրավահաջորդներն են:

Ընդհանուր առմամբ 1929–1930 թվականներին քեմալական իշխանությունները բռնագաղթի ենթարկեցին մոտ 30 հազ. հայերի[198] (մեկ այլ տվյալով՝ 40 հազ[199]): Հատկանշական է, որ նրանց մեջ շատ էին քրդախոսները, ինչը վկայում է, որ քեմալականները գիտեին ծպտյալ հայերի մասին և առաջին իսկ հնարավորության դեպքում նրանց բռնաճնշումների էին ենթարկում:

Հայերի այս բռնագաղթը հերթական անգամ ուղեկցվեց նրանց անշարժ և շարժական գույքի թալանով: Դրանց վաճառքից ստացված գումարն այնքան շատ էր, որ անգամ տնտեսական ճգնաժամի պայմաններում 1929 թվականին պետական գանձարան մուծվեց 300 000 լիրա, իսկ բյուջեի բանկային աճը կազմեց՝ 300 միլիոն: 1930-ական թվականների սկզբին բյուջեի եկամտի գլխավոր աղբյուրը հայերից բռնագրված գումարներն էին[200]:

---

[194] Տես *Զ. Մսըրլեան,* Նշ. աշխ.:

[195] Տես *Ա. Ֆիշենկճեան,* Նշ. աշխ., էջ 317:

[196] Տես *Զ. Մսըրլեան,* Նշ. աշխ.:

[197] Տես «Հայոց պատմություն», հ. IV, գիրք երկրորդ: Ե., 2016, էջ 504:

[198] Տես *Զ. Մսըրլեան,* Նշ. աշխ.:

[199] Տես *Ա. Աստոյան,* Հայերի ունեզրկումը Թուրքիայում 1918-1923 թթ, էջ 413 (https://banber.matenadaran.am/ftp/data/Banber19/25.A.Astoyan.pdf):

[200] Տես նույն տեղում, էջ 416:

Քեմալականները հրահրում էին ինչպես հայերի և քրդերի միջև ազգամիջյան, այնպես էլ քրդերի շրջանում միջցեղային թշնամանք: Սակայն 1928 թվականին նրանց չհաջողվեց ո՛չ քրդերին հրահրել կոտորելու հայերին և ո՛չ էլ իրենց կողմը գրավելու գեթ մեկ քրդական ցեղի: Մոլեռանդ մահմեդականների համար քեմալականները Անկարայում հրատարակեցին «Կանաչ գիրքը», որտեղ նշվում էր, որ Հոյբունը հռչակվում էր որպես արևմտյան գործակալական կազմակերպություն և, որ 1925 թ. շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո քրդական շարժումը վերակենդանացավ՝ շնորհիվ Հոյբունի[201] և մեկ այլ արևմտյան գործակալ ՀՅԴ համագործակցության[202]: Սակայն գրքի հրատարակումը չունեցավ սպասվելիք ազդեցությունը, իսկ իրավիճակն ավելի ծանրացավ թուրքական իշխանությունների համար: 1928 թ. մայիսի կեսերին թուրքական մի մեծ պատվիրակություն, որի կազմի մեջ էին ԹԱՄԺ-ի 12 պատգամավորներ, Ղարաքիլիսե վիլայեթի նահանգապետը, Դիադինի և Բայազետի կայմակամները, 29-րդ գնդի հրամանատարը և վիլայեթի ժանդարմերիայի պետը, հասավ Արարատի փեշերին գտնվող Շեյխլի Քյոփրյու վայրը, որը թուրքական բանակի և քրդական ջոկատների սահմանագիծն էր և տեսակցություն խնդրեց Իհսան Նուրիից: Հանդիպման ժամանակ թուրքական կողմը կառավարության անունից ապստամբների հանձնվելու դեպքում համընդհանուր ներում խոստացավ, իսկ անձամբ Իհսան Նուրիին՝ բարձր կառավարական պաշտոններ երկրի ներսում կամ արտերկրում, մասնավորապես՝ ռազմական կցորդ թուրքական որևէ դեսպանատանը[203]: Իհսան Նուրին մերժեց առաջարկը, պատասխանելով, որ իր համար միակ ընդունելի պայմանը կլինի այն, որ թուրքական զորքերը լքեն Քրդստանը և Թուրքիան ճանաչի նրա անկախությունը[204]: Ստանալով այդպիսի պատասխան՝ թուրքական կողմը որոշեց առանձին բանակցել քուրդ ցեղապետերի հետ՝ հույս ունենալով, որ բախտն այս անգամ կժպտա իրենց: Սակայն այստեղ էլ նրանց սպասում էր խոր հիասթափություն. միայն Արարատի Ազգային ժողովի անդամ Բեքիրե Հաջին հավատաց թուրքերի խոստումներին

[201] Տես «Հայրենիք», 1931, հմ. 5785, էջ 2:

[202] Տես *Վ. Բայբուրդյան,* XX դարի 20-30–ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք - իրանական հարաբերությունները: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXI: Ե., 2002, էջ 12:

[203] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 109:

[204] Տես *Վ. Բայբուրդյան,* Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 353:

և հանձնեց զենքը: Արարատի հեղափոխության կոմիտեն որոշեց մահապատժի ենթարկել դավաճանին՝ որպես դաս ուրիշներին: Մահավճիռն ի կատար ածվեց: Սակայն այս անհաջողությունը չհուսահատեցրեց Գլխավոր տեսուչ Իբրահիմ Թալի բեյին, որը կարծելով, թե Նուրին չի մերժի իրեն, իր և Վանի վալիի ստորագրությամբ մի նամակ ուղարկեց նրան՝ նշելով, որ հանձնվելու դեպքում նրան խոստանում են խոշոր գումար, կորպուսի հրամանատարի պաշտոն, կամ դեսպան, որ երկրում որ ինքը ցանկանա: Սակայն Իբրահիմ Թալին էլ ստացավ մոտավորապես նույն պատասխանը, ինչ-որ թուրքական պատվիրակությունը մի քանի շաբաթ առաջ Շեյխլի Քյոփրյուի մոտ[205]:

Չախողվելով այս բանակցություններում՝ քեմալականները որոշում են նորից դիմել ռազմական ուժին: Նրանք երկրի կենտրոնական և արևմտյան շրջաններից բերում են նորանոր համալրումներ: Թեև Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում քեմալականներին հաջողվեց ճնշել ապստամբությունները, սակայն 1928 թ. նրանք Արարատում կրեցին պարտություններ: 1928 թ. հունվարին քրդական ուժերը կտրեցին Մոտկի-Բիթլիս ճանապարհը: Մարտին Բայազետի մոտ տեղի ունեցավ նոր ճակատամարտ, որն ավարտվեց քրդերի հաղթանակով: Սեպտեմբերին նորից Բայազետի մոտ տեղի ունեցավ նոր ճակատամարտ, որը նույնպես ավարտվեց քրդերի հաղթանակով: Բայազետի վալին գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց[206]: Այս մարտերը շղթայական ռեակցիա առաջ բերեցին ոչ միայն Թուրքիայի քրդաբնակ վիլայեթներում, այլև Իրանի, Իրաքի և Սիրիայի քրդերի, ինչպես նաև հայերի և ասորիների շրջանում: Նրանց մի մասին կազմակերպում և Թուրքիա էին ուղարկում Հոյբունը, ինչպես նաև քրդական այլ կազմակերպություններ, իսկ մի մասն էլ գալիս էր իր նախաձեռնությամբ՝ օգնելու ազգակից կամ դրացի ժողովրդին, որն օրհասական պատերազմ էր մղում թուրքերի դեմ: Արարատի ապստամբները Բայազետի մոտ տարած հաղթանակից հետո կազմեցին 3-5 հոգուց բաղկացած շարժունակ հեծելազորային ջոկատներ՝ դեսթեներ, որոնք կատարում էին խոր ռազմերթեր թուրքերի թիկունքում և հանկարծակիի բերելով այդ վայրերում տեղակայված բանակային և ոստիկանական ստորաբաժանումներին՝ պարտության էին մատնում նրանց և, խլելով մեծաքանակ սպառազինություն ու կենդանիներ, վերադառնում էին Արարատ: Ուստի որպեսզի կանխարգելեն այսօրի-

[205] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 281:

[206] Տես *D. McDowall.* Op. cit., p. 204:

նակ ռազմերթերը, թուրքական հրամանատարությունը որոշում է քրդական ջոկատներին զրկել նրանց օգնող ուժից, այսինքն՝ ոչնչացնել շրջակա քրդական գյուղերը: Այսպես. 1928 թ. նոյեմբերի 14-ին Բայազետում տեղակայված 29-րդ հետևակային գունդը, 18-րդ սահմանապահ և 4-րդ ժանդարմական գումարտակը, որոնք իրենց հետ բերել էին նաև 9-րդ հրետանային գնդի 1 թնդանոթ, շրջապատում են Բայազետի սանջակի Քանիքուրք գյուղը: Անակնկալի եկած գյուղացիները թուրքերի մոտ են ուղարկում 70 տարեկան մի կնոջ՝ իմանալու համար, թե ինչու է պաշարված գյուղը: Սակայն կինը իր երկու տարեկան թոռան հետ սպանվում է թուրքերի գնդակից: Գազազած գյուղացիները հարձակվում են թուրքերի վրա և կռվում նրանց դեմ: Թուրքերը ունենում են 20 սպանված, սակայն շնորհիվ իրենց թվական գերազանցության կարողանում են կոտրել գյուղացիների դիմադրությունը և ներխուժել գյուղ: Հավաքելով իրենց բոլոր ուժերը, քրդերը կարողանում են ճեղքել պաշարման օղակը և քաշվել դեպի Արարատ ու միանալ ապստամբներին՝ կորցնելով 1 տղամարդ, 2 կին և 1 աղջիկ: Սակայն գյուղից փախչել չեն կարողանում մի քանի հոգի՝ հիմնականում ծերեր և վիրավորներ, որոնց թուրքերը նետում են կրակի մեջ և այրում[207]: Չբավարարվելով այսքանով՝ թուրքական զորքերը հրետանային կրակ են բացում Արարատի ապստամբների հսկողության տակ գտնվող Չիֆթիլիք և Քուրդավա գյուղերի վրա, իսկ 3 թուրքական ինքնաթիռներ պտույտ են գործում այդ գյուղերի վրա: Երկու օր անց՝ նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 20-ը, թուրքական երկու ինքնաթիռներ ռմբակոծում են Արարատի գյուղերը՝ առանց որևէ էական հաջողության: 1929 թ. աշնան վերջին Արարատի և այլ վայրերի ապստամբական ուժերն իրենց հսկողության տակ էին առել բավական խոշոր տարածքներ: Ակնհայտ էր, որ քեմալական կառավարությունը բախվել է շատ ծանր իրավիճակի, որի համեմատ շեյխ Սայիդի ապստամբությունը թույլ ապստամբություն էր: 1929 թ. ամբողջ ընթացքում թուրքական զորքերը դաժանաբար ճնշում էին քրդերի ելույթները և ավելի ամուր փակում թուրք-իրաքյան և թուրք-սիրիական սահմանները՝ զրկելով արարատցիներին էական օգնությունից: Թուրքական հրամանատարությունն ընտրել էր հետևյալ մարտավարությունը. շրջապատել Արարատը և թույլ չտալ ապստամբության ծավալումը, իսկ հիմնական ուժերը նետել սահմանները փակելու և քրդաբնակ վիլայեթները խաղաղացնելու համար:

[207] Տես «Դրօշակ», 1929, հմ. 8, էջ 147:

Թուրքական իշխանությունները հասկանում էին, որ առանց կոշտ ու հստակ ներքին և արտաքին քաղաքականության հնարավոր չէր լուծել քրդական պրոբլեմը: Այդ նպատակով դեռ 1928 թ. աշնանը ձերբակալվում է շեյխ Սայիդի ավագ որդին՝ շեյխ Ալի Ռիզան, որը, հավատալով թուրքական կառավարության հռչակած համաներմանը, Իրաքից անցել էր Թուրքիա և իր հավատարմությունն էր հայտնել թուրքական կառավարությանը[208]: Մի քանի ամիս անց էրզրումում ձերբակալվում է նրա կրտսեր եղբայր Սալահեդդինը, որը շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո փախել էր Իրաք, որտեղ համագործակցելով բրիտանացիների հետ՝ դարձել էր Իրաքում ձևավորված «Քրդերի բարեկամների ընկերություն» կազմակերպության անդամը: Վերադառնալով Թուրքիա՝ նա էրզրումում հիմնում է այսպես կոչված՝ «Հյուսիսային Քրդստանի ընկերություն» կազմակերպությունը, որը կարճ ժամանակ անց իր մասնաճյուղերն է ստեղծում Դամասկոսում և Հալեպում: Նա տարածում էր թռուցիկներ և այլ գրականություն, որտեղ նշում էր հայ-քրդական զինակցության ստեղծման անհրաժեշտությունը[209]: Նույն այդ ժամանակ ձերբակալվում է շեյխ Սայիդի եղբայր շեյխ Աբդուռահմանը, որին առաջադրվում է նոր ապստամբություն կազմակերպելու մեղադրանք[210]: 1929 թ. սեպտեմբերին էրզրումում թուրքական իշխանությունները փակում են Հոյբունի մասնաճյուղը, իսկ նրա անդամներին բանտարկում կամ աքսորում[211]: Առավել արմատականորեն տրամադրված քուրդ առաջնորդներին թուրքական կառավարությունը ոչնչացնում էր կա՛մ անմիջականորեն, կա՛մ էլ իրեն հավատարիմ քուրդ առաջնորդների ձեռքերով, ինչպես դա տեղի ունեցավ հայդարան ցեղի առաջնորդ Քոռ Հուսեյն փաշայի հետ, որը Հոյբունի առաջադրանքով Սիրիայից անցել էր Իրաք՝ շեյխ Ահմեդ Բարզանիի մոտ, որտեղից ուղևորվել էր Փիրան՝ Նուի բեյի մոտ, այնուհետև՝ Իրան, սակայն Սասունի մոտ նա կասկածելի հանգամանքներում սպանվել է: Ըստ առաջին վարկածի՝ նրան սպանել են Նուի բեյի մարդիկ, իսկ ըստ երկրորդ վարկածի՝ Ահմեդ Բարզանին: Այդ առեղծվածը մնաց չբացահայտված, քանի որ կարճ ժամանակ

[208] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 281:

[209] Տես *A. Hassan.* The Kurds. A Historical and Political Study. London, 1966, P. 39:

[210] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 128:

[211] Տես *Т. Кросс.* Внутреннее положение Турции. «Международная жизнь». М., 1930, № 7- 8:

անց նույնպես տարօրինակ հանգամանքներում սպանվեց նաև Նուի բեյը[212]:

Միևնույն ժամանակ, թուրքական իշխանությունները Իրանից և Իրաքից Թուրքիա անցած ապստամբ քուրդ ցեղապետերի և շեյխերի նկատմամբ կիրառում էին նաև «բլիթի» քաղաքականություն՝ առաջարկելով ոսկի ու պաշտոն և փոխարենը պահանջելով հավատարմություն ու զինվորական օգնություն: Օրինակ՝ Հաքյարիի վալին իր մոտ ապաստան տվեց Իսմայիլ աղա Սըմկոյին* և հրաժարվեց նրան վերադարձնել իրանական իշխանություններին[213]:

Էրզրումում թուրքական իշխանության դաշնակիցը դարձավ Միր Լիվա (գեներալ) Հասան Թահսին բեյ Շարաֆուդդինը, որը նշանակվեց Քրդստանի «վալի ումումի» (գլխավոր ղեկավար): Քեմալականները ցանկանում էին օգտագործել նրա մտերիմ հարաբերությունները Մահմուդ Բարզանջիի**, ինչպես նաև մանգուր, մամաշ, խարկի, յամե-

[212] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում, էջ 131:

* Իսմայիլ աղա Շեքքաք (Սըմկո)՝ 1887-1930, քրդական շեքքաք ցեղի առաջնորդ, խոշոր ավատատեր: Նրա նստավայրն էր Չիխրիկ ամրոցը Բարանդուզ գետի ափին՝ Ուրմիա քաղաքի մոտ: Հայտնի էր որպես մոլեռանդ հայատյաց: 1918-1920 թթ. թուրքական իշխանությունների թելադրանքով սանձազերծել է հայկական և ասորիական կոտորածներ, ինչպես նաև ապստամբել է իրանական իշխանությունների դեմ: 1922 թ. մի քանի անգամ նրան հաջողվել է հաղթանակներ տանել իրանական զորքերի դեմ, ինչի շնորհիվ նրա իշխանության տակ են անցել հյուսիսարևմտյան Իրանի որոշ քաղաքներ և շրջաններ, սակայն նույն թվականին Թաջի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրել է ծանր պարտություն կառավարական զորքերից և փախել Թուրքիա, որտեղ քեմալական իշխանությունները օգտագործել են իրանական և բրիտանական իշխանությունների դեմ քրդական ապստամբություններ հրահրելու համար: Նա չի մասնակցել ո՛չ շեյխ Սայիդի ապստամբությանը և ո՛չ էլ Արարատի ապստամբությանը՝ իր այդ քայլը բացատրելով, որ այս վերջինը կազմակերպել են հայերը: Սեիդ Տախայի հետ նա «Հոյբունի» հակառակորդն էր, քանի որ այն համագործակցում էր ՀՅԴ-ի հետ: Ի վերջո 1930 թ. իրանական իշխանություններին հաջողվում է նրան խաբեությամբ գցել ծուղակը և սպանել:

[213] Տես *Ա. Ս. Սայիյան,* Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համածիրում, էջ 131:

** Շեյխ Մահմուդ Բարզանջի (1881–1956)՝ քուրդ քաղաքական գործիչ, սերում է հայտնի Կադիրիա սուֆիական տոհմից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո անգլիացիները նրան 1918 թ. նոյեմբերի 1-ին հռչակեցին Սուլեյմանիեի

նի, փիշդեր ցեղերի ցեղապետերի հետ և ուղարկել նրան իրաքյան Քրդստան՝ տեղի քրդական ցեղերը Թուրքիայի շահերին համապատասխան ծառայացնելու նպատակով: Սակայն քեմալականների այս ծրագիրը հաջողություն չունեցավ[214]:

Այսպիսով՝ մինչև 1930 թ. սկիզբը Թուրքիայի արևելյան և հյուսիսարևելյան մի շարք վիլայեթներ գտնվում էին քրդերի հսկողության տակ: Մ. Քեմալի համար ակնհայտ էր, որ ապստամբությունը ճնշելը լինելու է շատ դժվար: Դրությունն ավելի էր բարդանում համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով, ինչպես նաև բուն երկրի ներսում Քեմալի դեմ գլուխ բարձրացնող ծախ և հատկապես աջ ընդդիմության ազդեցության աճով: Տվյալ պայմաններում նրան քրդական ճակատում անհրաժեշտ էր հանգիստ:

Ըստ բրիտանական հետախուզության տվյալների՝ քուրդ ազգայնականները թուրքական կառավարությանն էին ներկայացրել Թուրքիայի կազմում քրդական պետության ստեղծման պահանջ, որն իր մեջ պետք է ներառեր Դիարբեքիրը, Խարբերդը, Սվազը, Էրզրումը, Վանը և այլ վիլայեթներ: Նա պետք է ունենար լայն ինքնավարության

«հյուքյումդար»՝ կառավարիչ: Սակայն 1919 թ. մայիսին նա ապստամբում է բրիտանացիների դեմ և իրեն հռչակում «Քրդստանի թագավոր»: 1919 թ. հունիսի 19-ին Դերբենդե Բազիանի ճակատամարտում պարտություն է կրում բրիտանացիներից և գերի ընկնում: Բրիտանական դատարանը նրան դատապարտում է 10-ամյա աքսորով Հնդկաստան: Սակայն Քեմալի զինակից Օզդեմիր փաշայի ներխուժումը Հյուսիսային Իրաք ստիպում է անգլիացիներին Մ. Բարզանջիին հետ բերել Սուլեյմանիե և նշանակել նրան որպես մարզի ինքնակառավարման խորհրդի նախագահ: Բայց պաշտոնը ստանձնելուն պես նա իրեն նորից հռչակում է «Քրդստանի թագավոր»: Բրիտանացիները ստիպված ընդունում են այդ փաստը: Նա սկսում է գաղտնի բանակցություններ վարել քեմալականների և բոլշևիկների հետ՝ Ուրմիայի խորհրդային հյուպատոսության միջոցով նամակ ուղարկելով Վ. Լենինին՝ ռազմական օգնություն խնդրելով նրանից: 1923 թ. փետրվարին բրիտանացիները պահանջում են նրան ենթարկվել, սակայն ստանալով մերժում՝ սկսում են ռմբակոծել Սուլեյմանիեն: Մ. Բարզանջին ստիպված է լինում քաշվելու լեռները, սակայն 1927 թ. հանձնվում է անգլիացիներին: Նոր ապստամբությունը տեղի է ունենում 1930 թ., երբ կնքվում է Իրաքին վաղաժամկետ անկախություն տալու պայմանագիրը, որտեղ գրված չէր քրդերի իրավունքների մասին: Նա աքսորվում է Հարավային Իրաք, որտեղ մնում է մինչև 1941 թ, երբ իշխանության է գալիս Ռաշիդ Ալի Գայլանիի ազգայնական կառավարությունը: Բրիտանացիները Բարզանջիին նորից բերում են Սուլեյմանիե՝ խոստանալով ապստամբության դեպքում ճանաչել Քրդստանի անկախությունը, իսկ նրան էլ՝ որպես թագավոր: Սակայն նրան չի հաջողվում բարձրացնել ապստամբություն՝ տեղի ցեղերի առաջնորդների մերժման պատճառով:

[214] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 131:

կարգավիճակ՝ որոշ պայմաններով, որոնք կկարգավորեին երկու պետությունների միջև հարաբերությունները[215]:

Ըստ նույն աղբյուրի՝ Մ. Քեմալը և ԹԱՄԺ-ի խոսնակ Ք. Օզալփը ցանկանում էին ընդունել այդ պայմանները, սակայն դրան կտրուկ դեմ արտահայտվեցին Ի. Ինյոնյուն, ինչպես նաև Թուրքիայի ԹԱՄԺ-ի ծայրահեղ ազգայնական պատգամավորները, որոնք ոչ միայն չէին ուզում լսել Թուրքիայի կազմում ինքնավարության մասին, այլև շարունակում էին Մեծ Բրիտանիայից պահանջել Մոսուլի վիլայեթը, իսկ Ֆրանսիայից՝ Ալեքսանդրետի (Իսքենդերուն-Հաթայ) սանջակը[216]: Շուտով, սակայն, պարզվեց, որ Մ. Քեմալն ուղղակի ժամանակ էր ձգում, որպեսզի կարողանար ոչնչացնել իր դեմ աճող ընդդիմությանը, ինչից հետո՝ արդեն 1930 թ. ձմռանը, նա հրամայեց բանակին սկսել Արարատը գրավելու ռազմագործողությունը:

Ռազմական գործողությունները, որոնք ավարտվել էին 1929 թ. սեպտեմբերի 14–27-ին՝ թուրքական զորքերի կողմից Թոնդուրեկի ապստամբության ճնշումով, 1930 թ. փետրվար–մարտ ամիսներին վերսկսվեցին նոր ուժով [217]: Սակայն սկզբում դրանք տեղի ունեցան ոչ թե Արարատում, այլ հարավում՝ Բայազետում, Վանում, Բիթլիսում, որից հետո տարածվեցին Դիարբեքիրի և Բոհթանի շրջաններ:

Բայազետի շրջանում գործող 3–5 հազար ապստամբների հրամանատարն էր Հալիսը, որը պարտության մատնեց իր դեմ գործող թուրքական զորքերին: Թուրքական հրամանատարությունը իրավիճակը շտկելու համար Էրզրումից, Բայազետից և Էրզինջանից նրանց դեմ հանեց 15 հազարանոց մի զորախումբ, որը նույնպես պարտություն կրեց[218]:

1930 թ. ապրիլի 6-ին Արարատի ապստամբների դեմ ուղարկված թուրքական զորախումբը պարտություն կրեց Քիրեի մոտ: Մայիսին կրկին ոտքի կանգնեց 150 հազարանոց ջալալի ցեղային միությունը, որին միացան հայդարան, զիլան, խալիկան և այլ ցեղեր: Սկսվեց Արարատի երրորդ ապստամբությունը, այստեղ ևս սկզբում ռազմական հաջողությունը քրդերի կողմն էր: Հունիսի 21-ին ծուղակում հայտնվեց Սուբիի փաշայի հրամանատարության տակ գտնվող զորախումբը,

[215] Մեջբերումը ըստ *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 136:

[216] Տես *Т. Кросс.* Op. cit.:

[217] Տես *K. Süphandağ.* Ağrı direnişi ve Haydaranlılar. İstanbul, 2001, s. 222:

[218] Տես նույն տեղում, էջ 84- 85:

որը տվեց շատ ծանր կորուստներ՝ 1700 գերի, ոչնչացվեց 60 գնդացիր, 24 թնդանոթ և 12 ինքաթիռ[219]: Այս հաղթանակից հետո քրդերը իրենց արշավանքները ուղղեցին դեպի հարավ:

Թուրքական իշխանությունների համար քրդերի հաղթանակները ապացույց էին, որ առանց թուրք-իրանական սահմանի ամուր փակման անհնար է լինելու հաղթել քրդերին: Դա կարելի էր անել երկու ճանապարհով՝ կ՛ամ իրանական բանակը, կա՛մ թուրքական զորքերը պետք է ամուր փակեին սահմանը: Սակայն շահական կառավարությունը անհրաժեշտ քանակությամբ զորք չուներ իրադրությունը երկար ժամանակով վերահսկելու համար, և երկրորդ՝ այդ քայլը կհանգեցներ բախման իր երկրի քրդերի հետ ինչից անպայման կօգտվեր Թուրքիան՝ ցանկանալով շեղել քրդերի ուշադրությունը Արարատից և ուղղել նրանց Իրանի դեմ: Բացի այդ, շահը օգտվում էր թուրքերի ծանր կացությունից և զարմանալի չէր, որ տարբեր պատրվակներով չէր փակում սահմանը: Իսկ թուրքական զորքերի՝ իրանական տարածք անցման և այդտեղ քրդերի դեմ պատերազմական գործողություններ կատարելու մասին խոսք լինել անգամ չէր կարող:

Պետք է նշել, որ Անկարան Թեհրանին այդ հարցն առաջադրել էր դեռ 1927 թ., երբ Իրանից Արարատ եկած ջալալիների շնորհիվ ապստամբներին հաջողվեց պարտության մատնել Բայազետի կայազորին: Քեմալականները շահին առաջարկեցին համատեղ հանդես գալ քրդերի դեմ, սակայն պատասխան չստացան, ինչն առիթ դարձավ, որպեսզի հուլիսին սկսեն սահմանային նշանները միակողմանի կերպով տեղափոխել դեպի Իրանի խորքերը և պաշտոնապես մեղադրել իրանական կառավարությանը քրդերին իրենց դեմ սադրելու մեջ: Թեհրանից պատասխան մեղադրանքները ևս չուշացան:

Թեհրանը համառորեն մերժում էր թուրքերի պահանջը, սակայն քրդերի և դաշնակցականների ռազմական հաջողությունները մեծ անհանգստության ալիք առաջացրին խորհրդային ղեկավարության շրջանում՝ դրդելով նրան հանդես գալու թուրքերի կողմում: Դա միանգամից փոխեց ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում: Պետք է շեշտել, որ Թուրքիան Իրանի հետ եղած նախորդ բոլոր կնճռոտ հարցերը քննարկելու ժամանակ ցանկացել էր Խորհրդային Միությանը իր կողմը ներգրավել: Սակայն Մոսկվան ամեն կերպ խուսափում էր և չեզոքություն պահպանում, քանի որ դա միանգամից կսրեր խորհրդա-իրանական հարաբերությունները, և Իրանը

[219] Տես *F. Rosita.* Conflict Angora to Afghanistan. New York, 1931, PP. 290-291:

կիայտնվեր Մեծ Բրիտանիայի ռազմա-քաղաքական ազդեցության տակ: Սակայն Արարատում ՀՅԴ հայտնվելը խառնեց Մոսկվայի խաղաքարտերը: Մոսկվան լրջորեն կասկածում էր, որ հայ-քրդական այս ռազմաքաղաքական համագործակցությունը և մասնավորապես՝ հայերի ներգրավվումը այս ապստամբությանը բրիտանական նախագիծ է, որի նպատակը Խորհրդային Հայաստանի սահմանին հակակոմունիստական ռազմահենադաշտ ստեղծելն էր խորհրդային Կովկասը նվաճելու նպատակով: Սա առավել ևս վտանգավոր էր այն պատճառով, որ այդ նույն ժամանակ Խորհրդային Հայաստանում բնակչությունը խիստ դժգոհ էր անցկացվող կոլեկտիվացումից և լուրեր էին տարածվել, թե Արարատի ապստամբներին ղեկավարում է Դրոն:

Քրդերը Դաշնակցության ջանքերով սկսեցին օգնություն ստանալ Իրանից, այդ թվում նաև Իրանի կառավարությունից, բայց ոչ պաշտոնապես: ՀՅԴ Արարատ ուղարկեց Արտաշես Մուրադյանին՝ Զիլան բեյին, որը կարողացավ չեզոքացնել բոլշևիկների ազդեցությունը: Որպես դրան հակազդում՝ բոլշևիկները նորից սկսեցին համագործակցել քեմալականների հետ: Խորհրդային հատուկ ծառայություններին 1928 թ. աշնանը հաջողվեց նրան բերել Արաքս գետի ափ և ձերբակալել, որից հետո ՕԳՊՈՒ-ի՝ Իրանում ձեռք բերված դաշնակցական գործիչների նամակները կոմունիստները տրամադրեցին Թավրիզում թուրքական հյուպատոսին, որն էլ դրանք ներկայացրեց Իրանի կառավարությանը՝ պահանջելով ձերբակալել ապստամբներին օգնողներին[220]: Իրանական կառավարությունը կատարեց այդ պահանջը, սակայն 1929 թ. դեկտեմբերին Փարիզից Թեհրան ժամանեց անվանի դաշնակցական գործիչ Ռուբենը, որը պալատական նախարար Թեյմուրթաշի հետ պայմանավորվեց գաղտնաբար վերսկսել օգնությունը Արարատի ապստամբներին: Դաշնակցությունը որպես Զիլան բեյի փոխանորդ ուղարկեց հայկական բանակի կապիտան կադրային զինվորական Վահան Գալստյանին՝ Սև Վահանին, որը կարողացավ վերականգնել քրդերի խարխլված դիրքերը և 1930 թ. գարնանը նորից հաղթել թուրքերին:

Բայց 1930 թ. հունիսին Արարատում և Իրանում տեղի ունեցած դեպքերը ստիպում են Մոսկվային խախտել այդ սկզբունքային մոտեցումը: ՀՅԴ–Հոյբուն համագործակցության շնորհիվ իրանական քրդական ցեղերը ներխուժում են Թուրքիայի տարածք և բավական ծանր կորուստներ հասցնում թուրքական բանակին, ինչի հետևանքով

[220] Տես ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2025, թ. 35:

շատ մեծ շրջաններ անցնում են քրդերի ազդեցության տակ, այդ թվում՝ Իգդիրը և խորհրդա-թուրքական սահմանը*: Սահմանի մոտ դաշնակցության հայտնվելը լրջորեն ահնհանգստացնում է Մոսկվային, և չնայած սառը հարաբերություններին, նրան ստիպում նորից մերձենալ Մուսթաֆա Քեմալի հետ և միասին պահանջել Իրանից զորքերի դուրսբերումը Սսի արևելյան լանջերից: Հարցն այնքան լուրջ էր Մոսկվայի համար, որ Ռեզա շահից մերժում ստանալով՝ օգոստոսի վերջին խորհրդային զորքերը երկու ուղղություններով՝ Արդաբիլի և Մաշհադի, մտնում են Իրանի տարածք և շարժվում դեպի երկրի խորքը: Ռեզա շահը, չունենալով անհրաժեշտ ուժեր, ինչպես նաև արտաքին օգնություն, ստիպված է լինում տեղի տալ խորհրդա-թուրքական շանտաժին և դուրս բերել զորքերը, իսկ հետագայում նաև փոխանակել Արարատի իրանական մասը համարժեք տարածքի հետ թուրք-իրանական սահմանի այլ մասում**: Այսպիսով՝ Արարատի ապստամբներն ընկնում են լիակատար շրջապատման մեջ: Սակայն մինչ այդ քեմալականներին հաջողվել էր ճնշել Արևմտյան Հայաստանում բռնկված գրեթե բոլոր քրդական ապստամբությունները, որոնց նպատակն էր միավորել Արարատի ապստամբներին: Այդ իսկ պատճառով թուրքական հրամանատարությունը հուլիսի սկզբին ավելացնում է իր զորքերի թվաքանակը՝ հասցնելով այն մինչև 60 հազարի: Միայն Մուշից և Էրզրումից մարտական գործողությունների վայր է ուղարկվում 10–12 հազար զինվոր: Թողնելով Արարատը պաշարված վիճակում՝ թուրքական զորքերի հիմնական մասը նետվում է դեպի Արճեշ, Բերկրի, Զիլան, Ալադաղ: Դեպի այդ շրջաններ հարավից և

* Պետք է նշել, որ այդ նույն օրերին, Ադրբեջանը, օգտվելով Մոսկվայի հակաքրդական և հակահայկական դիրքորոշումից լուծարեց Քուրդիստանի օկրուգը, որը դեռ որպես գավառ ստեղծվել էր 1923 թ. ԼՂԻՄ-ի քրդաբնակ արևմտյան շրջաններում, իբր քրդերին ինքնավարություն շնորհելու նպատակով՝ համաձայն «Լենինյան ազգային քաղաքականության», սակայն իրականում ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի միջև անմիջական սահմանը վերացնելու նպատակով: Սակայն լուծարելուց հետո, այդ տարածքները նորից չմտցվեցին ԼՂԻՄ-ի կազմի մեջ, այլ որպես առանձին շրջաններ ենթարկեցվեցին անմիջականորեն Բաքվին:

** Ցավալիորեն հայ պատմագիտական և քաղաքագիտական շրջաններում տարածված է այն համոզմունքը, թե թուրք-նախիջևանյան սահմանը ձևավորվել է այս փոխանակման հետևանքով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ թուրքերը Նախիջևանի հետ սահման են ստացել թուրք-հայկական 1920 թ. պատերազմից հետո և ամրագրել Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով: Որպես այս պնդման ապացույց՝ կարելի է բերել այն փաստը, որ Արտաշես Մուրադյանը 1928 թ. աշնանը, իջնելով Արարատից, ձերբակալվել է հենց այդ տեղամասում՝ Սադարակի սահմանապահ ուղեկալում:

արևմուտքից մոտենում էր Իհսան փաշայի բանակը: Հունիսի 26-ից մինչև հուլիսի 13-ը մարտական թեժ գործողությունների թատերաբեմը փոխադրվում է Վանա լճի ափերը և Սիփանի ու Ալադաղի լանջերը: Կռիվները դառնում են ծայրահեղ դաժան:

Թուրքերն այստեղ կենտրոնացրել էին 7-րդ և 9-րդ կորպուսները, ինչպես նաև 80 ինքնաթիռ: Գրեթե 3 շաբաթ մղված մարտերի ժամանակ, ըստ թուրքական աղբյուրների, քուրդ ապստամբները կորցնում են 3 հազար մարտիկ: Ապստամբներին հաջողվում է զգետնել 7 ինքնաթիռ և հետ մղել թուրքերի մի քանի խոշոր հարձակումներ: Սակայն զինամթերքի սպառվելու պատճառով նրանք ստիպված են լինում կա՛մ բարձրանալ մոտակա սարերը, կա՛մ էլ ճեղքել և անցնել Արարատ[221]: Թուրքական բանակը ներխուժում է Զիլանի ձոր, Արճեշ, Բերկրի և չտեսնված դաժանությամբ ոչնչացնում անզեն խաղաղ բնակչությանը: Հուլիսի 12–13-ին տեղի ունեցած կոտորածների ընթացքում, ըստ «Բեռլիներ Թագեբլաթթ» թերթի, Զիլանում թուրքերը ոչնչանում են 220 գյուղ և 4,5 հազար քուրդ, ըստ Կարո Սասունու՝ 200 գյուղ և 5 հազար մարդ: Ս.Ս. Ավանեսովը նշում է 10 հազար թիվը և 200 գյուղ Արճեշի մոտ[222]:

«Զումհուրիյեթ» թերթը գրում էր, որ ոչնչացված քրդերի թիվը հասնում է 15 հազարի, իսկ ըստ քուրդ հետազոտող Հեսեն Հիշյար Սերդիի՝ 47 հազարի՝ 18 գյուղերից, որոնք պատկանում էին ադեման, սիմիքան, զիլան և հասանան աշիրեթներին[223]:

Զիլանի 44 գյուղերի բնակիչներին թուրք զինվորները կապում են իրար, ինչից հետո կապիտան Դերվիշ բեյի հրամանատարությամբ գնդացրային ստորաբաժանումները, գնդակահարում են բոլորին, իսկ դիակները նետում Զիլան գետը: Բացի դրանից՝ թուրքերը քուրդ խաղաղ բնակչությանը ոչնչացնում էին նաև իրենց «ավանդական» եղանակներով՝ սվինահարելով, հղի կանանց փորերը պատռելով, կենդանի մարդկանց մաշկը հանելով կամ ուղղակի ծեծամահ անելով: Առաջ անցնելով նշենք, որ դատարկված Զիլանի ձորը թուրքական կառավարությունը տվեց իրեն հավատարիմ մնացած քուրդ առաջնորդներին, որոնցից էին՝ Զևհեր էֆենդին իր որդի Սուլեյմանի հետ և Սիդիքե Հեսենքեջելեն, իսկ գերիշխող բարձունքում թուրքական բանակը հիմ-

[221] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 288:

[222] Տես *С. С. Аванесов.* Op. cit., p. 59:

[223] Տես *M. Kalman.* Belge, tanık ve yaşayanlarıyla Ağrı Direnişi 1926-1930. İstanbul, 1997, s. 105:

նեց դիտակետ: Քիչ չէին նաև թուրքերի կորուստները՝ 1500 հոգի միայն սպանված[224]:

Զիլանը և Արճեշը գրավելուց հետո Սալեհ փաշան ստիպված էր զորքերն ուղարկել հարավ՝ դեպի Վան, քանի որ Արճեշի և Զիլանի մարտերի ժամանակ քուրդ ապստամբները գրավել էին Վանը, ինչից հետո ապստամբությունը տարածվել էր մինչև Շատախ: Հուլիսի երկրորդ կեսին Արճեշից ժամանած թուրքական զորքը վերագրավում է Վանը, ինչից հետո, իրենց սովորույթի համաձայն, անցնում են խաղաղ բնակչության կոտորածին՝ մի մասին սրի են քաշում, իսկ մյուս մասին խեղդում են Վանա լճում: Այս դաժանությունները ոտքի են հանում Վանի վիլայեթի ամբողջ քրդությանը, և Վանը նորից անցնում է ապստամբների ձեռքը, սակայն թուրքական զորքերը, շարունակելով համալրվել Արճեշից և Զիլանից ժամանող զորամասերով, նորից գրավում են Վանը և Վան–Բայազետ ճանապարհը: Վանը կորցնելուց հետո քրդերն ամրանում են Շատախում:

Թուրքերին մեծ անհանգստություն էին պատճառում նաև Զուլամերիկի և Հաքյարիի ցեղերը, որոնց օգոստոսին Իրաքից օգնության էր հասել շեյխ Մահմուդ Բարզանջին իր 500 հեծյալներով: Նա գրավել էր Շամդինանը և ոչնչացրել այնտեղ տեղակայված թուրքական զորամասերը: Միայն մեկ թուրքական զորամաս էր կարողացել դիմակայել քրդերի գրոհներին և շրջապատված վիճակում կռվել այնքան, մինչև որ Վանից ուղարկված խոշոր ուժերը կարողացել էին ճեղքել քրդերի պաշարման օղակը և ազատել նրանց: Նույն ժամանակ կատաղի մարտեր են սկսվել Գոյ լեռներում, որտեղ գոյան ցեղը պարտության է մատնել թուրքական 7-րդ և 13-րդ գնդերը: Նրանք էլ նահանջելիս, որպես պարտության վրեժ, կոտորել են երկու հազար խաղաղ քրդերի[225]:

Տարբեր վայրերում բռնկված ապստամբությունները ճնշելուց կամ տեղայնացնելուց հետո թուրքերը 1930 թ. հուլիսի երկրորդ կեսից իրենց հիմնական ուժերը կենտրոնացնում են Արարատի դեմ: Այդ զորքերը թեև պաշտոնապես հաշվվում էին 60 հազար զինվոր և 100 ինքնաթիռ, սակայն, ամենայն հավանականությամբ, դա քրդական ապստամբությունները ճնշելու համար նախատեսված ամբողջ զորախումբն էր: Ոչստի ըստ որոշ հետազոտողների, օրինակ՝ Մ. Լազարևի, կամ Ռ. Օլսոնի, Արարատի դեմ Սալեհ փաշան կենտրոնացրել էր առավելագույնը 15 հազ. զինվոր, և մարտերն ընթանում էին փոփոխական հաջողությամբ: Ցամաքում կրած պարտությունները թուրքական հրամանատարությունը փոխհատուցում էր օդային լայնածավալ

[224] Տես «Դրոշակ», 1930, հմ. 9, էջ 215:

[225] Տես նույն տեղում, էջ 214:

հարվածներով: Ըստ Ի. Նուրի փաշայի՝ այդ ռմբակոծությունները մեծ դեր խաղացին քրդեական ուժերի բարոյալքման և պարտության հարցում[226]: Եթե 1930 թ. մայիս–հունիս ամիսներին քրդերը խոցում էին բազմաթիվ թուրքական ինքնաթիռներ՝ վերջիններիս սակավաթվության պատճառով, ապա հուլիս–օգոստոսին 100 ինքնաթիռի ներգրավումը կործանարար ազդեցություն ունեցավ: Թուրքերն այլևս նախկինի պես ոչ թե մի քանի ինքնաթիռ էին կիրառում, այլ՝ 10-15, որոնք մեկ թիրախի վրա նետում էին մի քանի տասնյակ ռումբեր՝ ապահովելու համար նրա լիակատար ոչնչացումը: Հուլիսի 18-ին և օգոստոսի 2-ին ռմբակոծության են ենթարկվում հալիկանլը և հերկի ցեղերը, հուլիսի 21-ին՝ բազմաթիվ այլ քրդական գյուղեր: Ռմբակոծություններն ավելի ավերիչ են դառնում օգոստոսի ընթացքում, ինչի պատճառով շատ քրդեր ստիպված են լինում բարձրանալ հինգ հազ. մետր բարձրության վրա[227]:

Պատրաստվելով վերջնական հարձակման՝ քեմալականները ոչնչացնում են շատ քրդերի, վախենալով, որ ամենավճռական պահին նրանք կարող էին օգնության հասնել ապստամբներին: Հատկապես նրանք երկյուղում էին Ստամբուլում զինվորական կրթություն ստացած քուրդ սպաներից, որոնք կարող էին, ինչպես Իհսան Նուրին Արարատում, ապստամբություններ հրահրել այլ վայրերում: Այդ իսկ պատճառով քեմալականները ոչնչացրին թուրքական բանակում ծառայող, ինչպես նաև պահեստազորի սպա բազմաթիվ քրդերի, ինչպես օրինակ՝ մայորներ Հասան Գայզիին, Ամջասըօղլու Յուսուֆ Զեմալին, և շատ ուրիշների: Փրկվեցին նրանք, ովքեր հասցրին փախչել արտասահման[228]:

1930 թ. սեպտեմբերի 2-ին (որոշ աղբյուրներում՝ սեպտեմբերի 5-ին) սկսվում է թուրքերի գլխավոր հարձակումը Արարատի վրա, որը տևում է մինչև սեպտեմբերի 15-ը[229]: Օրհասական մարտերում քրդերին հաջողվում է ծանր կորուստներ պատճառել թուրքերին, սակայն նրանց գլխավոր ուժերը ոչնչացված էին և սեպտեմբերի երկրորդ կեսերին միայն փոքրաթիվ խմբերն էին շարունակում դիմադրությունը: Թուրքերի հաջողության մեջ իր նշանակալի ներդրումն ունեցավ ռազ-

[226] Տես *R. Olson.* The Kurdish Rebellions of Sheikh Said (1925), Mt. Ararat (1930), and Dersim (1937-8): Their Impact on the Development of the Turkish Air Force and on Kurdish and Turkish Nationalism. “Die Welt des Islam”, 2000, New Ser., Vol. 40, issue 1:

[227] Տես նույն տեղում, էջ 83:

[228] Տես *С. С. Аванесов.* Op. cit., p. 58:

[229] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 161:

մաօդային նավատորմը, որն իր ռմբահարվածներով ոչնչացնում էր ցամաքային զորքերի համար անառիկ քրդական ամրությունները՝ դրանց տակ թաղելով հարյուրավոր ապստամբների: Մինչև վերահաս ձմեռը ապստամբության ճնշումն այնքան կարևոր էր քեմալականների համար, որ նրանք պատրաստ էին անգամ քիմիական զենք կիրառել, ինչն այն ժամանակ արդեն արգելված էր միջազգային մի շարք կոնվենցիաներով[230]:

1930 թ. սեպտեմբեր 12-ին Մ. Քեմալը՝ Իսմեթ փաշայի առաջարկով, ԹԱՄԺ-ի արտակարգ նիստի հրավիրման օր է նշանակում սեպտեմբերի 22-ը: Երեք օր անց՝ սեպտեմբերի 15-ին, Իսմեթ փաշան և Արևելյան բանակի հրամանատար Սալեհ փաշան հայտարարում են, որ Արարատի ապստամբությունը ճնշված է[231]:

Արարատի ապստամբության ճնշումից հետո թուրքական բանակի Գլխավոր շտաբի և Արևելյան բանակի հրամանատար Սալեհ փաշայի առջև արդեն նոր խնդիր էր դրված. չթողնել, որ Մուշ, Ախլաթ և այլ վայրեր անցած արարատցիները նոր ապստամբություններ բարձրացնեն: Եթե դա իրագործել չհաջողվեր, ապա ձմռան պատճառով թուրքական զորքերը չէին կարողանա կանխարգելել նոր ապստամբության տարածումը և 1931թ. գարնանը ստիպված պետք է լինեին ուժերի մեծ լարումով նորից ճնշել այն: Նշված խնդրին թուրքական իշխանություններն այնքան լուրջ էին վերաբերում, որ սեպտեմբերի վերջերին բանակի Գլխավոր շտաբի պետ Ֆևզի փաշան մեկնում է Բայազետ, այնտեղից էլ՝ Վան, որտեղ կենտրոնացված էին թուրքական բանակի գլխավոր ուժերը[232]: Ձեռնարկված հատուկ միջոցառումների շնորհիվ, ինչպես նաև օգտվելով եղանակային պայմաններից, թուրքական զորքերին հաջողվում է մինչև 1931 թ. գարուն չթողնել որևէ ապստամբության բռնկում այդ շրջաններում: Ապստամբության ճնշումից հետո բազմաթիվ ապստամբներ կանգնում են թուրքական դատարանների առաջ: 1934 թ. հուլիսին Ադանայի դատարանը 25 հոգու դատապարտում է մահվան, 57-ին՝ տաժանակիր աշխատանքների, 90-ին՝ բանտարկության: Օգոստոս ամսին կախաղան են հանվում երեք հոգի[233]:

Արարատից հետո թուրքական իշխանությունները կենտրոնանում են Դերսիմի վրա: Նրանք տեղեկություններ ունեին, որ Արարա-

[230] Տես *S. S. Gavan.* Kurdistan: Divided Nation of the Middle East. London, 1958, P. 25:

[231] Տես «Դրօշակ», 1930, հմ. 10, էջ 242:

[232] Տես նույն տեղում:

[233] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 170:

տից հետո ՀՅԴ-ն և Հոյբունն իրենց գործունեությունը տեղափոխել էին Դերսիմ[234]: Թեկուզև Դերսիմն Արարատի ապստամբության ընթացքում համեմատաբար խաղաղ էր և քեմալականների համար լուրջ անհանգստություններ չէր առաջացրել, սակայն որոշ ցեղերը կոչ էին անում օգնելու Արարատի ապստամբներին: 1930 թ. գարնանը սեիդ Ռիզան իրեն հավատարիմ ցեղերով փորձում է առաջանալ էրզինջանի ուղղությամբ՝ Արարատի քրդերին օգնելու նպատակով: Քանի դեռ ճնշվում էր Արարատի ապստամբությունը, թուրքերը եղած ուժերով կարող էին թույլ չտալ, որ սեիդ Ռիզան գրավի քաղաքը: Արարատի ապստամբության ճնշումից հետո թուրքական կառավարությունը հազարավոր զինվորներ է ուղարկում Դերսիմ: Կառավարության որոշման համաձայն՝ էրզինջանում տեղակայված կորպուսի հրամանատարությանն ուղղված պաշտպանության նախարարության հրամանում ասվում էր, որ անհրաժեշտ է պատժել Դանզիգ կազայի Աշգիրիք, Դաղբեյ և Խարսը գյուղերի բնակչությանը, քանի որ նրանք հրաժարվում էին հարկեր վճարել, տալ զորակոչիկներ, ինչպես նաև անհարգալից վերաբերմունք էին դրսևորում կառավարության ձեռնարկած այլ միջոցառումների[235]: Նմանատիպ հրահանգներ Ներքին գործերի կոմիսարից ստացել էր էրզինջան վալին: Դերսիմի դեմ ձևավորված խմբավորման մեջ, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Ռյուշթյու բեյը, մտնում էին 10 հետևակային գումարտակներ՝ 15 հրանոթներով, ինչպես նաև 10 ինքնաթիռ և հարևան վիլայեթներից հավաքագրված ժանդարմերիայի ստորաբաժանումները: Սկզբնական մարտական գործողությունները անհաջող էին թուրքական զորքերի համար, որոնք չնայած թվական և տեխնիկական գերազանցությանը, չեն կարողանում կոտրել տեղանքին քաջածանոթ լեռնականների դիմադրությունը: Եվ միայն այն բանից հետո, երբ Ռյուշթյու բեյը կաշառում է էրզինջանի և էրզրումի վիլայեթների որոշ քուրդ ցեղապետերի, թուրքական զորքերին հաջողվում է ստիպել փյուլյումյուրի ցեղերին նահանջել: 1930 հոկտեմբերի 26-ին նրանք գրավում են Դանզիգը, իսկ 10 օր անց՝ Դաղբեյը, Խարսը և Աշգիրիքը[236]: Սակայն ստանալով համալրում սեիդ Ռիզայից՝ քրդերը նույն օրն անցնում են հակահարձակման՝ գերեվարելով հրամանատար Սըրրը բեյի գլխավորած 11-րդ գումարտակը: Սակայն նոյեմբերի 7-ին համալրվելով Արարատից

[234] Տես *G. K. Moumdjian.* Op. cit.:

[235] Տես *A. K. Aksüt.* Erzincan. Tarihi, coğrafı, içtimai, etnografi, idari, ihsai, tetkikat tecrübesi. Erzincan Vali'sinin Kürt Raporu (1931). İstanbul, 1992, s. 167:

[236] Տես *Մ. Ա. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 170:

վերադարձած 3-րդ դիվիզիայով՝ թուրքերն անցան հակահարձակման և գրավեցին Գյուրք գյուղը: Նոյեմբերի 11-ին և 12-ին տեղի ունեցած մարտերի ընթացքում նրա դիվիզիային հաջողվում է ոչնչացնել մոտ 100 ապստամբների և մոտ 40-ին էլ ցրել լեռներում: Քրդերին հաջողվում է դիմանալ մինչև ձյան գալը, երբ թուրքական զորքերը ստիպված էին լքել Դերսիմը և իջնել Խարբերդի իրենց զորանոցները: Քրդերը վերադառնում են իրենց ավերված բնակավայրերը և հնարավորության սահմաններում ձեռքի տակ եղած միջոցներով կառուցում են խղճուկ տնակներ՝ ձմռան սառնամանիքին դիմանալու համար[237]:

3.3. **Թուրքիայի Հանրապետության քրդական քաղաքականությունը** 1930-**ականներին**: **Դերսիմի կոտորածը** 1937–1938 **թթ.**

Քրդական ապստամբության ճնշման ժամանակ թուրքական իշխանությունները երկրի ներսում սանձազերծել էին այլ ազգերի նկատմամբ ատելություն[238]: Վարչապետ Ի. Ինյոնյուն 1930 թ. Սվազում բառացիորեն հայտարարել էր հետևյալը. «Այս երկրում միայն թուրք ազգին են պատկանում ռասայական և էթնիկական իրավունքները: Մնացած տարրերը չունեն այդ իրավունքը»[239]: ԺՀԿ գլխավոր քարտուղար Ռեջեփ Փեքերը ժխտում էր քրդերի՝ որպես առանձին ազգի գոյությունը՝ գտնելով, որ որևէ ազգ, որը հաշվվում է մի քանի հարյուր հազար և նույնիսկ մեկ միլիոն, իրավունք չունի անկախություն ձեռք բերելու: Սակայն թուրքական իշխանության իսկական վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների նկատմամբ հստակորեն ձևակերպել է Արդարադատության կոմիսար Մահմուդ Էսադը, որը բառացիորեն ասաց հետևյալը «Թուրքը այս երկրի միակ իշխանավորն ու տերն է: Նրանք, ովքեր չունեն մաքուր թուրքական ծագում, այս երկրում ունեն միայն մեկ իրավունք՝ ծառա լինելու իրավունքը, ստրուկ լինելու իրավունքը: Այս ճշմարտությունը թող իմանան և՛ թշնամիները և՛ բարեկամները և՛ նույնիսկ լեռները»[240]:

Պաշտոնյաներից հետ չէին մնում ՁԼՄ-ները: «Հաքիմիեթի միլլիե»

---

[237] Տես *A. K. Aksüt.* Op. cit., p. 171:

[238] Տես *Վ. Բայբուրդյան,* XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք - իրանական հարաբերությունները, էջ 20:

[239] Մեջբերումն ըստ՝ *A. R. Ghassemlou.* Op. cot., p. 58:

[240] Մեջբերումն ըստ՝ *Մ. Ս. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 146:

թերթի 1930 թ. օգոստոսի համարներից մեկում քրդերին վերաբերվող մտքերը կարելի է համարել թուրքական ազգայնականության դասական օրինակ. «Քրդերը, որոնց կոկորդը սեղմել են Աղրիդաղում (Արարատում.–*Ա.Ս.*), պաշտպանվում են ինչպես վայրի գազաններ, որոնք զգացել են վտանգ: Երկու այլ ավազակախմբեր շարժվեցին հարավային ուղղությունից՝ անկախ Քրդստանի կոչերով: Բայց Ասիան՝ հին քաղաքակրթությունների բնօրրանը, չէր կարող հանդուրժել այդպիսի պահանջը: Անկախության ձգտումը ծնվում է մեծ և լայն գաղափարական շարժումների հետևանքով: Բանականության և սրտի ճախրանքը դարձնում են այդ ազգը անկախության արժանի, իսկ նախնադարյան արարածների համար, որոնց ուղեղներն ու սրտերը բութ են, անկախությունը պետք է միայն լեռներով ու անտառներով թափառելու համար: Անկախությունը, որին նրանք հավակնում են, կարող է լինել միայն որպես թափառաշրջիկների ազատություն: Նրանք, ովքեր թույլ են տալիս իրենց ցանկանալ դա, հանուն ընդհանուր անվտանգության պետք է ճնշվեն, որոնց հետ, ի դեպ, հենց այդպես էլ վարվում են»[241]:

Իսկ «Միլլիյեթ»-ը տպագրեց մի նկար՝ Արարատի վրա պատկերված գերեզման, որի տապանաքարի վրա գրված էր. «այստեղ թաղված է ենթադրյալ Քուրդիստանը»[242]: Ինչ վերաբերում է հայերին, ապա սկզբնական շրջանում թուրքական թերթերը լայնորեն տպագրում էին հայերի՝ ապստամբությանը մասնակցելու և ՀՅԴ-ի՝ նրա ղեկավարներից ու կազմակերպիչներից մեկը լինելու ապացույցները, սակայն հետագայում, անհայտ պատճառներով կենտրոնական իշխանությունների հրահանգով, արգելվեց այդպիսի հոդվածների տպագրությունը:

Քրդերի կորուստներն ահռելի էին: Մոտավոր հաշվարկներով միայն սպանվածների թիվը (ըստ տարբեր աղբյուրների) տատանվում էր 9-ից 15 հազարի միջև, որոնց գերակշիռ մասը խաղաղ բնակիչներ էին: Հարյուրավոր գյուղեր ոչնչացվել էին ամբողջովին: Արճեշում հրկիզվել էր մոտ 200 գյուղ, Արարատի շրջակայքում՝ 600, Պատնոսում ոչ մի գյուղ չէր մնացել[243]: Ըստ Հոյբունի տվյալների՝ զոհվածների թիվն անցնում էր 40 հազարը, որը սակայն, ամենայն հավանականությամբ չափազանցված էր:

---

[241] Մեջբերումն ըստ՝ *К. Васильев.* Причины и движущие силы курдских восстаний, Аграрные проблемы. М., 1931, кн. 9-10, с. 101:

[242] Մեջբերումն ըստ՝ *Վ. Բայբուրդյան,* XX դարի 20–30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները, էջ 21:

[243] Տես *С. С. Аванесов.* Op. cit., p. 59:

Ապստամբությունը ճնշելուց հետո քեմալականները նորից ձեռնամուխ եղան անհնազանդ ցեղերին և ազդեցիկ ընտանիքներին Թուրքիայի արևմտյան շրջաններ բռնի տեղափոխելու քաղաքականությանը: Արարատից Բուրսայի շրջան է աքսորվում խալիքան ցեղը՝ երկու հազար բնակչով և 40 հազ. գլուխ անասունով[244]: Արարատից Մերսին աքսորված մյուս խումբը հիշեցնում էր 1915 թ. հայերի բռնագաղթը: Ըստ Մերսինում Անգլիայի հյուպատոսի՝ նրանք այդ ամբողջ ճանապարհն անցել էին ոտքով, իսկ նրանց ուղեկցող 4 սայլերում պառկած էին հիվանդները, որոնք մահանում էին՝ չդիմանալով այդ դաժան պայմաններին: Մի քանի հազար հոգուց Մերսին էին հասել հարյուր մարդ[245]: Բռնության էին ենթարկվում ոչ միայն նրանք, ովքեր մասնակցել էին ապստամբությանը, այլև նրանք, ովքեր կասկածվում էին ապստամբներին համակրելու մեջ: Էրզրումում և այլ նշանակալի քաղաքներում կատարվեցին զանգվածային ձերբակալություններ, և ձերբակալվածներից շատերը զինվորական դատարանների դատավճռով կախաղան հանվեցին, իսկ գերեվարված 1500 ապստամբները գնդակահարվեցին: Բռնությունների էին ենթարկվում նաև Իրանից կամ Իրաքից Թուրքիա անցած ցեղերը: Այսպես, Իրանից Թուրքիա անցած ջալալի ցեղերից մեկը աքսորվեց Արևմտյան Անատոլիա[246]:

Ցանկանալով կանխել Արարատի և նրան հարակից շրջաններում քրդերի նոր ապստամբությունները՝ թուրքական կառավարությունը Արարատը հայտարարեց փակ գոտի՝ արգելելով այդտեղ բնակություն հաստատել: Մեծ էին նաև նյութական կորուստները: Ոչնչացվեցին տասնյակ հազարավոր տներ, այգիներ, քշվեցին հարյուր հազարավոր գլուխ անասուններ: Տասնյակ հազարավոր քրդեր, փրկվելով թուրքական յաթաղանից, փախչում էին Թուրքիայի հարևան երկրներ: Միայն Իրաք փախավ 1500 ընտանիք: Քեմալական իշխանությունները խոչընդոտում էին քրդաբնակ վիլայեթների զարգացումը անկախության համար տնտեսական ու մշակութային հիմք չստեղծելու նպատակով: Տասը քրդաբնակ վիլայեթներում կար ընդամենը 3 հիվանդանոց՝ 17 բժշկով, և 6 դեղատուն: Եվ դա այն դեպքում, երբ բնակչության թիվն անցնում էր 900 հազարը: Նման իրավիճակ էր

[244] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 142:

[245] Տես *D. McDowall.* Op. cit., p. 206:

[246] Տես նույն տեղում:

նաև կրթական համակարգում. 104 տարրական և 5 միջնակարգ թուրքական դպրոցներ՝ 7690 աշակերտով[247]: Եվ եթե թուրքաբնակ վիլայեթներում սովորում էր երեխաների 33% -ը, ապա քրդաբնակ վիլայեթներում՝ 2,5%-ը[248]:

Այդուհանդերձ թուրքական իշխանությունները շարունակում էին այդ շրջաններից գանձել շատ հարկեր՝ խորացնելով սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Միայն Առաջին գլխավոր տեսչությունը, որն ընդգրկում էր 10 վիլայեթ, ամեն տարի պետական գանձարան էր մուծում 6,5 միլիոն լիրա՝ գրեթե ոչինչ չստանալով[249]: Եվ դա այն դեպքում, երբ ապստամբությունների ու դրանց ճնշմանը հաջորդող կոտորածների ու թալանի հետևանքով տարեցտարի նվազում էր թե՛ անասունների գլխաքանակը, թե՛ մշակվող հողատարածքների մակերեսը և որպես դրա հետևանք՝ արտահանումների ու առևտրի ծավալները: 1920-ական թթ. կեսերից սկսած ամեն տարի մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազում էր 10 %-ով, իսկ խոշոր եղջերավորներինը 1927–1932 թթ. նվազել էր 20%-ով[250]: Արևելյան վիլայեթներում որպես ցանքատարածություն օգտագործվում էր հողի ընդամենը 3 %-ը, մինչդեռ Թուրքիայի կենտրոնական և արևմտյան թուրքաբնակ վիլայեթներում՝ 14 %-ը: Գյուղատնտեսությունը վարվում էր բացառապես էքստենսիվ եղանակով, ինչի հետևանքով բերքատվությունը տարեցտարի նվազում էր: Այս ամենի պատճառով բնականաբար բարձրանում էին սննդամթերքի գները: Այսպես. եթե 1913 թ. 1 օքքա միսը արժեր 5 ղուրուշ, հացը՝ 1 ղուրուշ, իսկ ձիթապտղի ձեթը՝ 3 ղուրուշ, ապա 1928 թ. համապատասխանաբար՝ 150, 18 և 70 ղուրուշ[251]: Անասելի թանկացել էին աղը և նավթը: Քեմալական կառավարությունը խստորեն հրահանգել էր յուրաքանչյուր ընտանիքի վաճառել 10 լիտրից ոչ ավելի նավթ, իսկ չենթարկվողները տուգանվում էին հայտնաբերված նավթի կրկնակի արժեքով և բանտարկվում[252]:

Ծանր իրավիճակ էր ստեղծվել նաև քաղաքներում: Արևելյան վիլայեթների քաղաքները շատ էին նոսրացել պատերազմների և ապս-

---

[247] Թուրքական կրթական համակարգի մասին ավելի հանգամանորեն տես *Р. С. Даниелян.* Просвещение в Турции (1923-1960). Е., 1971:

[248] Տես *C. A. Bedirhan.* Mektup Türkiye Reisicumhur Gazi Mustafa Paşa hazretlerine. İstanbul, 1978, s. 26:

[249] Տես *Ş. S. Aydemir.* Op. cot., p. 399:

[250] Տես *Д. С. Завриев.* Восточная Анатолия (экономический очерк). Тбилиси, 1936, с. 99:

[251] Տես *M. A. Hasretyan*, *K. M. Ahmad, M. Cıwan.* Op. cit., p. 41- 42:

[252] Տես «Դրոշակ», 1934, հմ. 11, էջ 247:

տամբությունների հետևանքով և նմանվել էին մեծ գյուղերի: Չկար արդյունաբերություն, մեծ էր գործազրկությունը, ինչի պատճառով տասնյակ հազարավոր մարդիկ տեղափոխվում էին երկրի արևմտյան և կենտրոնական շրջաններ: Թուրքական իշխանությունը շատ դանդաղ էր զարգացնում տնտեսական ենթակառուցվածքները, հիմնականում՝ երկաթուղին և խճուղային ճանապարհները, և այն էլ՝ ռազմական կարիքներից ելնելով: Նույնիսկ 1942 թ. միայն Կարսի վիլայեթում ռուսական տիրապետության ժամանակ կառուցված ավելի շատ խճուղային ճանապարհներ կային (865 կմ), քան առավելապես քրդերով բնակեցված յոթ (Աղրը, Բիթլիս, Մարդին, Դիարբեքիր, Հաքյարի, Սղերդ, Ուրֆա) վիլայեթներում՝ 619 կմ[253]: Նմանապես և երկաթուղին՝ ամենաերկար գիծն ուներ Կարսի վիլայեթը, որը նույնպես կառուցվել էր ցարական Ռուսաստանի տիրապետության ժամանակ պետական սահմանից մինչև Սարիղամիշ (123 կմ): Մյուս երկաթգիծը՝ Բեռլին-Բաղդադ երկաթուղու Ֆնզի փաշա–Նուսայբին հատվածն էր (416 կմ), որն էական դեր չէր խաղում արևելյան վիլայեթների տնտեսական կյանքում: Քեմալական կառավարությունը արևելյան վիլայեթներում երկաթուղիների շինարարությունը սկսել էր 1929 թվականից, այն էլ՝ հիմնականում թուրքաբնակ վիլայեթներում՝ Մալաթիա, Էլյազիգ, Էրզրում, Էրզինջան, Արաբկիր: Ռազմական կարիքներից ելնելով՝ թուրքական իշխանությունները մեծ տեղ էին հատկացնում Սվազ–Էրզրում երկաթուղու շինարարությանը, որը կառուցվեց 1935 –1939 թթ.[254]:

Ցանկանալով վերջնականապես ճնշել քրդերին՝ թուրքական իշխանությունը 1931 թ. հոկտեմբերի 14-ին ընդունված օրենքով վերացրեց ցեղերի բոլոր իրավունքները: Ըստ այդ օրենքի՝ Թուրքիան բաժանվում էր երեք հատվածի: Առաջին հատվածում, որն ընդգրկում էր արևելյան վիլայեթները, իրավունք չունեին ապրել այն ցեղերը և անձինք, որոնք թուրքական մշակույթի կրողներ չէին: Նույնիսկ թուրքական ծագում ունեցող, սակայն թուրքերեն լեզվին չտիրապետողները ենթակա էին արտաքսման դեպի թուրքաբնակ վայրեր: Նույն իրավիճակն էր նաև երրորդ հատվածում (եվրոպական Թուրքիան): Արևմտյան և Կենտրոնական Անատոլիան մտնում էր երկրորդ հատվածի մեջ, և այստեղ էին արտաքսվում ոչ թուրքական տարրերը 10 %-ի հա-

[253] Տես *Հ. Գալուստյան,* Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան վիլայեթներում (1920-60-ական թվականներ): Ե., 1999, էջ 34:

[254] Տես նույն տեղում, էջ 30- 31:

մադրությամբ: Բացի այդ, թուրքական իշխանությունը նախատեսում էր երկաթուղու կառուցում մինչև Դերսիմ, հատուկ կայազորների և տեսուչների ինստիտուտի ստեղծում ևն:

Կես տարի անց՝ 1932 թ. մայիսի 5-ին, որպես այդ օրենքի լրացում ընդունվեց 8 հոդվածներից բաղկացած նոր օրենք, ըստ որի քրդերի համար ստեղծվում էր չորս գոտի, ընդ որում, չորրորդում, որը սահմանակից էր Իրանին, Իրաքին և Սիրիային, արգելված էր քրդերի բնակեցումը՝ ելնելով սանիտարական, մշակութային, ռազմաքաղաքական և կարգուկանոնի պահպանման նկատառումներից: Առաջին երկու հոդվածներով վերացվում էին բոլոր ցեղերի առաջնորդներին պետության տրամադրած կամ ավանդաբար գործող իրավունքները: Երրորդ հոդվածով նրանց պատկանող ամբողջ անշարժ գույքը ենթակա էր բռնագրավման, իսկ չորրորդով այն պետք է բաժանվեր Բալկաններից եկած թուրք վերաբնակիչներին: Մյուս գոտիներում բնակվում էին այն առաջնորդներն իրենց ընտանիքների հետ միասին, որոնք վստահություն չէին ներշնչում թուրքական իշխանություններին և կասկածվում էին լրտեսության մեջ: 6-րդ և 7-րդ հոդվածներով նրանց արգելված էր բնակվել նոր վայրերում, ստեղծել նոր գյուղեր, իսկ քաղաքներում՝ նոր թաղամասեր, կազմավորել արհեստավորների կամ ձեռներեցների խմբեր և կազմակերպություններ, իսկ ՆԳՆ-ին իրավունք էր վերապահվում լուծարել արդեն գոյություն ունեցողները: Եվ վերջին՝ ութերորդ հոդվածով հստակեցվում էին արտաքսված քրդերի, ինչպես նաև այն օտարահպատակների իրավունքները, որոնք իրավունք չունեին բնակություն հաստատելու գյուղական բնակավայրերում, իսկ քաղաքներում նրանց թվաքանակը չպետք է գերազանցեր 10 %-ը[255]: Այսպիսի ռազմավարչական միջոցառումներով քեմալական իշխանությունները, բացի Դերսիմից, կարողացան հասնել քրդական շարժման ջախջախմանը:

Այս փաստը խորապես անհանգստացնում էր թուրքական կառավարությանը, քանի որ Դերսիմը կարող էր նոր համաքրդական ապստամբության օջախ դառնալ: Ուստի Արարատի ապստամբության ճնշումից հետո Քեմալն իր ամբողջ ուշադրությունը սևեռեց Դերսիմի վրա և պահանջեց այնտեղ վերջնականապես ճնշել ցանկացած դիմադրություն: Արդեն 1932 թ. էլյազիգի վալի Դելի Ֆահրին պահանջեց Դերսիմի առաջնորդներից հանձնել ամբողջ զենքը, իսկ նրանց ջոկատներին՝ հանձնվել ռազմական իշխանություններին, հա-

[255] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 178:

կառակ դեպքում սպառնում էր կոտորել բոլորին: Սակայն դերսիմցիները հրաժարվեցին կատարել այդ պահանջները, իսկ Քեմալին ուղղված հեռագրում սեիդ Ռիզան իրադրության լարվածության պատասխանատվությունը դրեց Դելի Ֆահրիի վրա[256]: Իրադրությունն այնքան սրվեց, որ տարածաշրջան ժամանեց վարչապետ Ի. Ինյոնյուն և հանդիպեց Գլխավոր տեսուչ Իբրահիմ Թալի բեյի, էլյազիգում տեղակայված զորքերի հրամանատար Հյուսեին Հյուսնյուի և Դելի Ֆահրիի հետ ու պահանջեց հնազանդեցնել Դերսիմը, ինչից հետո Դելի Ֆահրին 120 հոգուց բաղկացած հեծյալ մի ջոկատ ուղարկեց Դերսիմ յուսուֆան ցեղի առաջնորդ Կանբեր աղային ձերբակալելու համար: Սակայն այս ջոկատը շրջապատվեց և գերեվարվեց: Կատաղած Դելի Ֆահրին ինքն անցնելով հետևակային գնդի գլուխ, արշավեց յուսուֆան ցեղի վրա: Սակայն քրդերն արդեն հասցրել էին գերիշխող դիրքեր գրավել, ուստի նա առաջարկեց Կանբեր և Յուսուֆ աղաներին բանակցություններ սկսել: Սակայն քուրդ առաջնորդներն նրան էլ առաջարկեցին հանձնել զենքերը: Չտանելով այս անպատվությունը՝ Դելի Ֆահրին ծանր հիվանդացավ: Գունդը ստիպված վերադարձավ Մազկերտ, որտեղ էլ արյան զեղումից մահացավ Դելի Ֆահրին[257]:

Այս անհաջողությունը թանկ նստեց Իբրահիմ Թալիի վրա. նա հեռացվեց Գլխավոր տեսուչի պաշտոնից և հետ կանչվեց Անկարա: Մուսթաֆա Քեմալը նրա փոխարեն Գլխավոր տեսուչ նշանակեց Սվազի նախկին վալի Վեհբի բեյին: Նա սկսեց բանտարկել, իսկ որոշ դեպքերում դատարանների միջոցով մահվան դատապարտել քուրդ առաջնորդներին՝ այդպիսով զրկելով նրանց համախմբող ուժից: Այսպես. չնայած համաներման խոստմանը, 1932 թ. էրզրումի ռազմադաշտային դատարանի դատավճռով բանտարկվեց շեյխ Սայիդի որդի Սելահեդդինը, որը վերադարձել էր Իրաքից: 1933 թ. քեմալական իշխանությունները ձերբակալեցին շեյխ Ֆահրիին, իսկ 1934 թ. թուրքական դատարանը որոշ քուրդ առաջնորդների դատապարտեց մահվան, մյուսներին՝ երկարատև բանտարկության[258]: Նույն՝ 1934 թ., բանակը ճնշեց Սասունի հայ-քրդական և Սղերդի հայ-եզդիական ապստամբությունները[259]:

[256] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 242:

[257] Տես նույն տեղում, էջ 244:

[258] Տես *В. Никитин.* Op. cit., p. 294- 295:

[259] Տես *Ս. Կ. Պողոսյան,* Նշ. աշխ., էջ 278:

Քրդական պրոբլեմի լուծումներից մեկն էլ քեմալական իշխանությունները տեսնում էին Բալկաններից ներգաղթած թուրքերին աքսորված քրդերի հողերը տրամադրելու մեջ: 1923 թվականից մինչև 1934 թվականը Թուրքիա էր ներգաղթել 630 հազար մարդ[260]: Այդ նպատակով 1934 թ. հունիսի 9-ին ԹԱՄԺ-ը ընդունեց հմ. 2502 օրենքը, ըստ որի ներգաղթածներին էին տրամադրվում Կարս, Բայազեթ, Էրզրում և Ճորոխ վիլայեթներում այն հողերն ու տները, որոնք մինչև պատերազմը պատկանել էին ռուսական հպատակություն ունեցող և Թուրքիայից հեռացած քաղաքացիներին[261]: Իսկ հունիսի 13-ին ընդունվեց հմ. 2510 օրենքը, որով Թուրքիան բաժանվում էր երեք շրջանների: Առաջին շրջանը գերազանցապես թուրքերով բնակեցված շրջաններն էին, երկրորդ շրջանը նախատեսված էր աքսորված քրդերի համար, իսկ երրորդ՝ արևելյան, շրջանը, որը գերակշիռ մեծամասնությամբ քրդաբնակ էր, ենթակա էր բնակչությունից դատարկման՝ սանիտարական, տնտեսական, մշակութային, քաղաքական և ռազմական պատճառներով: Նախարարների խորհուրդն իրավունք էր ստանում երրորդ գոտուց դեպի երկրորդ գոտի տեղափոխել նստակյաց և քոչվոր բնակչությանը, իսկ Ներքին գործերի նախարարն իրավունք ուներ առանց դատարանի որոշման արտաքսել երկրից լրտեսության մեջ կասկածվողներին, օտարահպատակ քաղաքացիներին, գնչուներին և քոչվորներին, որոնք «հաղորդակից չէին թուրքական մշակույթին»[262], ինչպես նաև երկրի այլ վայրեր արտաքսել քուրդ բեկերին և շեյխերին, եթե նրանք, ըստ իրեն, վտանգ էին ներկայացնում պետության համար:

Ըստ նույն հմ. 2510 օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների՝ պետությունը ցեղերին չէր ճանաչում որպես իրավաբանական անձերի, իսկ նրանց առաջնորդները կորցնում էին բոլոր իրավունքները և արդեն հավասար էին օրենքի առջև, ինչպես Թուրքիայի մնացած բոլոր հասարակ քաղաքացիները: Ցեղերը զրկվում էին իրենց անշարժ գույքից, որը պետք է տրվեր ներգաղթող թուրքերին: Երկրորդ գոտի տեղափոխված քրդերը, որոնց համար թուրքերենը մայրենի լեզու չէր, արգելված էր հիմնել նոր գյուղեր, իսկ քաղաքներում՝ առանձին թաղամասեր: Նրանք բնակեցվում էին թուրքական բնակավայրերում 1-ը 10-ի համեմատությամբ: Նրանց արգելված էր նաև ստեղծել արհես-

[260] Տես *Ş. S. Aydemir.* Op. cot., p. 321:

[261] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 181:

[262] Տես նույն տեղում, էջ 182:

տավորների և բանվորների կազմակերպություններ, և իրավունք չունեին տասը տարի լքել նոր բնակավայրերը: Հատկանշական է, որ այս վերջին արգելքը դրված էր նաև Արևմտյան Հայաստան տեղափոխված թուրք փախստականների վրա, ինչը վկայում է, որ նրանց մեծ մասը չէր ցանկանում բնակություն հաստատել այդ շրջաններում և ամեն ինչ անում էր երկրի արևմտյան կամ կենտրոնական մասերի խոշոր քաղաքներ տեղափոխվելու համար:

Իրագործելով այս օրենքը՝ տեղական իշխանությունները հրամայեցին քրդերին պատրաստվել երկրի արևմուտք տեղափոխվելու համար: Սակայն քրդերի մեծամասնությունը հրաժարվեց: Իրենց նպատակին հասնելու համար թուրքերը ոչ մի միջոցի առջև կանգ չէին առնում: Օրինակ՝ սարեր փախած Բոհթանի քրդերի դեմ նրանք օգտագործեցին ռազմական ինքնաթիռներ, որոնք հինգ օր շարունակ ռմբակոծում էին թաքստոցները: Խարբերդում կախաղան հանվեցին բազմաթիվ քրդեր[263]: 1935 թ. քեմալական կառավարության հրամանով Մարաթուկ սարից հարավ գտնվող 30 գյուղեր հիմնովին այրվեցին, իսկ բնակիչները տեղափոխվեցին Բշարիկ[264]: Քրդերի դիմադրությունն այնքան մեծ էր, որ վարչապետ Ի. Ինյոնյուն հուլիսին ստիպված էր երկրորդ անգամ այցելել Դիարբեքիր, Մարդին, Սիիրտ և այլ քաղաքներ: Սակայն դա նույնպես անօգուտ էր: Այդ իսկ պատճառով 1935 թ. նոյեմբերի 18-ին ԹԱՄԺ-ը ընդունեց հմ. 2848 օրենքը, որով նոր Գլխավոր տեսուչ Աբդուլլահ Ալփդողանը իրեն վստահված Երրորդ գոտում ստացավ շատ մեծ լիազորություններ: Բացի այդ՝ ավելի էին հստակեցվում քրդերի աքսորավայրերը: Այսպես. թուլացնելով Արևմտյան Հայաստանի շատ քրդաբնակ շրջաններ՝ 1936 թ. թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ Դերսիմի հնազանդեցմանը, իսկ ավելի ճիշտ՝ դերսիմցիների ոչնչացմանը:

Դերսիմը հնազանդեցնելու նպատակով՝ քեմալական իշխանություններն այդ ուղղությամբ կատարեցին մեծ ծավալի տնտեսական, գաղափարախոսական և վարչական աշխատանքներ: Փաստացի լուծարվեց Դերսիմի ցեղերի ընդհանուր ժողովը՝ Մեջլիսը: Դպրոցներում դասավանդումը կատարվում էր թուրքերեն լեզվով, իսկ դերսիմցիները հռչակվեցին որպես թուրքեր, որոնք հին ժամանակներում բարձրաձել էին այդ լեռները՝ կտրվել մայր ժողովրդից և մոռացել թուրքերենը: Սակայն հիմա պետությունը պարտավոր էր ուղղել այդ «սխալը»: Տնտեսական առումով քեմալական կառավարությունը

[263] Տես նույն տեղում, էջ 184:

[264] Տես *G. K. Moumdjian.* Op. cit.:

երկու կարևոր փոփոխություն մտցրեց, համաձայն որի այսուհետ դերսիմցիները պարտավոր էին հարկ վճարել, ինչը չէր եղել երբեք: Երկրորդ փոփոխությամբ նրանցից բռնագրաված հողերը տրամադրվում էին ներգաղթյալ թուրքերին:

1935 թ. նոյեմբերին ելույթ ունենալով ԹԱՄԺ-ի՝ Դերսիմին նվիրված արտակարգ նիստում՝ Մ. Քեմալը նշեց. «Մենք կարիք ունենք մեր ներքին օրգանների կառավարման ընդլայնմանը: Մասնավորապես Դերսիմի շրջանում նախատեսվում է իրագործել արմատական բարեփոխումների ծրագիր»[265]: Դերսիմն անվանափոխվեց Թունջելի, և վարչականորեն մտցվեց Չորրորդ գլխավոր տեսչության մեջ, որի կենտրոնը էլյազիգն էր, իսկ Գլխավոր տեսուչը՝ գեներալ Աբդուլլահ Ալփդողանը[266]: Տեսչության վարչակազմի մեջ մտնում էին ռազմական խորհրդատուների, հետախուզական, ռազմական դատարանի, հատուկ, ինչպես նաև ֆինանսական և իրավաբանական բաժինները: Կար նաև Գլխավոր շտաբից գործուղված մի խումբ:

Ա. Ալփդողանը տեսչության տարածքում հայտարարում է պաշարողական դրություն և Դերսիմի ցեղապետերից պահանջում է 200 հազ. Մարտինի հրացան[267]: Հասկանալով, որ այդ պահանջն ընդամենը պատրվակ է, և նույնիսկ հանձնվելու դեպքում Դերսիմի վրա հարձակումը, միևնույն է, լինելու է, ցեղապետերը փորձեցին միավորել իրենց ցեղերը թուրքերի դեմ պայքարելու նպատակով: Սակայն դա չհաջողվեց: Սեիդ Ռիզային հաջողվեց միավորել աբբասան, ֆերիադան, քարաբալյան, բախտիար, յուսուֆան, դեմնան, հայդան ցեղերը և քալան ցեղի մի մասը: Իսկ ահա Օվաջըքի, Քոչանի, Թեքմանի, Մազկերտի, Փյուլյումյուրի և Նազիմիեյի ցեղերը հայտարարեցին իրենց չեզոքության մասին: Սակայն ամենավատն այն էր, որ Խոզաթի ցեղերի մի մասը միացավ թուրքերին:

Սեիդ Ռիզան Ա. Ալփդողանին ուղարկած պատասխան նամակում ոչ միայն մերժեց հրացանների հանձնումը, այլև պահանջեց Դերսիմի մասին նոր օրենքի չեղարկում և դերսիմցիների նկատմամբ հետապնդումների դադարեցում[268]: Ալփդողանը 1936 թ. աշնան վերջին

[265] Տես *Д. В. Жигульская.* Op. cit., p. 48:

[266] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 172:

[267] Բնօրինակում այդպես է, տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 262: Իսկ Մ. Հասրաթյանի գրքում նշված է 20 հազար թիվը՝ առանց նշելու հրացանի մակնիշը (տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 187):

[268] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 263:

Դերսիմի դեմ ուղարկեց հետևակային մեկ դիվիզիա և ժանդարմական գունդ: Սակայն ձյան պատճառով օպերացիան ստիպված դադարեցվեց, իսկ զորքերը վերադարձան իրենց զորանոցները: Թուրքերն իհարկե չէին կարող հաշտվել այս անհաջողության հետ: 1936 թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1937 թվականի հունվարի 27-ը ՆԳ նախարար Շյուքրյու Քայայի նախագահությամբ տեղի ունեցավ բոլոր Գլխավոր չորս տեսչությունների պետերի համագումար, որտեղ քննարկվեց նաև Դերսիմի հարցը[269]: Իսկ արդեն 1937 թ. մայիսի 4-ին Մ. Քեմալի և ԳՇ պետ Մ. Ֆ. Չաքմաքի մասնակցությամբ տեղի ունեցավ նախարարների խորհրդի նիստ, որտեղ որոշվեց զենքերը առգրավելու և բնակչությանը բռնագաղթեցնելու նպատակով սկսել ռազմական գործողություններ[270]: Հատկանշական է, որ դերսիմցիների բռնագաղթի հաստատված ծրագիրը ՆԳ նախարարությունը կազմել և վարչապետի աշխատակազմ էր ներկայացրել դեռ 1931 թ. նոյեմբերի 18-ին, որով նախատեսվում էր երկրի արևմուտք տեղափոխել 347 ընտանիք[271]:

Ճիշտ է՝ Դերսիմին հաջողվեց խույս տալ ռազմական բախումից, սակայն պարզ էր, որ 1937 թ. գարնանը թուրքերն անցնելու էին հարձակման: Դա թույլ չտալու նպատակով սեիդ Ռիզան Ալփդողանի մոտ է ուղարկում իր որդի Բրա Իբրահիմին հաշտության պայմանները քննարկելու համար: Սակայն Ալփդողանի ցուցումով իր սպաներից Շևքեթը Բրա Իբրահիմին տանում է Դեշտ գյուղ և սպանում[272]: Այս դեպքից հետո սեիդ Ռիզան կոչ է անում քուրդ ցեղապետերին միավորել իրենց ուժերը: Նրա կոչին արձագանքում են հասանան, յուսուֆան և մի քանի այլ ցեղեր: Կ. Սասունին Դերսիմում գտնվող ոմն Մովսեսի հայտնած տեղեկության հիման վրա ՀՅԴ ԳՄ քուրդ ապստամբների թվաքանակի մասին հաղորդում է ավելի հստակ տվյալներ[273]: 1937 թ. հունիսին Մազկերտից 30 կմ հեռավորության վրա գտնվող Քյուրնիք վայրում տեղի է ունենում ցեղապետերի հավաք, որտեղ որոշվում է բարձրացնել ապստամբություն[274]: Ռազմական գործողությունները սկսվում են «Հարսիկ» կամուրջը այրելուց և

[269] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 188:

[270] Տես *Д. В. Жигульская.* Op. cit., p. 49:

[271] Տես “Jandarma Genel Komutanlığı, Dersim raporu”. İstanbul, 2010, s. 83- 121:

[272] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 272:

[273] Տես *G. K. Moumdjian.* Op. cit.:

[274] Տես *A. Hassan.* Op. cit., p. 43; նաև՝ “Jandarma Genel Komutanlığı, Dersim raporu”, էջ 379:

Քահնուտի (Կաղնուտ) հեռախոսային գծերը կտրելուց հետո, ինչի համար թուրքական կողմը մեղադրում է սեիդ Ռիզային[275]: Ըստ Ն. Դերսիմիի՝ ապստամբների թիվը 30 հազ. էր, որոնք արագորեն ոչնչացնում էին կամուրջները, հեռախոսային գծերը և թուրքական բանակի պահակակետերը[276]: Ապստամբությունն ընդունել էր այնպիսի ծավալներ, որ Դերսիմ ժամանեցին վարչապետ Ի. Ինյոնյուն և ՆԳ նախարար Շ. Քայան: Մարտական գործողություններն ընթանում էին փոփոխակի հաջողություններով և երկուստեք զգալի կորուստներով: Սեիդ Ռիզան առաջարկում է Ալփդողանին դադարեցնել արյունահեղությունը, հանձնել որդուն սպանողներին, իսկ ինքն իր հերթին խոստանում էր վերադարձնել գերի թուրքերին և դադարեցնել ռազմական գործողությունները: Սակայն Ալփդողանը պահանջում է առանց պայմանների անձնատուր լինել և հանձնել քրդերի բոլոր զենքերը: Նրան հաջողվում է թուրքերի կողմը դարձնել մի շարք ազդեցիկ քրդերի, որոնց մեջ էր նաև սեիդ Ռիզայի բարեկամ Ռեհբերը, որն հրաժեշտ տալու պատրվակով գալիս է Ալիշերի մոտ և սպանելով նրան՝ գլուխը տանում է Ալփդողանին:

Ամռան վերջում պարտված ապստամբները հեռանում են անտառները: Թուրքական հրամանատարությունը հրամայում է վառել դրանք: Սեիդ Ռիզան որոշում է մեկնել Իրաք, սակայն Կոզլուջա վայրում տեղի ունեցած վճռական մարտում պարտություն է կրում և ծանր վիրավորվում: Ճնշելով ապստամբությունը՝ քեմալական զորքերը դաժան հաշվեհարդար են տեսնում բնակչության նկատմամբ:

Վերլուծելով ապստամբությունը, կարող ենք նշել, որ թեև թուրքական զորքերն ավելի քիչ էին ապստամբներից[277], սակայն տեխնիկական գերազանցությունը հնարավորություն տվեց ընդամենը ամառվա ընթացքում ճնշելու ապստամբությունը: Քրդերի համար հատկապես կործանարար էր ավիացիայի օգտագործումը, որը շատ ծանր կորուստներ էր պատճառում:

Սեիդ Ռիզայի դեպի Իրաք նահանջը լրջորեն անհանգստացրեց թուրքերին, որոնք լավ գիտակցում էին, որ առանց հարևան երկրների հետ համագործակցության դժվար կլիներ ճնշել այդ ապստամբությունը: Այդ իսկ պատճառով ապստամբության ճնշմանը զուգահեռ Թուրքիան բանակցություններ էր վարում Իրանի և Իրաքի հետ՝

[275] Տես *Կ. Հարությունյան,* Թուրքիայի ալևիները. պատմության և քաղաքականության հարցեր: Ե., 2013, էջ 82:

[276] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 273:

[277] Տես *Կ. Սասունի,* Նշ. աշխ., էջ 324:

ապստամբությունների ժամանակ սահմանները փակելու, քրդերի կազմակերպչական մարմինների գործունեությունն արգելելու և փախած մասնակիցներին վերադարձնելու նպատակով: Որպես այդ բանակցությունների արդյունք՝ 1937 թ. հուլիսի 8-ին Թեհրանի Սաադաբադ պալատում ստորագրվեց համաձայնագիր[278]:

Չեռք բերելով հարևան երկրների աջակցությունը՝ քեմալականները նոր թափով են վերսկսում դերսիմցիների դեմ պայքարը: Ա. Ալփդողանը նամակ է ուղարկում սեիդ Ռիզային, որտեղ նշելով, որ համաձայն է դադարեցնել մարտական գործողությունները և հրավիրում է նրան էրզինջան՝ քննարկելու հաշտության պայմանները: Հավատալով Ալփդողանին՝ սեիդ Ռիզան ժամանում է էրզինջան, որտեղ էլ 1937 թ. սեպտեմբերի 5-ին ձերբակալվում է[279]: Դատավարության ժամանակ թուրքական իշխանությունները փորձում էին ապստամբությունը ներկայացնել ոչ թե որպես իրենց այլատյաց քաղաքականության արդյունք, այլ օտարերկրյա հատուկ ծառայությունների կազմակերպած հակաքեմալական ելույթ: Մասնավորապես՝ սեիդ Ռիզային դատավարության ժամանակ տրվեցին, մեղմ ասած, տարակուսանք առաջացնող հարցեր, ինչպես օրինակ՝ կայի՞ն նրա շտաբում ռուս սպաներ, կամ ուղարկու՞մ էին արդյոք վերջինները զենք և զինամթերք[280]: Եվ սա այն դեպքում, երբ Դերսիմին խորհրդային սահմանից բաժանում էին հարյուրավոր կիլոմետրեր, որոնք մտնում էին փակ գոտի հայտարարված Երրորդ գլխավոր տեսչության մեջ, և թուրքական բանակը շատ խստորեն վերահսկում էր այն: Սակայն այս կեղծ մեղադրանքով թուրքական իշխանությունը լուծում էր միանգամից երկու խնդիր: Առաջինը քրդերին օտարերկրյա դավադրության մասնակից լինելու մեջ մեղադրելն էր: Իսկ երկրորդ պատճառը պայմանավորված էր Թուրքիայի՝ հետզհետե դեպի Առանցքի երկրների ճամբարին մոտենալով, և գերմանա-իտալա-թուրքական լավ ծրագրավորված սադրանք էր: Որպես այս վարկածի ապացույց՝ կարելի է բերել այն փաստը, որ դատավարությունից մի քանի ամիս առաջ՝ 1937 թ. ամռանը, իտալական մամուլն արդեն գրում էր, որ Դերսիմի ապստամբությունը տեղի է ունեցել ռուսական փողերով: Իսկ գեբելսյան «Ֆոլկիշեր Բեոբախտեր» թերթն իր հունիսի 19-ի հա-

[278] Տես *İ. Erdal.* Türk Basını ve Arşiv Belgelerine Göre Atatürk Dönemi (1920–1938) Türk – Irak İlişkileri Ve Sadabad Paktı. “The Journal of Academic Social Science Studies”, October 2012, Vol. 5, Issue 5:

[279] Տես *М. Лебский.* Op. cit., p. 60:

[280] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 288:

մարում գրում էր, որ Դերսիմի քրդերին «սովետներն» են սադրել ապստամբության, քանի որ դժգոհ էին թուրքական կառավարությունից Մոնտրյոյի համաձայնագրից հետո, և որ Մոսկվայի հատուկ ծառայությունների գործակալներն օգնել են ապստամբության ղեկավարներին պարտությունից հետո փախչել Խորհրդային Միություն[281]: Իսկ թուրքական մամուլում մեկընդմեջ տարածվում էին «տեղեկություններ», ըստ որոնց, իբր ապստամբների մեջ էին նաև անգլիացի և ֆրանսիացի շտաբային սպաներ[*]: Այս ամենը վկայում էր, որ քեմալական իշխանությունները ցանկանում են ապստամբներին ներկայացնել որպես դավաճաններ, որոնք արժանի էին միայն մահապատժի: Այսինքն՝ դատավարությունը զուտ ձևական էր, իսկ մահապատժի վճիռը կայացրել էր ոչ թե դատավորը, այլ Մ. Քեմալը: Նոյեմբերի 10-ին էլյազիգի ռազմական դատարանը մահվան դատապարտեց սեիդ Ռիզային և նրա 11 կողմնակիցներին, որոնք բոլորն էլ ազդեցիկ քրդեր էին: Այսինքն. թուրքական իշխանությունը նպատակադրված կերպով ոչնչացնում էր քրդական վերնախավին: Նոյեմբերի 18-ին բոլոր 12 դատապարտյալները կախաղան հանվեցին էլյազիգի Բուղդայ հրապարակում[282]: Ապստամբության չորս մասնակիցներ դատապարտվեցին 30 տարվա բանտարկության: Միջազգային հանրության աչքերում դատավարությանը արդար տեսք տալու նպատակով 14 հոգի արդարացվեցին և ազատ արձակվեցին[283]:

Սեիդ Ռիզան՝ Քոչգիրիի ապստամբության առաջնորդներից մեկը, որը համարվում էր Մ. Քեմալի վտանգավոր հակառակորդներից, պայքարում էր վերջինիս դեմ դեռ 1920 թվականից: Նա այն քիչ ցեղապետերից էր, ով կոչ էր անում շեյխ Սայիդի և Արարատի ապստամբությունների ժամանակ թուրքերին հարվածել թիկունքից: Թեև 1927 թ. ամռան-աշնան ամիսներին նրան հաջողվեց պարտության մատնել Հայդար փաշայի դիվիզիային, սակայն այն չամրագրվեց Դերսիմից դուրս հարձակմամբ, և քեմալականներին նախ հաջողվեց տեղայնաց-

[281] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 175:

[*] Մեր կարծիքով՝ այս դեպքում Քեմալը նպատակ չուներ վատթարացնելու իր հարաբերությունները անգլո-ֆրանսիական հզոր ռազմաքաղաքական դաշինքի հետ: Մամուլում այսպիսի տեղեկությունների հայտնվելն ուներ երկու նպատակ, որոնցից կարևորը Ալեքսանդրետի սանջակի հարցն էր և նրանցից այսպիսի շանտաժի միջոցով ավելի շատ զիջումներ կորզելը՝ Առանցքի պետությունների հետ անխուսափելի պատերազմի ժամանակ վերջիններիս ճամբարը չանցնելու նպատակով:

[282] Տես *M. Nuri Dersimi.* Op. cit., p. 288:

[283] Տես *М. С. Лазарев.* Курдистан и курдский вопрос (1923-1945), с. 174:

նել այն, իսկ հետո սպառնալիքներով զինաթափել դերսիմցիների մեծ մասին:

Նոյեմբերի 11-ին Մ. Քեմալը նոր վարչապետ Ջելալ Բայարի ուղեկցությամբ սկսեց իր շրջագայությունը հարավարևելյան վիլայեթներով*: Նոյեմբերի 16-ին, ելույթ ունենալով Դիարբեքիրի բնակչության առջև, որի գերակշիռ մեծամասնությունը քրդեր էին, նա ամենայն լրջությամբ հայտարարում է, որ Թուրքիայի արևելքի բնակչությունն ամբողջությամբ թուրքեր են, որոնք, իր բնորոշմամբ օրինակ են ամբողջ մարդկության և համաշխարհային քաղաքակրթության համար[284]: Այս ելույթը կարելի էր համարել ուղերձ, որով Քեմալը պարզորոշ գծում էր քրդերի ապագան՝ թրքացում: Սկսելով իր շարժումը 1919 թ. մայիսին՝ Քեմալը նրանց խոստանում էր ինքնավարություն և ազգային, լեզվական ու կրոնական իրավունքների հարգում: Թուրքիայի քրդերի գերակշիռ մեծամասնությունը հավատաց նրան, ինչը վճռորոշ դերակատարում ունեցավ հայերի, հույների և ֆրանսիացիների դեմ պատերազմներում քեմալական զորքերի հաղթանակների մեջ: Սակայն Լոզանի պայմանագրից հետո Քեմալը բացահայտեց իր իրական նպատակները, որոնք ժամանակի ընթացում միայն ավելի էին ծայրահեղանում: Դիարբեքիրում ասված ճառն այս քաղաքականության վերջակետն էր, և քրդերն այլևս ոչ մի պատրանք չպետք է ունենային:

Թեև ապստամբությունը ճնշված էր, իսկ ղեկավարները՝ ոչնչացված, սակայն Դերսիմը դեռ պահպանում էր իր զինական ուժերի մեծ մասը, իսկ բնակչությունը շարունակում էր ապրել այնտեղ: Իսկ դա նշանակում էր, որ որոշ ժամանակ անց թուրքերը նորից բախվելու են հերթական ապստամբությանը: Լավ հասկանալով այս ամենը՝ Մ. Քեմալը և Ջ. Բայարը նպատակադրվում են Դերսիմի հարցը վերջնականապես լուծել 1938 թ.: Նույն թվականի մայիսի 28-ին Բայարը դիմում է

* Մահմուդ Ջելալ Բայար (1883 – 1986)՝ թուրք քաղաքական և պետական գործիչ, Թուրքիայի երրորդ նախագահը: 1919 թ. միանում է Մ. Քեմալի շարժմանը, ընտրվում ԹԱՄԺ-ի պատգամավոր: 1921 թ. նշանակվում է էկոնոմիկայի նախարար: 1937 թ. թվականի հոկտեմբերի 25-ին Մուստաֆա Քեմալը Բայարին նշանակում է վարչապետ: 1946 թ Ադնան Մենդերեսի հետ հիմնում է Դեմոկրատական կուսակցությունը: 1950 թ. ԹԱՄԺ ընտրությունների ժամանակ Դեմկուսը ստանում է ամենաշատ տեղերը պառլամենտում և ընտրվում է Թուրքիայի նախագահ: 1960 թվականի մայիսի 27-ին Ջեմալ Գյուրսելի ղեկավարությամբ զինված ուժերը կատարում են պետական հեղաշրջում: Ջեմալ Բայարը, Ադնան Մենդերեսը և այլ պետական ու կուսակցական գործիչներ նույն թվականի հունիսի 10-ին կանգնում են ռազմական տրիբունալի առջև և դատապարտվում մահվան:

[284] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 196:

դերսիմցիներին՝ պահանջելով զինաթափվել, հակառակ դեպքում սպառնում է դաժան հաշվեհարդարով: Իշխանությունն արագորեն գտնում է նաև դերսիմցիների «մեղքը»՝ ֆրանսիական լրտեսներ: Խնդիրն այն էր, որ Ալեքսանդրետի սանջակի պատճառով խիստ սրվել էին թուրք-ֆրանսիական հարաբերությունները: Լավ իմանալով թուրքերի հակաֆրանսիական տրամադրությունները՝ քեմալականները մամուլի միջոցով սկսում են մեղադրել դերսիմցիներին որպես ֆրանսիական լրտեսների:

Ապահովելով խաղաղ բնակչության դեմ հաշվեհարդարի «գաղափարական հիմքը»՝ իշխանություններն անցնում են գործի: Քեմալականները պատժիչ գործողությունը քողարկում են զորախաղերի անվան տակ: Դերսիմը շրջապատում է երեք կորպուսների՝ 50 հազար ասկյար, ուժերով[285]: Անկարան այնքան մեծ նշանակություն էր տալիս այդ ռազմական գործողությանը, որ Դերսիմ են ժամանում վարչապետ Բայարը և արտգործնախարար Թևֆիք Ռյուշթյուն, ազգային պաշտպանության նախարար Քյազըմ Օզալփը, Գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքը, Երրորդ բանակի տեսուչ Քյազըմ փաշան և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ[286]:

1938 թվականի սեպտեմբերին սկսվեց թուրքական զորքերի հարձակումը: Քրդերի դիմադրությունը թույլ էր, և հոկտեմբերի վերջին Դերսիմն ամբողջությամբ նվաճվեց: Թուրքական զորքերն անասելի դաժանությամբ հաշվեհարդար տեսան խաղաղ բնակչության նկատմամբ՝ զոհվեց 70-80 հազար մարդ: Բացի «ավանդական» կոտորածից, թուրք զինվորները պայթեցնում էին այն քարանձավները, որտեղ կանայք և երեխաներ էին: Ոչնչացվեցին այն ցեղերը, որոնք հայտարարել էին իրենց չեզոքության մասին: Պետք է նշել, որ սպանվեցին Դերսիմից դուրս ապրող համարյա բոլոր դերսիմցիները և թուրքական բանակում ծառայող դերսիմցի զինվորները[287], ինչը վկայում է այն մասին, որ թուրքերը նպատակադրվել էին ոչնչացնել դերսիմցիներին՝ հարցը վերջնականապես փակելու համար: Ապստամբության ճնշումից հետո Զ. Բայարը ցինիկորեն հայտարարեց. «Ավազակները բռնի ուժով քաղաքակրթվեցին»[288]:

---

[285] Տես *К. В. Вертяев, С. М. Иванов.* Курдский национализм: История и современность. М., 2015, с. 170:

[286] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 198:

[287] Տես *Կ. Հարությունյան,* Նշ. աշխ., էջ 83- 84:

[288] Մեջբերումն ըստ՝ *Ս. Կ. Պողոսյանի,* Նշ. աշխ., էջ 284:

1939 թ. հուլիսի 5-ին ԹԱՄԺ-ը օրենք ընդունեց, որով երկրի արևմուտք տեղափոխված քրդերին արգելվում էր վերադառնալ իրենց բնակավայրերը: Նրանք հռչակվեցին որպես ոչ թուրքական մշակույթի կրողներ և չէին կարող բնակություն հաստատել Երրորդ և Չորրորդ գլխավոր տեսչություններում: Նույն թվականի նոյեմբերի 24-ին, ԹԱՄԺ-ի ընդունած հմ. 3667 որոշման հիման վրա Թուրքիայի կառավարությունը ընդունեց հմ 2/12374 որոշումը՝ քոչվոր քրդերին նստակյաց ապրելակերպի անցնելու և նրանց հողակտորներ վաճառելու մասին[289]:

Քրդերի հանդեպ ցեղասպանական քաղաքականություն վարելու հետևանքով արևելյան վիլայեթներում նրանց թիվը տարեցտարի նվազում էր: 1935 և 1940 թթ. անցկացված մարդահամարի տվյալներով՝ էլյազիգ, էրզրում, Մուշ և Վան վիլայեթներում բնակչության թիվը նվազել էր 280 հազարով[290]:

1938 թվականի նոյեմբերի 10-ին մահացավ Մուսթաֆա Քեմալը: Նրա մահվամբ քրդական պրոբլեմը կարելի էր համարել լուծված: Քուրդ ժողովուրդը 27 ապստամբությունների ընթացքում կրեց մարդկային և նյութական հսկայական կորուստներ և զրկվեց իր վերնախավի մեծ մասից: Թուրքական իշխանությունները քրդաբնակ վիլայեթներին պահում էին աղքատ և հետամնաց վիճակում՝ այսպիսով խրախուսելով քրդերի արտագաղթը: Թուրքական պետությունից ստացված հարվածն այնքան աղետալի էր, որ քրդերին միայն 1984 թվականին կհաջողվեր նոր հակաթուրքական ապստամբություն բարձրացնել:

3.4. Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի և Ռեջեփ Թայյիփ Էրդողանի քրդական քաղաքականությունների համեմատական վերլուծություն

Թուրքիայի Հանրապետության ավելի քան մեկդարյա պատմության ընթացքում քրդական պրոբլեմն իր կարևորությամբ առաջնային է և ժամանակի հետ ավելի է բարդանում: Մ.Ք. Աթաթյուրքի և Ռ. Թ. Էրդողանի քրդական քաղաքականություններն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ՝ տարբերություններ, որոնք պայմանավորված են ներքին և արտաքին գործոններով:

Տարբերություններ. Քեմալը դեմ էր պանիսլամիստական և պանթյուրքիստական գաղափարախոսություններին՝ գտնելով, որ նրանց

[289] Տես *М. А. Гасратян.* Курды Турции в новейшее время, с. 198:

[290] Տես նույն տեղում, էջ 199:

իրագործման համար պետությունը չունի անհրաժեշտ ռեսուրսներ: Մինչդեռ էրդողանը, լինելով իսլամական գործիչ, որդեգրել է նաև նորօսմանականությունը և պանթյուրքիզմը՝ ստեղծելով իր պահանջատիրական նկրտումների համար լայն գործիքակազմ: Այդ էր պատճառը, որ եթե Քեմալն իր աշխարհիկ թուրքական ազգայնական գաղափարախոսության պատճառով բացահայտ բախման մեջ մտավ քրդերի մեծ մասի հետ՝ գործը հասցնելով ցեղասպանության, ապա էրդողանը շնորհիվ համիսլամականության կարողանում է իր դաշնակիցը դարձնել նրանց մի մասին և օգտագործել հարևան երկրների իշխանությունների դեմ:

Նմանություններ. անհաշտ պայքար քրդական ազգային-ազատագրական շարժման դեմ և ոչ մի քաղաքական զիջումներ: Նպատակը՝ ձուլել քրդերին և դարձնել Թուրքիան ամբողջովին թուրքական:

Քեմալը օգտագործում էր քրդերի միջև տարաձայնություններ և թշնամություն տարածելու պրակտիկան: Նույն կերպ է վարվում նաև էրդողանը: Քեմալի ժամանակ դա արտահայտվում էր հիմնականում սուննի և շիա քրդական ցեղերի թշնամանքով, իսկ էրդողանը, բացի վերը նշված կրոնական-ցեղային թշնամանքից, որը հիմնականում արտահայտվում է «Գյուղական պահապանների կորպուս» ինստիտուտի ստեղծմամբ դեռ 1980-ականների երկրորդ կեսից, լայնորեն օգտվում է քրդերի քաղաքական մասնատվածությունից և մասնավորապես կարողանում է Իրաքի քրդական ինքնավարությունում իշխող և իրենից բավական հզոր ուժ ներկայացնող Քրդստանի դեմոկրատական կուսակցությանը՝ Բարզանի տոհմի գլխավորությամբ տրամադրել «Քրդստանի բանվորական կուսակցության» և վերջինիս ստեղծած «Սիրիայի ժողովրդավարական ուժեր» *(SDS)* դաշինքի դեմ[291] (որտեղ գլխավոր կուսակցությունը «Ժողովրդավարական միություն» կուսակցությունն է *(PYD))*[292]: Երկուսն էլ փոխել են քրդաբնակ շրջանների ժողովրդագրական պատկերը՝ բնակեցնելով հազարավոր թյուրքական ժողովուրդներով, Քեմալը՝ Կովկասից և Բալկաններից գաղթածներով, իսկ էրդողանը՝ հիմնականում Չինաստանից գաղթած ույղուրներով և ղրղզներով:

Երկու գործիչներն էլ իրենց կառավարման սկզբնական շրջաններում սիրաշահել են քրդերին՝ ծառայեցնելով նրանց իրենց իշխա-

[291] Տես Սիրիայի ինքնապաշտպանական ուժերի պաշտոնական կայքէջը “SDF press center” (https://sdf-press.com/en):

[292] Տես «Ժողովրդավարական միություն» կուսակցության պաշտոնական կայքէջը “Democratic Unionist Party (PYD)” (https://pydrojava.org/english/):

նության ամրապնդման նպատակով, սակայն դրան հասնելուց հետո նրանց նկատմամբ որդեգրել են բռնաճնշումների քաղաքականություն: Էրդողանը կյանքի է կոչում Քեմալի հռչակած «Ազգային ուխտը», որով նախատեսվում էր Թուրքիային միացնել Սիրիայի ու Իրաքի հյուսիսային մարզերը: Եվ այդ նպատակով օգտագործում է քրդերին, ինչպես ժամանակին Քեմալը, ընդ որում՝ թե՛ դաշնակիցներին, թե՛ թշնամիներին, բայց այս անգամ որպես առիթ՝ այդ երկրները ներխուժելու համար:

Ինչպես տեսնում ենք, այս երկու քաղաքական գործիչների քրդական քաղաքականություններն ունեն ավելի շատ ընդհանրություններ, քան տարբերություններ, և թեև նրանք պատկանում են տարբեր ճամբարների, սակայն քրդերի դեպքում մոտեցումները գրեթե նույնն են: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցում է, որ թուրքական պետությունը, անկախ նրանից, թե ով է ղեկավարում, այն միշտ էլ լինելու է ազգայնական, այլատյաց և հարձակողական ինչպես իր ազգային փոքրամասնությունների, այնպես էլ՝ հարևան երկրների նկատմամբ:

Եզրակացություն

Մուսթաֆա Քեմալը, սկսելով ազգայնական շարժումը և ստեղծելով Թուրքիայի Հանրապետությունը՝ դրսևորեց իրեն որպես նպատակասլաց, խելացի դիվանագետ, քաղաքագետ և զինվորական, բայց միևնույն ժամանակ՝ որպես դաժան, ուխտադրուժ մի անձնավորությունը, որը չուներ ոչ մի բարոյական համակարգ և իր նպատակին հասնելու համար պատրաստ էր ամենաստոր քայլերի՝ ստախոսության, ամբոխավարության և ցեղասպանության:

Լինելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության և նրա հատուկ կազմակերպության՝ «Թեշքիլյաթը Մահսուսա»-ի անդամ՝ նա ծայրահեղ ազգայնական էր, սակայն ի տարբերություն կուսակցության առաջնորդների մեծ մասից՝ նա, լինելով կադրային զինվորական, արկածախնդիր չէր, ինչի շնորհիվ էլ պատերազմից հետո սկսված իշխանության համար պայքարում հաղթող դուրս եկավ:

Քեմալը 1919 թ. մայիսին սկսելով իր ազգայնական շարժումը, ուներ Օսմանյան կայսրության՝ թուրքական տիրապետության տակ մնացած տարածքներն ազգային փոքրամասնություններից մաքրելու հստակ ծրագիր, սակայն իր գլխավորած շարժման սկզբնական շրջանում, գտնվելով բավական ծանր իրադրությունում, ստիպված էր համագործակցել տարածաշրջանի ամենաազդեցիկ ուժի՝ քրդական վերնախավի հետ՝ հայերի տարածքային պահանջատիրությունից

ազատվելու, ինչպես նաև պատերազմից հետո քրդերին ինքնավարություն շնորհելու կեղծ խոստումներով: Սակայն նույն այդ ժամանակ նա արդեն ուներ քրդերին ջարդելու ու նրանց թուրքացնելու հստակ ծրագիր, և վարպետորեն թաքցնում էր իր ազգայնական ծրագրերը, և ընդհուպ մինչև Լոզանի պայմանագրի կնքումը՝ հանդես էր գալիս որպես իսլամական գործիչ՝ ձեռք բերելով մահմեդական ազգերի աջակցությունը, այդ թվում՝ նաև երկրից դուրս:

Քրդական տարբեր ուժերի հետ հարաբերություններում Քեմալը հմտորեն խաղում էր նրանց կրոնական, ազգային և ցեղային տարբերությունների վրա, ինչի շնորհիվ նրա կողքին կանգնեցին թե՛ սուննի և թե՛ շիա քրդերը՝ օգնելով նրան պարտության մատնել հայերին և հույներին: Սակայն միևնույն ժամանակ նա ծայրահեղ դաժանությամբ ճնշում էր իր դեմ ցանկացած ելույթ, ինչը շատերին հետ էր պահում նրա դեմ ելույթ ունենալուց: Քրդերն այդ դաժանության հետ բախվեցին Քոչգիրիի ապստամբության ժամանակ, և պետք է նշել, որ այն բավական արդյունավետ էր, քանի որ շատ քրդեր ուղղակի վախեցան միանալ ապստամբությանը:

Քեմալի համար Լոզանի պայմանագիրը ռազմական և դիվանագիտական հաղթանակ էր, որի ժամանակ նա կարողացավ ոչ միայն ստիպել Անտանտին ճանաչել Թուրքիայի Հանրապետությունը և իր իշխանությունը, այլև հասավ այն բանին, որ դաշնակիցները չճանաչեցին քրդերին և մյուս մահմեդականներին որպես ազգային փոքրամասնություն, ինչը հնարավորություն տվեց անպատիժ կերպով իրագործելու նրանց թուրքացման քաղաքականությունը: Լոզանում ձեռք բերված խաղաղությունը ազատություն տվեց նրան, և Քեմալը լիովին ձեռնամուխ եղավ երկրի բարեփոխմանը, որի հիմքը թուրքական ազգայնականությունն էր: Կանխատեսելիորեն առաջին հարվածը նա հասցրեց քրդերին, քանի որ վերջիններս հզոր ռազմական ուժ էին և կարող էին լրջորեն սպառնալ ինչպես թուրքական պետությանը, այնպես էլ իր իշխանությանը: Լոզանից հետո իրավական հիմք տվեց թուրքական ազգայնականությանը, ինչը հանգեցրեց շեյխ Սայիդի ապստամբությանը: Սակայն նա, լինելով Թեշքիլաթի նախկին սպա, իմանալով ծրագրվող ապստամբության մասին, կարողացավ ոչ միայն սադրելով նրա վաղաժամ պայթյունը, այլև օգտագործելով այն՝ ոչնչացնել քաղաքական ընդդիմությանը՝ ձեռք բերելով անսահմանափակ իշխանություն:

Մուսթաֆա Քեմալի համար իսկական փորձություն էր Հոյբուն համաքրդական կուսակցության ստեղծումը և Արարատի քրդական ապստամբությունը, քանի որ քրդերը համագործակցում էին ՀՅԴ-ի

հետ: Սակայն այս անգամ էլ նա կարողացավ լուծել այդ բարդ խնդիրը՝ շնորհիվ խելացի կերպով կառուցված դիվանագիտության՝ խնդրի մեջ ներքաշելով նաև ԽՍՀՄ-ին, առանց նրա հանդեպ որևէ պարտավորվածության: Ինչ վերաբերում է 1937–1938 թթ. Դերսիմի կոտորածներին, ապա պետք է նշել, որ հերթական անգամ նա խնդրին մոտեցավ համակողմանիորեն՝ լուծելով այն իրավական, ռազմական, տնտեսական դաշտերում, և որ ամենակարևորն է՝ այս անգամ ևս նա կարողացավ ստանալ հարևան երկրների աջակցությունը Սաադաբադի պայմանագրով՝ մահվանից առաջ Թուրքիայի համար փակելով քրդական պրոբլեմը:

Ստեղծելով նոր Թուրքիան՝ Մուսթաֆա Քեմալը նպատակ էր դրել վերջնականապես լուծելու ազգային հարցը. նոր Թուրքիան պետք է լիներ միատարր՝ զուտ թուրքական պետություն: Այն ստեղծում էին թուրքերը, թուրքերի համար և հանուն թուրքերի: Մնացած ազգերը դատապարտված էին կա՛մ թրքանալու կա՛մ էլ երկրից ընդմիշտ վտարվելու:

Պետք է նշել, որ Թուրքիայի ներկայիս նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանը, քաղաքական տեսանկյունից լինելով Քեմալի հակառակորդը, քրդական պրոբլեմում չնչին տարբերություններով կրկնում է Մ. Քեմալի որդեգրած քաղաքականությունը:

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

«Աշխատանքային տետրերը» լույս են ընծայվում որպես հավելված ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, որն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

«Рабочие тетради» издаются в качестве приложения к военно-научному журналу «Айкакан банак» НИУО МО РА, включенному в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка материалов частично или полностью допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

The «Working notebooks» is published as an appendix to the defense-academic journal «Haikakan banak» of the NDRU, MoD, RA which is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

Authors should give footnotes for the most important sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of a clear print quality.

Please explain used acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory academic examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ԱԶԱՍՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹ

Արամ Սայլիյան

ՀԱՐԴԱՎԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ՓՈԽԱՌԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1919 1938 ԹԹ.

Նախագծի ղեկավար՝
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ
գեներալ-մայոր *Կարեն Բաղդասարյան*

Գիտական խմբագիր՝
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
գնդապետ *Տիգրան Քոչարյան*

Գիրքը ենթակա չէ վաճառքի: Նախատեսված է ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտակրթական գործընթացներում օգտագործման համար:

Խմբագրումը՝ *Նելլա Բաղդասարյանի, Քրիստինե Փիրումանի*
Տեխնիկական խմբագրումը՝ *Վահե Խաչատրյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Մարգարիտա Ղուկասյանի, Լիլիա Պապիկյանի, Տիգրանուհի Տիրացույանի*
Շապիկի ձևավորումը՝ *Գևորգի Իսկանդարյանի*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փող. 56/6, հեռ. 28-54-25:
Պաշտոնական վեբկայք՝ http://haykakanbanak.am
Էլ. փոստ՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2025 թ.

Թողարկը՝ օֆսեթային: Չափաչափը՝ 60x84 1/16: Տեքստը՝ 120 լջ:
Պայմանական տպագրական 7,5 մամուլ: Տպաքանակը՝ 80:
Տառատեսակները՝ «Arial Unicode», «GHEA Grapalat», «MK Helv Armenian» և «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Գները՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է ԱՁ Հայկ Չիվթչյան տպարանում